

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՑՈՒՂ

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԻԶԵՎԱՆ-2010

ՆԱԽԱԲԱՆ

Միքելի՝ ուսանողներ

Հիմնադրման օրվանից ի վեր Երևանի պետական համալսարանի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:

ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուստարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ձկուն ձևերի և անհատական կրթական հետազդեթի իրականացման լայն հնարավորություն:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնություն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:

Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և

մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառնությունները՝ ձեռք համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:

Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեռք համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրությունների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեռք առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:

Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:

ՌԵԿՏՈՐ՝



Ա. ՄԻՄՈՆՅԱՆ

I ԲԱԺԻՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) հեռակա ուսուցման ձևով բակալավրի պատրաստման կրթական ծրագրերի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները:
- 1.2. Կարգը ներառում է հեռակա ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը:
- 1.3. Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը:

2. ԿՐԵԴԻՏԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրությունները

Համաեվրոպական ECTS¹ կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի Բարձրագույն կրթության համակարգում և գործում են ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրերում:

1. **Կարողությունը** գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր:
2. **Կրթական արդյունքն** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:
3. **Կրթական (ուսումնական) մոդուլը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:
4. **ECTS կրեդիտը** դասընթացն (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի

¹ Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ:

չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

5. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),
- կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

6. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

7. Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

8. ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառնությունները

2.2.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառնությունները երկուսն են՝

ա) կրեդիտների փոխանցում.

այս գործառնությամբ ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) կրեդիտների կուտակում.

այս գործառնությի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ²:

Նշված գործառնությունները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

2.2.2. Կրեդիտների փոխանցման գործառնության հիմնական հատկանիշներն են.

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,
- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

2.2.3. Կրեդիտների կուտակման գործառնության հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,

² Այս գործառնության ներդրումը ԵՊՀ-ում նախատեսվում է իրականացնել 2010/11 ուստարվանից:

- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսի նախապատվությունից,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման ձևով բակալավրի պատրաստման կրթական ծրագրերում կրեդիտային համակարգի գործառնությունները ներդրվում են մասնակիորեն, իսկ ամբողջական կիրարկումը նախատեսվում է 2010/11 ուստարվանից:

2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

1. ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի կրթական աստիճանում հեռակա ուսուցման համակարգի ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է միջինը 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի:
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման ծրագրի տևողությունը 5 տարի (10 կիսամյակ) է: Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, որից 4 շաբաթը հատկացվում է տեսական ուսուցման, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքի և կոնսուլտացիաների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար: Առանձին դեպքերում, մասնագիտական առանձնահատկություններից ելնելով (օրինակ, լեզվական մասնագիտությունների համար), տեսական ուսուցման կազմակերպումը կարող է իրականացվել նաև 12-շաբաթյա ժամանակահատվածում:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային առավելագույն բեռնվածությունը կազմում է 36 ժամ³:
6. Հեռակա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա առնվազն 20, առավելագույնը՝ 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, իսկ մեկ ուսումնական տարում՝ 48 կրեդիտ:
7. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

³ Չորս շաբաթյա տեսական ուսուցման դեպքում:

8. Բակլավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաժամալը 240 կրեդիտ է:

3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

4. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից:
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա: Կրեդիտների թիվը, ինչպես արդեն նշվել է⁴, կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն:
3. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որպեսզի դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
4. Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով:

⁴ Տե՛ս, մասնավորապես, դասընթացների կրեդիտատարության հաշվարկի սխեմաները 2007 թ. ԵՊՀ «Կրեդիտային համակարգով բակլավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթում:

5. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

5.1. Բակալավրի ծրագիր

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)⁵ պետք է կազմի առնվազն 9,00:
2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:
3. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 36 կրեդիտ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ 4 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 10 կրեդիտ՝ մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (ներառյալ 2 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների ցանկից) և առնվազն 20 կրեդիտ՝ պրակտիկայից և եզրափակիչ ատեստավորման ձևերից:
4. Մնացած առնվազն 174 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել տվյալ մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6.1. Համակարգի հիմնադրույթները

1. ԵՊՀ ԻՄ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

⁵ ՄՈԳ-ի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարրեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը, ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,

բ) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:

6.2. Գնահատման մեթոդաբանությունը

6.2.1. Բակլավարի կրթական ծրագիր

Բակլավարի կրթական ծրագրում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել եզրափակիչ գնահատումով առավելագույնը 4 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացը* քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ քննությունները պարտադիր կերպով անց են կացվում գրավոր, իսկ եզրափակիչ քննության ձևը՝ դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի դեկանը:

2. Եզրափակիչ գնահատումով դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը (Գարդ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 4 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության Գմաս. միավորը որոշվում է աղյուսակ 1-ում բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

Աղյուսակ 1.

Մասնակցության աստիճանը(%)	Հատկացվող միավորը
91-100	4
81-90	3
71-80	2
61-70	1
≤60	0

Օրինակ 1. Եթե 12 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 5 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝

$$\left(1 - \frac{5}{12}\right) \times 100\% = (1 - 0,42) \times 100\% = 58\%: \text{ Համաձայն աղյուսակի՝}$$

Գմաս. = 0 միավոր:

Օրինակ 2. Եթե 24 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 5 ժամ անհարգելի և 2 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝ $\left(1 - \frac{5}{24 - 2}\right) \times 100\% = (1 - 0,23) \times 100\% = 77\%: \text{ Համաձայն աղյուսակի՝ } \text{Գմաս.} = 2 \text{ միավոր:}$

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից (ΣԲընթ.), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից (Բեզր.), որը կարող է գնահատվել մինչև 8 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը /միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$\text{Գարդ.} = \text{Գմաս.} + \sum \text{Բընթ.} + \text{Բեզր.} :$$

Ըստ այդմ, եզրափակիչ գնահատումով դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի հա-

մար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով⁶).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	Գ _{մաս.}	Ք _{ընթ.1}	Ք _{ընթ.2}	Ք _{եզր.}	Գ _{արդ.}
Միավորը	4	4	4	8	20

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 3 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 3 և 4 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 6 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $G_{արդ.} = 3 + 3 + 4 + 6 = 16$:

3. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անց են կացվում հարցումների, գրավոր/ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրանքների (ռեֆերատ, էսսե և այլն) և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:

4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը ($G_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ $G_{մաս.}$, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 4 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն *աղյուսակ 1*-ում բերված սանդղակի,

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ ստուգումների արդյունքներից ($\Sigma U_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 8 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը /միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$G_{արդ.} = G_{մաս.} + \Sigma U_{ընթ.} :$$

Ըստ այդմ, *առանց եզրափակիչ գնահատման դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով⁷).

⁶ Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0,5 է:

⁷ Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլն առնվազն 0,5 է:

Գնահատման բաղադրամասը	Գմաս.	Սընթ1	Սընթ2	Գարդ.
Միավորը	4	8	8	20

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 5 և 7 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.} = 2 + 5 + 7 = 14$:

5. Գնահատման՝ վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն մասնագիտական կրթամասի բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: Հումանիտար ու սոցիալ-տնտեսագիտական և մաթեմատիկական ու բնագիտական կրթամասերի բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 20 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն): Պրակտիկաները գնահատվում են ստուգարքի ձևով:

6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում է ֆակուլտետը, և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական բաժին:

3. Ընթացիկ քննություններն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 5÷6-րդ և 11÷12-րդ շաբաթներում (դասերից դուրս):

4. Ընթացիկ ստուգումներն անց են կացվում 6-րդ և 12-րդ շաբաթներում՝ տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից (դասերից դուրս):

5. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 13÷16-րդ շաբաթներում:

6. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ:

7. Քննության գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

1. ԵՊՀ ԻՄ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 4.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»
0	«Չներկայացած»
-	«Ստուգված» /«Չստուգված»

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նըշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 (գերազ.)):

Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «Չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ*⁸ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի *միջին որակական գնահատականի (ՄՈԳ)* վրա:

6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԵՊՀ ԻՄ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*⁹, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

⁸ Վարկանիշային միավորի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:
⁹ Ակադեմիական տեղեկագրի օրինակները բակալավրի կրթական ծրագրերի համար կցված են սույն կարգին (հավելվածներ 1 և 2):

3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները¹⁰՝

- գումարային կրեդիտների քանակը,
- գնահատված կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

4. *Գումարային կրեդիտը* (*Կ*) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

5. *Գնահատված կրեդիտը* (*ԳԿ*) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$\mathbf{ԳԿ = \sum Կրեդիտ}_i :$$

6. *Վարկանիշային միավորը* (*ՎՄ*) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունաբար գնահատականների արտադրյալների գումար.

$$\mathbf{ՎՄ = \sum Կրեդիտ}_i \times \mathbf{Գ}_{արդ}_i ,$$

որտեղ $\mathbf{Գ}_{արդ}_i$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունաբար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝

$$\mathbf{ՎՄ = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238 \text{՝ } 300 \text{ հնարավորից} (5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20):$$

7. *Միջին որակական գնահատականը* (*ՄՈԳ*) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\mathbf{ՄՈԳ = \frac{ՎՄ}{ԳԿ} :}$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝

$$\mathbf{ՄՈԳ = \frac{238}{15} = 15.87 \text{՝ } 20 \text{ հնարավորից}:}$$

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունաբար* (հաշ-

¹⁰ Տե՛ս ակադեմիական տեղեկագրին կից օրինակը:

վարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

6.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ *առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա*:

2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝

ա) կիսամյակում ունի առնվազն 20 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն,

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների¹¹ կրեդիտները:

3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը, և ռեկտորատի կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):

4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:

5. Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանի հետ :

6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:

7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միննույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներին՝ վարկանիշային միավորներով:

7. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԴԿՆՈՒՄԸ

1. Դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս հաշվի չեն առնվում հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը կամ դիմումը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

¹¹ Տե՛ս՝ ս դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:

2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

3. Ընթացիկ (միջանկյալ) քննությունների կամ ստուգումների արդյունքների վերահանձնում, այդ թվում նաև ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, չի թույլատրվում:

4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը/ստուգումն ընկած ժամանակահատվածում (համապատասխանաբար, 2-րդ ընթացիկ քննությունը՝ մինչև եզրափակիչ քննությունը, իսկ 2-րդ ընթացիկ ստուգումը՝ մինչև քննաշրջանի սկիզբը)՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի և պարապոդ դասախոսի հետ:

5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:

6. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի գնահատման արդյունաբար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը, սակայն նրա արդյունաբար միավորը չի կարող գերազանցել անցողիկ 8-ը:

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 3 և 2 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունաբար միավորը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 3 + 2 = 7$, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է դասընթացը (2 ընթացիկ ստուգումներով գնահատվող ուսումնական նյութը) ամբողջությամբ, սակայն նրա արդյունաբար միավորն այս դեպքում չի կարող գերազանցել անցողիկ 8-ը՝ $Q_{արդ.} \leq 8$:

7. Եզրափակիչ գնահատումով դասընթացի գնահատման արդյունաբար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 8 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 2 միավոր, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 1 + 2 + 2 = 7$, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 8 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունաբար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 2 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա՝

$Q_{արդ.} = 7 + (5-2) = 10$:

8. Ուսումնառության 1÷3-րդ կիսամյակներում 2 դասընթաց չհանձնած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողին հնարավորություն է տրվում կրկնել դասընթացները հաջորդ աշնանային կիսամյակում՝ շարունակելով ուսումը: 4-րդ և 5-րդ կիսամյակներում որևէ դասընթաց չհանձնած ուսանողը ազատվում է համալսարանից:

9. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

10. Կրեդիտների կուտակման գործառնության շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

8. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔԸ

1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է ԵՊՀ դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ կայքէջում տեղադրված էլեկտրոնային տարբերակով), որը նաև կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց է:

2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) ընդհանուր տեղեկություն Համալսարանի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ներքուհական հիմնական կանոնները (հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

– ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ավարտական ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

– առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի գիտելիքներով ու կարողություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), անհրաժեշտ նախապայմանները, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները, դասավանդման լեզուն և այլն,

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

– նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի գեղջման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսանողներին հասանելի ուսումնական/լաբորատոր ենթակառուցվածքները և այլն:

9. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

9.1. Բակալավրի ծրագիր

1. Ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ և ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

2. Ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը ընտրվում և հաստատվում են ավարտական ուստարվա առաջին 2 շաբաթվա ընթացքում, իսկ աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում է ուսումնառության վերջին 6 շաբաթը, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) աշխատանքի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն:

բ) ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում Բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և այն ներկայացնել լրացուցիչ քննարկման: Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության:

գ) մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու կազմակերպում:

դ) ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և Բակալավրի աստիճանի շնորհում:

4. Ավարտական աշխատանքի պաշտպանությունը և մասնագիտական ամփոփիչ քննության անցկացումն իրականացվում են համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:

5. Ավարտական աշխատանքի պաշտպանության և մասնագիտական ամփոփիչ քննության գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:

6. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 5.

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	6
2	Ձևակերպման որակը	6
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
4	Արդիականությունը/նորույթը	2
	Ընդամենը՝	20

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից ավարտական աշխատանքի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 1*):

10. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

1. Այլ բուհերից ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

2. Այլ կրթական ծրագրից ԵՊՀ ԻՄ կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են, կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

3. Այլ բուհում ԵՊՀ ԻՄ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԵՊՀ ԻՄ-ի և ընդունող բուհի միջև:

4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ԵՊՀ ԻՄ-ն նշանակում է *ECTS-ի բուհական համակարգող*, որի գործունեության հիմնական ոլորտները և պարտականությունների շրջանակները կանոնակարգվում են առանձին կարգով:

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

2. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ֆակուլտետի դասախոսական ներուժի համադրումից:

3. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:

4. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ, օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

12. ՈւՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խըստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Համալսարանի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԵՊՀ ԻՄ-ում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

13. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2010/11 ուստարվանից՝ ԵՊՀ ԻՄ Բակալավրի հեռակա ուսուցման ձևով կրթական ծրագրերում ընդգրկված 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆ

Ավարտական աշխատանքի պաշտպանության
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ուսանող՝

Ազգանուն անուն հայրանուն _____

Մասնագիտություն, խումբ _____

Ավարտական աշխատանքի թեմա _____

Ավարտական աշխատանքի
ղեկավար _____

(ազգանուն, անուն, գիտ. աստ., կոչում)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝

Ազգանուն անուն _____

Գիտական աստիճան, կոչում _____

Պաշտոնը _____

Ավարտական աշխատանքի գնահատման արդյունքներն ըստ
սահմանված որակական չափանիշների

Թիվ	Հանձնաժողովի անդամներ (ազգանուն, անուն)	Գնահատման միավորն ըստ սահմանված որակական չափանիշների				Մտորագրու- թյուն
		1	2	3	4	
1						
2						
3						
4						
5						
6						
7						
Գնահատման միջին միավորը						

Թիվ	Որակական չափանիշը	Գնահատման միավորի սահ- մանված չափա- քանակը	Գնահատման միջին միավորը	Գումարային միավորը	Գնահա- տականը
1	Ներկայացման որակը	6			
2	Ձևակերպման որակը	6			
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6			
4	Արդիականությունը /նորույթը	2			

Գնահատականը ըստ գումարային միավորի

Գումարային միավորը	0...7	8...12	13...17	18...20
Գնահատականը	<i>«անբավարար»</i>	<i>«բավարար»</i>	<i>«լավ»</i>	<i>«գերազանց»</i>

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն որոշում է՝

1) Բակալավրի որակավորման աստիճան (ղիպլում) շնորհելու վերաբերյալ

Շնորհել / Չշնորհել (լրացնել)

Հանձնաժողովի նախագահ _____

ստորագրություն

« » _____ 200__ թ.

II ԲԱԺԻՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բակալավրի կրթական ծրագիրը բաղկացած է հետևյալ կրթամասերից՝ **ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական դասընթացներ**, ինչպես նաև կրթական այլ մոդուլներից և եզրափակիչ ատեստավորումից: Առաջին երկուսը ծառայում են բակալավրի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը, երրորդ կրթամասը կազմում է բակալավրի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի մասնագիտացված ուսուցման մասն է: Ծրագրի ընդհանուր կառուցվածքը բերված է ստորև.

«Պատմություն» մասնագիտություն

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	32	10
պարտադիր	28	8
կամրնորական	4	2
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական	10	5
պարտադիր	8	4
կամրնորական	2	1
Ընդհանուր և հատուկ մասնագիտական	172	41
պարտադիր	157	35
կամրնորական	11	4
կուրսային աշխատանքներ	4	2
Կրթական այլ մոդուլներ	26	5
ԸՆԴԱՄԵՆԸ	240	61

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	32	10
պարտադիր	28	8
կամրնորական	4	2
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական	10	5
պարտադիր	8	4
կամրնորական	2	1
Ընդհանուր և հատուկ մասնագիտական	178	37
պարտադիր	167	33
կամրնորական	7	2
կուրսային աշխատանքներ	4	2
Կրթական այլ մոդուլներ	20	3
ԸՆԴԱՄԵՆԸ	240	55

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՍՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տրն-տեսագիտական	36	12
<i>պարտադիր</i>	<i>32</i>	<i>10</i>
<i>կամրնտրական</i>	<i>4</i>	<i>2</i>
Ընդհանուր մաթեմատիկական և բնագի-տական	10	5
<i>պարտադիր</i>	<i>8</i>	<i>4</i>
<i>կամրնտրական</i>	<i>2</i>	<i>1</i>
Ընդհանուր և հատուկ մասնագիտական	172	37
<i>պարտադիր</i>	<i>164</i>	<i>34</i>
<i>կամրնտրական</i>	<i>4</i>	<i>1</i>
<i>կուրսային աշխատանքներ</i>	<i>4</i>	<i>2</i>
Կրթական այլ մոդուլներ	22	4
ԸՆԴԱՄԵՆԸ	240	58

«Տնտեսագիտության տեսություն» մասնագիտություն

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՍՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տրն-տեսագիտական	36	12
<i>պարտադիր</i>	<i>32</i>	<i>10</i>
<i>կամրնտրական</i>	<i>4</i>	<i>2</i>
Ընդհանուր մաթեմատիկական և բնագի-տական	10	5
<i>պարտադիր</i>	<i>10</i>	<i>5</i>
Ընդհանուր և հատուկ մասնագիտական	171	39
<i>պարտադիր</i>	<i>167</i>	<i>37</i>
<i>կուրսային աշխատանքներ</i>	<i>4</i>	<i>2</i>
Կրթական այլ մոդուլներ	23	4
ԸՆԴԱՄԵՆԸ	240	60

«Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտություն

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՍՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տրն-տեսագիտական	36	12
<i>պարտադիր</i>	<i>32</i>	<i>10</i>
<i>կամրնտրական</i>	<i>4</i>	<i>2</i>
Ընդհանուր մաթեմատիկական և բնագի-տական	6	3
<i>պարտադիր</i>	<i>6</i>	<i>3</i>
Ընդհանուր և հատուկ մասնագիտական	180	41
<i>պարտադիր</i>	<i>162</i>	<i>36</i>
<i>կամրնտրական</i>	<i>14</i>	<i>3</i>
<i>կուրսային աշխատանքներ</i>	<i>4</i>	<i>2</i>

Կրթական այլ մոդուլներ	16	2
ԸՆԴԱՄԵՆԸ	240	58

«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտություն

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տըն-տեսագիտական	36	12
պարտադիր	32	10
կամրնտրական	4	2
Ընդհանուր մաթեմատիկական և բնագի-տական	6	3
պարտադիր	6	3
Ընդհանուր և հատուկ մասնագիտական	178	37
պարտադիր	174	35
կուրսային աշխատանքներ	4	2
Կրթական այլ մոդուլներ	20	4
ԸՆԴԱՄԵՆԸ	240	56

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) կրթամասի աշխատածավալը 36 կրեդիտ է: Այն ներառում է կրթական մոդուլ-ների երկու փաթեթ՝ պարտադիր և կամրնտրական: Դրանց առկայությունը ծրա-գրում նպատակաուղղված է ուսանողների մոտ համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը (լեզվական, հաղորդակցման և այլ ունակությունների զարգացմանը):

ՀՍ պարտադիր դասընթացներ

ՀՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովան-դակային կազմով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դաս-ընթացները

«Պատմություն» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ(դ/գ/ս/լ) ¹²	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականու-թյուն-1	2	12 (3/9/0/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-1	4	24 (0/24/0/0)	1	ստուգարք
Անգլերեն լեզու-1	4	24 (0/24/0/0)	1	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-1				

¹² Այսուհետև՝ դ – դասախոսություն, գ – գործնական, ս – սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:

Հայոց լեզու և գրականություն-2	2	12 (3/9/0/0)	2	հանրագ.
Ռուսաց լեզու-2	4	24 (0/24/0/0)	2	ստուգարք
Անգլերեն լեզու-2	4	24 (0/24/0/0)	2	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-2				
Ռուսաց լեզու-3	4	24 (0/24/0/0)	3	հանրագ.
Անգլերեն լեզու-3				
Ֆրանսերեն լեզու-3				
Փիլիսոփայության հիմունքներ	4	24 (18/0/6/0)	4	հանրագ.
Ֆիզդաստիարակություն ¹³	–	–	2, 4	–

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ(դ/գ/ս/լ) ¹⁴	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ռուսաց լեզու-1	4	24 (0/24/0/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	12 (9/0/3/0)	1	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-1 ¹⁵	4	24 (0/24/0/0)	1	ստուգարք
Անգլերեն լեզու-1				
Ռուսաց լեզու-2	4	24 (0/24/0/0)	2	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	12 (9/0/3/0)	2	հանրագ.
Ֆրանսերեն լեզու-2	4	24 (0/24/0/0)	2	ստուգարք
Անգլերեն լեզու-2				
Ռուսաց լեզու-3	4	24 (0/24/0/0)	3	հանրագ.
Ֆրանսերեն լեզու-3				
Անգլերեն լեզու-3				
Փիլիսոփայության հիմունքներ	4	24 (18/0/6/0)	3	հանրագ.
Ֆիզդաստիարակություն ¹⁶	–	–	2, 4	ստուգարք

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ(դ/գ/ս/լ) ¹⁷	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականություն-1	2	12 (3/9/0/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-1	4	24 (0/24/0/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	12 (9/0/3/0)	1	ստուգարք

¹³ Իրականացվում է կամավոր՝ սպորտային կատարելագործման խմբակներում:
¹⁴ Այսուհետև՝ դ – դասախոսություն, գ – գործնական, ս – սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:
¹⁵ Անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն:
¹⁶ Իրականացվում է կամավոր՝ սպորտային կատարելագործման խմբակներում:
¹⁷ Այսուհետև՝ դ – դասախոսություն, գ – գործնական, ս – սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:

Անգլերեն լեզու-1	4	24 (0/24/0/0)	1	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-1				
Հայոց լեզու և գրականություն-2	2	12 (3/9//00)	2	հանրագ.
Ռուսաց լեզու-2	4	24 (0/24/0/0)	2	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	12 (9/0/3/0/0)	2	հանրագ.
Անգլերեն լեզու-2	4	24 (0/24/0/0)	2	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-2				
Ռուսաց լեզու-3	4	24 (0/24/0/0)	3	հանրագ.
Անգլերեն լեզու-3				
Ֆրանսերեն լեզու-3				
Փիլիսոփայության հիմունքներ	4	24 (18/0/6/0)	3	հանրագ.
Ֆիզդաստիարակություն ¹⁸	–	–	2, 4	ստուգարք

«Տնտեսագիտության տեսություն» մասնագիտություն

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ(ր/գ/ս/լ) ¹⁹	Գիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականություն-1	2	12 (3/9/0/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-1	4	24 (0/24/0/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր -1	2	12 (9/0/3/0)	1	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-1	4	24 (0/24/0/0)	1	ստուգարք
Անգլերեն լեզու-1				
Հայոց լեզու և գրականություն-2	2	12 (3/9/0/0)	2	հանրագ.
Ռուսաց լեզու-2	4	24 (0/24/0/0)	2	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր -2	2	12 (9/0/3/0)	2	հանրագ.
Ֆրանսերեն լեզու-2	4	24 (0/24/0/0)	2	ստուգարք
Անգլերեն լեզու-2				
Ռուսաց լեզու-3	4	24 (0/24/0/0)	3	հանրագ.
Ֆրանսերեն լեզու-3				
Անգլերեն լեզու-3				
Փիլիսոփայության հիմունքներ	4	24 (18/0/6/0)	4	հանրագ.
Ֆիզդաստիարակություն ²⁰	–	–	2, 4	ստուգարք

Թեմա 1՝ Տնտեսագիտության առարկան և մեթոդները: **Թեմա 2՝** Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 3՝** Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: **Թեմա 4՝** Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: **Թեմա 5՝** Սպառողի վարքի տեսություն: **Թեմա 6՝** Արտադրության ծախսերը: **Թեմա 7՝** Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 8՝** Ձեռնարկությունների և կազմակերպությունների տիպերը և տեսակները: **Թեմա 9՝** Ռեսուրսների գների ձևավորումը: **Թեմա 10՝** Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 11՝** Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: Մակրոտնտեսական վերլուծություն: **Թեմա 12՝** Փողը և բանկային համակարգը. դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 13՝** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 14՝** Տնտեսական աճ: **Թեմա 15՝** Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 16՝** Միջազգային տնտեսական գործակցություն: **Թեմա 17՝** Անցումային տնտեսության հիմունքներ: **Թեմա 18՝** Կոռուպցիայի տնտեսական պատճառները և դրա դեմ պայքարի մեթոդները անցումային տնտեսությունում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

0301/B03. «ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակները՝ 3-րդ (4-րդ), ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին,
2. պատկերացում կունենա քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին,
3. կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ունակություններ,
4. կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը:

Թեմա 2՝ Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: ***Թեմա 4՝*** Հասարակության քաղաքական համակարգը: ***Թեմա 5՝*** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: ***Թեմա 6՝*** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: ***Թեմա 7՝*** Ընտրություններ և ընտրական համակարգեր: ***Թեմա 8՝*** Քաղաքական գաղափարախոսություններ: ***Թեմա 9՝*** Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

0301/B04. «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 3-րդ (4-րդ), ստուգարք

Նպատակը.

Ավորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը,
2. կիմանա օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները,
3. կիմանա կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները,
4. կունենա գիտելիքները գործնականում կիրառելու ունակություններ և հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասարակություն և պետություն: **Թեմա 2՝** Իրավունք: **Թեմա 3՝** Իրավական կարգավորման կառուցակարգը և իրավունքի կենսագործումը: **Թեմա 4՝** Իրավունքի ձևերը: **Թեմա 5՝** Իրավունքի համակարգը: **Թեմա 6՝** Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: **Թեմա 7՝** Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: **Թեմա 8-9՝** Սահմանադրական իրավունք: **Թեմա 10՝** Դատական իշխանություն և դատական համակարգ: **Թեմա 11-16՝** Քաղաքացիական իրավունք: **Թեմա 17՝** Աշխատանքային իրավունք: **Թեմա 18՝** Ընտանեկան իրավունք: **Թեմա 19՝** Էկոլոգիական իրավունք: **Թեմա 20՝** Քրեական իրավունք: **Թեմա 21-23՝** Դատավարական իրավունք: **Թեմա 24՝** Միջազգային իրավունք:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամադրված հարցաշարից), որոնցից առնվազն երկուսին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

0202/ՅՕ1. «ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 2-րդ (3-րդ) ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային և հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. համապարփակ գիտելիքներ կունենա գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին,
2. ծանոթ կլինի մշակույթի կառուցվածքին, բաղադրիչներին, տիպաբանությանը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափություններին,
3. ընդհանուր գիտելիքներ կունենա համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2՝** Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: **Թեմա 3՝** Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: **Թեմա 4՝** Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները՝ մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: **Թեմա 5՝** Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0301/B06. «ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 2-րդ (3-րդ), ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնաձիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնաձիսական համակարգը,
2. կհասկանա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները,
3. կկարողանա կատարել տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2՝** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3՝** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4՝** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5՝** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6՝** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7՝** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8՝** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դա-

րերում: **Թեմա 9՝** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10՝** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բնավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

3.1. Պարտադիր դասընթացներ

0101/B02. «ՀԱՄԱԿԱՐԳՉԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (3 ժամ դասախոսություն, 9 ժամ լաբորատոր պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները.
2. կիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնությունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները.
3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար պայդների պատրաստում և այլն):

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: **Թեմա 2՝** Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: **Թեմա 3՝** Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: **Թեմա 4՝** Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:

0001/B05. «ՔԱՂԱՔԱՅԻՄԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (9 ժամ դասախոսություն, 3 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ (6-րդ), ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ստեղծված արտակարգ իրավիճակներում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: **Թեմա 2՝** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: **Թեմա 3՝** Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: **Թեմա 4՝** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: **Թեմա 5՝** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: **Թեմա 6՝** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: **Թեմա 7՝** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

0001/B06. «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (9 ժամ դասախոսություն, 3 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ (6-րդ), ստուգարք

Նպատակը.

Դասընթացների նպատակն է ուսանողներին սովորեցնել էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահարում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) մինչքժշկական օգնության ցուցաբերում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերել առաջին և մինչքժշկական օգնություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Առաջին բուժօգնությունն ու մինչքժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 2՝** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: **Թեմա 3՝** Սուր հիվանդություններ և թունավորումներ: **Թեմա 4՝** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 5՝** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

0103/B01. «ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին (2-րդ), ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհմանա էկոլոգիա գիտության հիմնական տեսական մոտեցումները, օրենքները, հարցերը,
2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հարցերի լուծման ոլորտում,
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: **Թեմա 2՝** Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: **Թեմա 3՝** Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: **Թեմա 4՝** Էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: **Թեմա 5՝** Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: **Թեմա 6՝** Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: **Թեմա 7՝** Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: **Թեմա 8՝** Պոպուլյացիոն էկոլոգիա: **Թեմա 9՝** Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

3.2. Կամընտրական դասընթացներ

0101/B01. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մտածողության զարգացում, վերացական մտածողության ձևավորում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի հանրակարթական և հանրամատչելի բնույթի մաթեմատիկական որոշ հարցերի,
2. կկարողանա մոդելավորել առօրեական բնույթի որոշ խնդիրներ և լուծել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բազմությունների տեսության տարրերը: **Թեմա 2՝** Մատրիցներ և որոշիչներ: **Թեմա 3՝** Մաթեմատիկական ինդուկցիա: **Թեմա 4՝** Կոորդինատների մեթոդը: **Թեմա 5՝** Ոչ էվկլիդեսյան երկրաչափություն: **Թեմա 6՝** Մաթեմատիկական մոդելավորում: **Թեմա 7՝** Աքսիոմային մոտեցումը մաթեմատիկայում: **Թեմա 8՝** Հավանականությունների տեսության տարրերը: **Թեմա 9՝** Մաթեմատիկական վիճակագրության տարրերը: **Թեմա 10՝** Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզուն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցազրույցի ձևով:

0102/B01. «ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐ» (2կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության հիմնական սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները,
2. կհասկանա բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները,
3. կկարողանա կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բնագիտության առարկան: Օրինաչափությունները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2՝** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: **Թեմա 3՝** Աշխարհի մեխանիստական պատկերը: **Թեմա 4՝** Դասական թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի կոնցեպցիաները: **Թեմա 5՝** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: **Թեմա 6՝** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: **Թեմա 7՝** Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: **Թեմա 8՝** Անոթոշությունը աշխարհում: Անոթոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 9՝** Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 10՝** Աստղերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 11՝** Մոլորակների կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 12՝** Տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 13՝** Քվանտային կոսմոլոգիա: Անթրոպային սկզբունք: **Թեմա 14՝** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 15՝** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

4.1. «Պատմություն» մասնագիտություն

0301/ՅՕ9. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (7 կրեդիտ)

Շաբաթական՝ 10,5 ժամ (22 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համակողմանի և ամբողջական գիտելիքներ հայ ժողովրդի հին և միջին շրջանի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության, ինչպես նաև Հայաստանի պատմական աշխարհագրության՝ Հայկական լեռնաշխարհի, Էթնիկ հիմնահարցերի, վարչական բաժանումների, քաղաքների պատկերի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կբերի հին և միջին դարերի շրջանների վերաբերյալ.
2. կայուն գիտելիքներ կունենա պատմական Հայաստանի պատմական աշխարհագրությունից.
3. կկարողանա վերլուծաբար մոտենալ հայոց հին և միջին շրջանի պատմությանը և տիրապետել Հայաստանի պատմական աշխարհագրությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական դասախոսություն և հնագույն պատմություն: **Թեմա 2՝** Հայկյանների և Վանյան թագավորություններ: Հայաստանի Երվանդական թագավորություն: **Թեմա 3՝** Հայաստանն Առաջավոր Ասիայի հզոր տերություն: **Թեմա 4՝** Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը: **Թեմա 5՝** Քրիստոնեության հռչակումը Հայաստանի պետական կրոն: **Թեմա 6՝** Մեծ Հայքի թագավորությունը 4-5-րդ դդ.: **Թեմա 7՝** Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը: **Թեմա 8՝** Հայաստանը 5-9-րդ դդ.: **Թեմա 9՝** Հայ ազատագրական պայքարը: **Թեմա 10՝** Ներածական դասախոսություն: Հայկական լեռնաշխարհ (լեռնագրություն, ջրագրություն, ժողովրդագրություն, բուսական և կենդանական աշխարհ, հանքային հարստություններ): **Թեմա 11՝** Հայկական լեռնաշխարհի ժողովրդագրության պատմություն: **Թեմա 12՝** Հայկական պետականությունը հնագույն և հին շրջանում: **Թեմա 13՝** Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի: **Թեմա 14՝** Հայկական պետականությունը վաղ միջնադարում, Հայաստանը Բյուզանդական կայսրության, Սասանյան Պարսկաստանի և Արաբական խալիֆայության վարչական համակարգում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 1 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B17. «ՆԱԽՆԱԴԱՐՑԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (14 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատկերացում ձևավորել նախնադարյան հասարակության զարգացման հիմնական էտապների մասին, գիտելիքներ տալ հոմինիդների ընտանիքի զարգացման և ժամանակակից մարդու ձևավորման գործընթացի մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտրոպոգենեզի հիմնական էտապները, գիտելիքներ կունենա հոմինիդների բրածո ներկայացուցիչների, նրանց տարածման տիրույթների և աշխատանքային գործունեության մասին,
2. պատկերացում կունենա սոցիո -, կուլտուրո -, պոլիտեգենեզի հիմնական էտապների զարգացման տրամաբանության մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մարդու ծագումը: «Ունակ մարդու» և «գետնաքարե գործիքների մասին» եղած վարկածները: Պիտեկանտրոպի գտածոները: Միանտրոպ, Հեյդելբերգյան մարդ և այլն: Նեանդերթալցիները և նրանց տարածումը «հին աշխարհում»: **Թեմա 2՝** Նախահամայնք: Մտածողության և խոսքի ծագման խնդիրը: Գաղափարական պատկերացումների սաղմերի հանդես գալը նախահամայնքում: **Թեմա 3՝** Մարդագոյացման պրոցեսի ավարտը և համայնա-տոհմական կարգերի առաջացումը: **Թեմա 4՝** Վաղ տոհմական համայնքը: Մեռա-տարիքային խմբերը վաղ նախադարյան համայնքում, ինիցիացիա: Ամուսնություն և ընտանիք: Իշխանության կազմակերպումը: Հոգևոր մշակույթը: **Թեմա 5՝** Ուշ տոհմական համայնքը: Տոհմերի տրոհումը ներտոհմական խմբերի, դրանց համախմբումը ցեղերի մեջ: Իշխանության կազմակերպումը: Հոգևոր մշակույթ: **Թեմա 6՝** Դասակարգային հասարակության հաստատությունների հանդես գալը: Ստրկությունը և նրա ձևերը: Մենամուսնական ընտանիք: Դրացիական համայնքի ձևավորումը: Հոգևոր մշակույթի զարգացումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B10. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել միջնադարում հայոց պետականության գլխավոր փուլերի, հայոց բանակի ու հայ զինվորականության դերի, հայ եկեղեցու և պետության փոխհարաբերությունների, զարգացած ավատատիրության և ուշ միջնադարյան դարաշրջանների առանձնահատկությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. հստակ պատկերացում կունենա հայոց միջնադարյան պետականության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին.
2. կպատկերացնի հայ իրականության մեջ զարգացած ավատատիրական հարաբերությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները.
3. ձեռք կբերի պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայաստանի անկախության վերականգնումը, Բագրատունիների թագավորության հռչակումը և ամրապնդումը: **Թեմա 2՝** Բագրատունիների թագավորությունը խաղաղ զարգացման և տնտեսական վերելքի ժամանակաշրջանում: **Թեմա 3՝** Բագրատունիների թագավորության թուլացումն ու անկումը: **Թեմա 4՝** Հասարակական-տնտեսական հարաբերությունները և պետական կարգը 9-11-րդ դարերում, թոնդրակյան շարժումը և գյուղացիական ելույթները Հայաստանում 9-11-րդ դարերում: **Թեմա 5՝** Հայ ժողովրդի պայքարը սելջուկ-թուրքերի դեմ, Ջաքարյանների իշխանությունը, տնտեսական կյանքը, հայկական իշխանական տները 13-րդ դ.-14-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 6՝** Կիլիկյան Հայաստանը 11-14-րդ դարերում: **Թեմա 7՝** Հայկական մշակույթը 9-րդ դարում-14-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 8՝** Հայաստանը 14-րդ դարի երկրորդ կեսին-17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 9՝** Հայկական մշակույթը 14-րդ դարի երկրորդ կեսին-17-րդ դարի առաջին կեսին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0301/B16. «ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տեղեկություններ հաղորդել Հին արևելյան քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման միտումների մասին: Տալ գիտելիքներ այդ քաղաքակրթությունների տիպաբանության, հին արևելյան հասարակությունների կառուցվածքի, գաղափարախոսության, կրոնի և մշակույթի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հին արևելյան խոշոր քաղաքակրթությունների տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի առանձնահատկությունները,
2. կկարողանա նրանց պատմության կոնկրետ փաստերն ու իրողությունները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների դիտանկյունից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հին Արևելք հասկացությունը: **Թեմա 2՝** Հին Եգիպտոս: **Թեմա 3՝** Հին Միջագետք (Շումեր, Աքադ, Բաբելոն): **Թեմա 4՝** Հին Ասորեստան: **Թեմա 5՝** Պաղեստին: **Թեմա 6՝** Փյունիկիա: **Թեմա 7՝** Խեթական թագավորություն: **Թեմա 6՝** Հին Հնդկաստան: **Թեմա 9՝** Հին Չինաստան:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,2, 3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/B27. «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ մշակույթը մինչև 5-րդ դար: Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծումը. գրականության զարգացման հիմնական ուղղությունները: **Թեմա 2՝** Պատմագրություն: **Թեմա 3՝** Հայ միջնադարյան գրականությունը: **Թեմա 4՝** Հայ նոր գրականությունը: **Թեմա 5՝** Հայ նորագույն գրականությունը: **Թեմա 6՝** Արդի հայ գրականությունը և նրա զարգացման միտումները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 1 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B18. «ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՎ ՀՈՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (27 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պրակտիկ և տեսական գիտելիքներ անտիկ քաղաքակրթությունների առանձնահատկությունների մասին: Ներկայացնել քաղաք-պետությունների(պոլիսի) ձևավորումը, դրանց առաջացման առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հին հունական քաղաքակրթության կոնկրետ պատմության փաստերը, իրողությունները և կկարողանա դրանք շարադրել իբրև միասնական պատմություն՝ միկենյան կենտրոններից մինչև դեմոկրատական պոլիս.

- կկարողանա ճշգրիտ որոշել քաղաքացիական հասարակության հիմնարար չափումները և տեսնել դրա հեռանկարները միջնադարյան պատմության մեջ.
- կկարողանա հասկանալ անտիկ մշակույթի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը համաշխարհային պատմության վրա:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտիկ ժամանակաշրջանի հասկացությունը: Հին Հունաստանի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրությունը: **Թեմա 2՝** Էգեյան կամ Կրետո-միկենյան ժամանակաշրջան /Ք.ա. 3-2-րդ հազարամյակ/: **Թեմա 3՝** Հունաստանը նախապոլիսյան դարաշրջանում /Ք.ա. 11-9-րդ դդ./: **Թեմա 4՝** Հունաստանը արխայիկ դարաշրջանում /Ք.ա. 8-6-րդ դդ./: **Թեմա 5՝** Դասական Հունաստանը /Ք.ա. 5-4-րդ դդ./: **Թեմա 6՝** Հելլենիզմի շրջան /Ք.ա. 4-1-ին դդ./: **Թեմա 7՝** Հին Հռոմի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրությունը: **Թեմա 8՝** Հռոմեական Հանրապետություն: **Թեմա 9՝** Հռոմեական Հանրապետության անկումը: **Թեմա 10՝** Կայսրության առաջացումը Հռոմում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,2,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0301/B19. «ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»-1 (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (14 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելիքների համակարգ միջնադարի վերաբերյալ: Ցույց տալ անցումը դեպի միջնադար, ձևավորել միջնադարի հիմնարար առանձնահատկությունները՝ ֆեոդալական հասարակության գաղափարաբանությունը, մշակույթը: Ներկայացնել եվրոպական միջնադարյան հասարակությունների պատմությունը և տիպաբանությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կունենա ճշգրիտ գիտելիքներ միջնադարյան հասարակության կառուցվածքի վերաբերյալ, կկարողանա համեմատել Եվրոպայի, Մերձավոր Արևելքի ֆեոդալական հասարակարգի զարգացման միտումները.
- կկարողանա բացահայտել միջնադարյան քաղաքակրթության բովանդակությունը.

- կկարողանա հասկանալ հասարակական կյանքի վրա համաշխարհային կրոնների՝ քրիստոնեության, իսլամի, բուդդայականության ազդեցությունը,
- կկարողանա հասկանալ ժամանակակից ազգությունների և պետությունների ծագումն ու զարգացման տենդենցները.
- կհասկանա հասարակական, մշակութային, քաղաքական ոլորտներում դեր ունեցած բարեփոխական–ռեֆորմիստական և հեղափոխական իրողությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջին դարերի պարբերացումը և աղբյուրները: **Թեմա 2՝** Հռոմեական ստրկատիրական հասարակարգի ճգնաժամն ու փլուզումը: **Թեմա 3՝** Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը և բարբարոսական թագավորությունների կազմավորումը: **Թեմա 4՝** Մերովինգների ֆրանկական պետությունը: **Թեմա 5՝** Կարոլինգների ֆրանկական միապետությունը: **Թեմա 6՝** Բյուզանդիան 6-11-րդ դդ.: **Թեմա 7՝** Ֆեոդալիզմը Արևմտյան Եվրոպայում 9-11-րդ դդ.: **Թեմա 8՝** Խաչակրաց արշավանքները: **Թեմա 9՝** Ֆրանսիան 11-15-րդ դդ.: **Թեմա 10՝** Անգլիան 11-14-րդ դդ.: **Թեմա 11՝** Բյուզանդիան 14-15-րդ դդ.:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,2,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0301/B11. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել 17-րդ դարի կեսերից մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ընդգրկող ժամանակաշրջանի հայոց պատմության առանձնահատկությունների, հայ ազգային-ազատագրական պայքարի, ինչպես նաև Հայաստանի հասարակական-տնտեսական ու մշակութային կյանքի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կրերի ազատագրական պայքարի, Հայկական հարցի առաջացման և բովանդակության, Հայաստանում ռուսական տիրապետություն հաստատելու վերաբերյալ.

2. ձեռք կբերի պատմական փաստերը համադրելու և ինքնուրույն վերլուծության ենթարկելու որոշակի հմտություն, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական հարցի առաջացումը, բովանդակությունը: **Թեմա 2՝** Ազատագրական պայքարը (17-րդ դարի 2-րդ կես-18-րդ դարի առաջին կես): **Թեմա 3՝** Հայ ազատագրական շարժումները (18-րդ դարի երկրորդ կեսին): **Թեմա 4՝** Հայաստանի սոցիալ- տնտեսական կացությունը (17-րդ դարի կես-19-րդ դարի սկիզբ): **Թեմա 5՝** Ռուսաստանի տիրապետությունը Արևելյան Հայաստանում: **Թեմա 6՝** Հայաստանը 1830-60-ական թթ.: **Թեմա 7՝** Հայ հասարակական-քաղաքական միտքը և ազատագրական շարժումները: **Թեմա 8՝** Հայկական մշակույթը (17-րդ դարի երկրորդ կես-19-րդ դարի առաջին կես): **Թեմա 9՝** Հայկական գաղթավայրերը (17-րդ դարի երկրորդ կես-19-րդ դարի առաջին կես):

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք (փոքրածավալ գրավոր): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 1 է:

0301/B30. «ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (23 ժամ դասախոսություն, 7 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել բազային գիտելիքներ հնագիտության դիսցիպլինի տեսության, տերմինաբանության, կարևորագույն հնագիտական մշակույթների և քաղաքակրթությունների ու մշակույթի հաջորդական զարգացման փուլերի և առանձնահատկությունների մասին: Տալ գիտելիքներ Հայաստանի հնագիտության կարևորագույն հնագիտական մշակույթների, փուլաբաժանումների և այլնի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի հնագիտության տեսության խնդրացանկը,
2. կընկալի հնագիտական պեղումների, պարբերացման և պատմա-մշակութային գործընթացների տրամաբանությունը,
3. կկարողանա կատարել վերլուծական բնույթի պատմա-հնագիտական աշխատանք, պատրաստ կլինի գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հնագիտություն առարկան, խնդիրները, տեղը պատմական գիտությունների համակարգում: Մշակույթի նյութական մնացորդները՝ որպես պատականորեն ձևավորված համակարգ: **Թեմա 2՝** Հնագիտության փորձարարական հնարավորությունները և պատմական արժեքը: Միջավայր և մշակույթ, արտիֆակտ և էկոֆակտ: **Թեմա 3՝** Հնագիտական ուսումնասիրության աստիճանները: Հնագիտական հուշարձանների տեսականին: **Թեմա 4՝** Հայաստանի պատմության և մշակույթի պատմա-հնագիտական պարբերացումը: **Թեմա 5՝** Արտադրող տնտեսության ձևավորումը Հայկական լեռնաշխարհում և Մերձավոր Արևելքում: Կոմպլեքսային հասարակության կառուցվածքն ու գործունեության ոլորտները: **Թեմա 6՝** Հայաստանում վաղ դասակարգային հասարակության հնագիտական ուսումնասիրության նախնական արդյունքները: Հնագույն պետականության սաղմնավորումն ըստ Հայաստանի հնագիտության:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/B13. «ԳՐԱԲԱՐ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի հնչյունական և բառային իրողությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի հնչյունական, ուղղագրական, հնչյունափոխական և բառային հատկանիշները.
2. կհասկանա գրաբար տեքստերը.
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի հնչյունաբանական, բառապաշարային, վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարը՝ որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: **Թեմա 3՝** Գրաբարի դերբայները: **Թեմա 4՝** Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակները: **Թեմա 5՝** Գրաբարի անկանոն բայերը: **Թեմա 6՝**

Գրաբարի պակասավոր բայերը: Պատճառական բայեր. գրաբարի բաղադրյալ ժամանակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր կարճ հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր կարճ հարցում (թեսթ): Միավորների քայլը 0.5 է:

0301/B12. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-3 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել Հայոց պատմության նոր ժամանակաշրջանի՝ 1877-1878 թ. ռուս-թուրքական պատերազմից մինչև 1918 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանն ընդգրկող հիմնախնդիրները, որը հնարավորություն կտա ձևավորել հայոց նոր պատմության իմացություն՝ բազմաթիվ նորահայտ նյութերի ներկայացման և մեկնաբանման միջոցով:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ներկայացվող ժամանակաշրջանի նոր պատմության հիմնախնդիրները,
2. ձեռք կբերի պատմական փաստերը համադրելու և ինքնուրույն վերլուծության ենթարկելու որոշակի հմտություն, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 2՝** Բեռլինի կոնգրեսի պատմական դասերը: **Թեմա 3՝** Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: **Թեմա 4՝** Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: **Թեմա 5՝** Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի կենսագործման սկիզբը: **Թեմա 6՝** Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: **Թեմա 7՝** Հայկական հարցը և մեծ տերությունները 1890-ական թթ.: **Թեմա 8՝** Հայաստանը 20-դ դարի սկզբին. Հայոց Մեծ Եղեռնը: **Թեմա 9՝** Հայաստանը 1917թ. փետրվարյան հեղափոխության շրջանում: **Թեմա 10՝** Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0301/B20. «ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է բացահայտել միջնադարյան առևտրատնտեսական բաղկացուցիչի և կապիտալի համաշխարհային ընդլայնման գործընթացը: Ներկայացնել Եվրոպայում (Գերմանիա, Շվեյցարիա) հումանիստական և ռեֆորմիստական շարժումների զարգացումը և ընթացքը, դրանց ազդեցությունը հասարակական-քաղաքական պատմության վրա: Նշել վերածննդի օրինաչափությունները, վերածննդի իրողությունները և աշխարհի պատկերի ընդլայնման իրողությունը: Ներկայացնել առաջին բուրժուական հեղափոխությունը Եվրոպայում (Նիդեռլանդներ) և նրա նշանակությունը: Ներկայացնել համաեվրոպական առաջին խոշոր հակամարտությունը (Երեսնամյա պատերազմ) և միջազգային հարաբերությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա վերածննդի արմատական փոփոխությունների քաղաքակրթական բովանդակությունը, քաղաքային կյանքը, աշխարհիկ գիտելիքները, ռեֆորմացիան.
2. կհասկանա նոր աշխարհընկալման ընդլայնումը.
3. կհասկանա նիդեռլանդական բուրժուական հեղափոխության նշանակությունը Եվրոպայում բուրժուա-դեմոկրատական կարգերի ձևավորման առումով.
4. կհասկանա միջազգային իրավիճակի սրումը Եվրոպայում, հակասությունների հետևանքները ու չմիջնադարում.
5. կկարողանա ցույց տալ միջնադարյան քաղաքակրթության աստիճանական քայքայումը և անցումը դեպի նոր արդյունաբերական հասարակության:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կապիտալիստական հարաբերությունների առաջացումը Արևմտյան Եվրոպայի երկրներում: **Թեմա 2՝** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները 15-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին: **Թեմա 3՝** Գերմանիան 16-17-րդ դդ.: **Թեմա 4՝** Ռեֆորմացիան Շվեյցարիայում: Հակառեֆորմացիան Եվրոպայում: **Թեմա 5՝** Բապանիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 6՝** Նիդեռլանդական հեղափոխությունը: **Թեմա 7՝** Իտալիան 16-րդ դարում

և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 8՝** Անգլիան 16-րդ դարում: **Թեմա 9՝** Ֆրանսիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 10՝** Սկանդինավիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 11՝** Միջազգային հարաբերությունները 17-րդ դարի առաջին կեսին: Երեսնամյա պատերազմը (1618-1648թթ.):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,2,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0301/B31. «ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

(6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (27 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ազգագրության ուսումնասիրության օբյեկտը, առարկան, տեղը գիտությունների համակարգում և կապն այլ գիտությունների հետ, աշխարհի ժողովուրդների դասակարգման և էթնոմշակութային շրջանցման սկզբունքները և այլն: Դասընթացը գիտելիքներ է տալիս հայ ազգագրության ձևավորման փուլերի, հայերի տնտեսական, հասարակական-ընտանեկան կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ազգագրական գիտության ձևավորման, կայացման ու զարգացման պատմությունը, ծանոթ կլիմի արդի ազգագրական-մարդաբանական հետազոտությունների հիմնական ուղղություններին ու արդյունքներին,
2. ծանոթ կլիմի էթնիկ հանրությունների դասակարգման սկզբունքներին և կիմանա աշխարհի էթնիկ քարտեզը՝ ըստ էթնոլեզվաընտանիքների, լեզվախմբերի և խոշոր էթնիկ հանրությունների,
3. ծանոթ կլիմի հայ ազգագրության ձևավորման ու գիտության վերածվելու պատմության երեք փուլերին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ազգագրական գիտության հիմնական հասկացությունները:

Թեմա 2՝ Ազգագրական գիտության ուսումնասիրության հիմնախնդիրները: Սկզբնաղբյուրները և կապը հարակից գիտությունների հետ: **Թեմա 3՝** Աշխարհի բնակչության էթնոլեզվական դասակարգման սկզբունքները արդի գիտության

մեջ: **Թեմա 4** Աշխարհի բնակչության մարդաբանական բնութագիրը: **Թեմա 5** Աշխարհի ժողովուրդների դավանաբանական քարտեզը: **Թեմա 6** Հայերը էթնիկ հանրությունների համակարգում: **Թեմա 7** Հայերի ավանդական կենցաղին ու մշակույթին վերաբերող հնագույն և միջնադարյան հիմնական աղբյուրները: **Թեմա 8** Հայ ազգագրության ձևավորման հիմնական փուլերը՝ առաջին փուլը. 19-րդ դարի առաջին կես: **Թեմա 9** Հայ ազգագրության գիտության զարգացումը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին: **Թեմա 10** Ազգագրական գիտությունը Հայաստանում 20-րդ դարի 2-րդ կեսից մինչև մեր օրերը: **Թեմա 11** Հայոց ավանդական և ժամանակակից մշակույթը: **Թեմա 12** Հայոց կենսապահովման մշակույթը: **Թեմա 13** Հայոց ավանդական և ժամանակակից հոգևոր մշակույթը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,2,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0301/B13. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-4 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները, ներկայացնել նորահայտ նյութերը և այլն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կրերի Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ.
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական դասախոսություն. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.: **Թեմա 2**՝ Անկախ պետականության ստեղծումը: **Թեմա 3**՝ Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը: **Թեմա 4**՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը: **Թեմա 5**՝ Հայկական հարցը

1919-1920թթ.: **Թեմա 6** Հայաստանի Հանրապետության անկումը: **Թեմա 7**՝ Հայկական մշակույթը 1918-1920թթ. :

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/B15. «ԳՐԱԲԱՐ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի ձևաբանական և շարահյուսական իրողությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները.
2. կհասկանա գրաբար տեքստերը.
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարի անվանական հոլովումը: **Թեմա 2՝** Գրաբարի դերանվանական հոլովումը: **Թեմա 3՝** Անձնական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 4՝** Ցուցական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 5՝** Ստացական և փոխադարձ դերանուններ: Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: Որոշյալ դերանուններ: **Թեմա 6՝** Ածական անուն. ածականների համեմատության աստիճանների կազմությունը: Թվականը գրաբարում: **Թեմա 7՝** Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B21. «ՆՈՐ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՐԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (9 կրեդիտ)

Շաբաթական՝ 12 ժամ (26 ժամ դասախոսություն, 22 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին համաշխարհային պատմության ուսումնասիրությունը՝ աղբյուրագիտական հենքի հետ, ցույց տալ աղբյուրների բովանդակությունը և կառուցվածքի առանձնահատկությունները պատմական տարբեր դարաշրջաններում, բացահայտել փաստերից օգտվելու և պատմականորեն շարադրելու ճիշտ մեթոդները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կողմնորոշվել համաշխարհային պատմության աղբյուրների տիպաբանության մեջ (արձանագրություններ, տարեգրություններ, հուշագրություններ, պատմագիտական աշխատություններ, կինոֆիլմեր).
2. կկարողանա բացահայտել նրանց արժանահավատության մակարդակը և օգտագործել իր պատմական ուսումնասիրություններում և հետազոտություններում.
3. կկարողանա սկզբնաղբյուրների տվյալները համադրել գիտական աշխատանքների տվյալների հետ և օգտագործել իր իսկ կատարած աշխատանքներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական մտքի և պատմական գիտության զարգացումը Անգլիայում 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում: **Թեմա 2՝** Պատմական գիտության զարգացումը Ֆրանսիայում 18-րդ դարում. ֆրանսիական լուսավորության պատմական միտքը: **Թեմա 3՝** Պատմական մտքի զարգացումն Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում 19-րդ դարում: **Թեմա 4՝** Պատմական մտքի զարգացումը ԱՄՆ-ում 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարում: **Թեմա 5՝** Մարքսիստական պատմագրության առաջացումը. Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի պատմական հայացքները: Պատմական մտքի զարգացումը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին: **Թեմա 6՝** Պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում նորագույն ժամանակաշրջանում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 1 է:

0301/B24. «ՌՈՒՄՍՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, ճիշտ պատկերացում կունենա ներկա զարգացումների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկավարժություն գիտության հիմնական հասկացությունները, օրինաչափությունները, առարկան, խնդիրները: **Թեմա 2՝** Մանկավարժական գիտությունների համակարգը, ՀՀ կրթության համակարգը և բարեփոխումները: Մանկավարժական մտքի պատմական զարգացումը: **Թեմա 3՝** Դիդակտիկայի հիմունքները: **Թեմա 4՝** Ուսուցման նպատակները, գործընթացի մեթոդաբանական հիմքերը: Ուսուցման սկզբունքները, մեթոդները, կազմակերպման ձևերը, միջոցները: **Թեմա 5՝** Կրթության բովանդակությունը, նպատակը, խնդիրները: **Թեմա 6՝** Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացում: **Թեմա 7՝** Դաստիարակության հիմունքները, էությունը, սկզբունքները և համակարգը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, սեռական, իրավական, տնտեսագիտական, գոյապահպանական դաստիարակության մեթոդները, միջոցները, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներ. դպրոցի կառավարում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/B09. «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի ոճաբանական համակարգը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայոց լեզվի ոճական համակարգի առանձնահատկությունները.

2. կիսականա հնչյունական, բառային և քերականական իրողությունների ոճական կիրառությունների առանձնահատկությունները.
3. կկարողանա կատարել ոճաբանական վերլուծություններ, գործնականում կիրառել ոճական տարբեր հնարներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ոճագիտությունը որպես գիտաճյուղ. ոճույթի ըմբռնումը: **Թեմա 2՝** Իրադրական և գործառական ոճեր. նրանց տեսակները: **Թեմա 3՝** Հնչյունաբանական ոճագիտություն: **Թեմա 4՝** Բառագիտական ոճագիտություն: **Թեմա 5՝** Ձևաբանական ոճագիտություն: **Թեմա 6՝** Շարահյուսական ոճագիտություն: **Թեմա 7՝** Լեզվի պատկերավորման միջոցները: **Թեմա 8՝** Լեզվի արտահայտչական միջոցները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/B23. «19-ԸՂ ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ 20-ԸՂ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-2 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7 ժամ (18 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կիսականա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ հասարակական-քաղաքական կյանքը 20-րդ դարի սկզբին. հայ պարբերական մամուլը: **Թեմա 2՝** Հ. Թումանյան, Ավ. Բասիակյան: **Թեմա 3՝**

Ե. Օտյան, Մ. Մեծարենց: **Թեմա 4՝** Սիամանթո, Դ. Վարուժան: **Թեմա 5՝** Շ. Կուրդիյան, Վ. Տերյան:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0304/B66. «ԱՃԱՌՅԱՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ականավոր լեզվաբան Հ. Աճառյանի գիտական ժառանգությանը, մասնավորապես հայերենի բառապաշարի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններին, ինչպես նաև ժամանակակից հայերենի բառային նորաբանություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Աճառյանի տարաբնույթ ուսումնասիրությունների վերլուծությունը և ժամանակակից հայերենի նորաբանությունները.
2. կհասկանա բառապաշարի փոփոխության և նոր բառերի ստեղծման ընթացքը.
3. կկարողանա կատարել գիտական ուսումնասիրությունների վերլուծություններ և մեկնաբանել նորաբանությունների ստեղծման բառակազմական օրինաչափությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հ. Աճառյանի գիտական վաստակը. համառոտ ակնարկ: **Թեմա 2՝** Հ. Աճառյանի ստուգաբանական աշխատությունները: **Թեմա 3՝** Հ. Աճառյանի՝ համեմատական լեզվաբանությանը նվիրված աշխատությունները: **Թեմա 4՝** Հ. Աճառյանը բառարանագիր: **Թեմա 5՝** Բառապաշարի փոփոխությունները. արդի հայերենի նորաբանությունները և նրանց բառակազմական կաղապարները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B30. «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆՂՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» (2 կրեդիտ)
Շաբաթական՝ 3 ժամ (5 ժամ դասախոսություն, 7 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականության դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում, ծանոթացնել ուսուցման նոր մեթոդների կիրառմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրականության ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում,
2. կհասկանա տեսական նյութի մատուցման ձևերը,
3. կկարողանա վարել հայ գրականության դաս՝ ըստ հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերի:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրականության դասավանդման մեթոդիկան՝ որպես առարկա, նրա բովանդակությունը, նպատակը, խնդիրները: **Թեմա 2՝** Խոսքային, գործնական, գննական մեթոդներ: **Թեմա 3՝** Բացատրական ընթերցանություն: **Թեմա 4՝** Ընթերցում և վերլուծում: **Թեմա 5՝** Տեսական գիտելիքների դերը և դրանց գործնական կիրառությունը: **Թեմա 6՝** Գրական երկերի վերլուծության հիմնական ուղիները: **Թեմա 7՝** Գրավոր աշխատանքներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B10. «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի պատմությունը, լեզվի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հայերենի հնչյունական, բառային, համակարգերի պատմական զարգացումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հնչյունական և բառապաշարային համակարգերի պատմական զարգացումը.
2. կիսականա ժամանակակից հայերենի լեզվական տարբեր իրողությունների ծագումը և պատմական զարգացումը.
3. կկարողանա պարզաբանել լեզվական շատ իրողությունների ծագումնաբանությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայոց լեզվի պատմությունը՝ որպես գիտաճյուղ. լեզվի ուսումնասիրության աղբյուրները: **Թեմա 2՝** Հայերենի պատմական զարգացման փուլերի ստորաբաժանումը և դրա վերաբերյալ կարծիքները: **Թեմա 3՝** Լեզուների ծագման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 4՝** Հայերենի հնչյունական համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 5՝** Հայերենի բառապաշարի պատմական զարգացումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B24. «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»-1
(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (20 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել նորագույն շրջանի հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նորագույն շրջանի հայ գրականության կարևոր երկերը, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կիսականա գրական ստեղծագործությունների գաղափարական-գեղարվեստական առանձնահատկությունները,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ հասարակական-քաղաքական կյանքը 20-րդ դարի սկզբին. պատմական իրադարձությունները, գրական-գեղարվեստական ուղղությունները, հոսանքները, նորագույն գրականության սկզբնավորումն ու առանձնա-

հատկությունները: **Թեմա 2՝** Ե. Չարենց: **Թեմա 3՝** Ակսել Բակունց: **Թեմա 4՝** Դ. Դեմիրճյան: **Թեմա 5՝** Ս. Ջորյան:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B12. «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (5 ժամ դասախոսություն, 7 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում, ծանոթացնել ուսուցման նոր մեթոդների կիրառմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայոց լեզվի ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում,
2. կհասկանա տեսական նյութի մատուցման ձևերը,
3. կկարողանա վարել հայոց լեզվի դաս՝ ըստ հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերի:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայոց լեզվի մեթոդիկան՝ որպես գիտաճյուղ. ուսուցման մեթոդներ. ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը: **Թեմա 2՝** Ծրագրեր, ուսումնական պլաններ, դասագրքեր: **Թեմա 3՝** Հնչյունաբանության ուսուցումը: **Թեմա 4՝** Բառագիտության ուսուցումը: **Թեմա 5՝** Ձևաբանության ուսուցումը: **Թեմա 6՝** Շարահյուսության ուսուցումը: **Թեմա 7՝** Գրավոր աշխատանքների տեսակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B32. «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 3 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրականագիտա-
կան և գեղագիտական հիմնական խնդիրները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրականության և գեղագիտության փոխադարձ առնչությունները.
2. կհասկանա գրական ուղղությունները, գեղագիտական կատեգորիաները.
3. կկարողանա կատարել գրականագիտական ուսումնասիրություններ, զանա-
զանել գրական-գեղարվեստական ուղղությունները:

Բովանդակությունը

Թեմա 1՝ *ա.* Գրական սեռեր. էպիկական, քնարական, դրամատիկական; *բ.* գրական ժանրեր. էպիկական ժանր; *գ.* քնարաէպիկական ժանրեր; *է.* դրա-
մատիկական ժանրեր: **Թեմա 2՝** *ա.* Տաղաչափության հիմունքները. ընդհանուր
պատկերացում տաղաչափական համակարգերի մասին; *բ.* հանգ, տուն, նմանա-
ձայնություն: Բանաստեղծական կայուն ձևեր: **Թեմա 3՝** Գրականությունը որպես
արվեստի տեսակ: Գրականության գեղագիտական բնույթը: Գեղագիտական
հատկանիշների (կատեգորիաների)՝ դրսևորումը գրական երկերում: **Թեմա 4՝**
Գրականության տեսության պատմական զարգացումը: **Թեմա 5՝** Հայ գեղագի-
տական-գրականագիտական միտքը: *ա.* Հայ հին և միջնադարյան գրականա-
գիտական մտքի զարգացումը: *բ.* Հայ գրականագիտական միտքը 19-20-րդ դդ.:
Թեմա 6՝ Գրական ուղղություններ. *ա.* կլասիցիզմ; *բ.* սենտիմենտալիզմ, ռոման-
տիզմ. կյանքի ռոմանտիկական արտացոլման էական առանձնահատկություն-
ները: Ռոմանտիզմը հայ գրականության մեջ: *գ.* Ռեալիզմ. կյանքի ռեալիստական
արտացոլման հիմնական գծերը: Քննադատական ռեալիզմը հայ գրականության
մեջ: *դ.* Նատուրալիզմ, սիմվոլիզմ, ֆուտուրիզմ: Մոցիալիստական ռեալիզմը հայ
գրականության մեջ: **Թեմա 7՝** Ստեղծագործական աշխատանքի հիմնական փու-
լերը. ոգևորություն և երևակայություն: **Թեմա 8՝** Գրական երկի վերլուծություն,
գնահատման ուղիներն ու չափանիշները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4
միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրա-
քանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանա-
բար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/Յ17. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապ-
մունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվաբանական ուղղությունները, ուսումնասիրման մեթոդները, լեզվահոգեբանական յուրահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա լեզվաբանության ուսումնասիրման մեթոդներն ու ուղղությունները,
2. կհասկանա ուսումնասիրման տարբեր եղանակների դրական և բացասական կողմերը. լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները,
3. կարողանա տարբերել լեզվական կարգերը, կվերլուծի լեզվաբանական տարբեր ուսմունքներով կատարված ուսումնասիրությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեզվի բնութագիրը. լեզվի բնորոշումը. լեզվի գոյության ձևերը:
Թեմա 2՝ Լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները. գրային համակարգեր: **Թեմա 3՝** Լեզուների բառային համակարգերը: **Թեմա 4.** Լեզուների ձևաբանական համակարգերը: **Թեմա 5՝** Լեզուների շարահյուսական համակարգերը: **Թեմա 6՝** Լեզվի ծագումը: **Թեմա 7՝** Աշխարհի լեզուների դասակարգումը: **Թեմա 8՝** Լեզուների ուսումնասիրման մեթոդներն ու ուղղությունները. լեզվաբանության բաժինները. լեզվի ուսումնասիրման հայեցակետերը: **Թեմա 9՝** Լեզու և մտածողություն. լեզու և խոսք: **Թեմա 10՝** Կառուցվածք. նորմա: **Թեմա 11՝** Լեզվական մակարդակներ և միավորներ: Շարակարգային և հարացուցային հարաբերություններ: **Թեմա 12՝** Հնչյուն և հնչույթ. ձևույթ. բառ: **Թեմա 13՝** Բառակապակցություն. շարույթ. նախադասություն. կապակցման միջոցներ և եղանակներ: Տեքստ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/B67. «ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (9 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ մատենագիտության նմուշներին և նրանց առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ մատենագիտության ընդհանուր զարգացումը.
2. կհասկանա հայ մատենագիտության յուրահատկությունները.
3. կկարողանա կատարել մատենագիտական ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ մատենագիտության մասին առաջին տեղեկությունները:

Թեմա 2՝ Հայ տպագրության մատենագիտություն և տեղեկություններ տպագիր

հնատիպ գրքերի մասին: **Թեմա 3՝** Հայ պարբերական մամուլի սկզբնավորումը:

Թեմա 4՝ Մխիթարյան առաջին մատենագրության սկզբնավորումը: **Թեմա 5՝** Հայ մատենագրության հետագա զարգացումը և արդի վիճակը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/Յ68. «ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ»
(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (9 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել միջին հայերենի հոլով ման և խոնարհման համակարգերին և նրանց հետագա զարգացմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի առանձնահատկությունները.
2. կհասկանա միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի կազմության օրինաչափությունները.
3. կկարողանա կատարել միջին հայերենի հոլովման և համակարգերի վերաբերյալ քերականական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր ակնարկ միջին հայերենի քերականության վերաբեր-

յալ: **Թեմա 2՝** Գրաբարի և միջին հայերենի հոլովման և խոնարհման համակար-

գերի ընդհանրություններն ու տարբերությունները: **Թեմա 3՝** Միջին հայերենի

հոլովները: **Թեմա 4՝** Միջին հայերենի հոլովումները: **Թեմա 5՝** Միջին հայերենի

բայական եղանակները և նրանց ժամանակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B11. «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի պատմությանը, լեզվի ծագման վերաբերյալ եղած տեսություններին, հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերի պատմական զարգացմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, ձևաբանական և շարահյուսական համակարգերի պատմական զարգացումը,
2. կհասկանա ժամանակակից հայերենի լեզվական տարբեր իրողությունների ծագումը և պատմական զարգացումը,
3. կկարողանա պարզաբանել ձևաբանական և շարահյուսական շատ իրողությունների ծագումնաբանությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայերենի ձևաբանական համակարգի պատմական զարգացումը:

Թեմա 2՝ Հոլովման համակարգի պատմական զարգացումը: ***Թեմա 3՝*** Բայ. հայերենի դերբայները և նրանց պատմական զարգացումը: ***Թեմա 4՝*** Խոնարհման համակարգի պատմական զարգացումը: ***Թեմա 5՝*** Շարահյուսական համակարգի պատմական զարգացումը. կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնություն. կառավարում /խնդրառություն/. առողություն. շարադասություն: ***Թեմա 6՝*** Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ. պարզ և բարդ նախադասություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/Յ25. «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-2
(6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (15 ժամ դասախոսություն, 9 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել նորագույն շրջանի հայ գրականությունը, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նորագույն շրջանի հայ գրականության զարգացման հիմնական ուղղությունները,
2. կհասկանա գրական երկերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ նորագույն գրականությունը և 20-րդ դարի 30-ական թթ. հասարակական-քաղաքական իրադարձությունները: Գ. Մահարի, Վ. Թոթովենց, Մ. Արմեն: **Թեմա 2՝** Գրականությունը 1940–50-ական թթ.: Ն. Զարյան, Հ. Շիրազ: **Թեմա 3՝** Սփյուռքահայ գրականության սկզբնավորումը: Գաղթօջախները և գրական ուժերը: **Թեմա 4՝** Կարոտի գրականություն. Համաստեղ և Հ. Մձուրի: **Թեմա 5՝** Նահանգի թեման. Շ. Շահնուր: **Թեմա 6՝** Կ. Զարյան:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/Յ29. «ՀԱՅ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (23 ժամ դասախոսություն, 7 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրաքննադատական մտքի պատմությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրաքննադատության պատմությունը, զարգացման հիմնական ուղղությունները,
2. կիսականա գրաքննադատության առանձնահատկությունները, դերը և նպատակը,
3. կկարողանա կատարել գրաքննադատական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քննադատության առաջացումը հնագույն ժամանակներում. անջատումը գրականությունից, փիլիսոփայությունից և մյուս գիտություններից:
Թեմա 2՝ Հայ գրաքննադատության ձևավորումը, նախնական միաձուլվածությունը պատմագրությանը: **Թեմա 3՝** Մ. Խորենացի, Հ. Մանդակունի: **Թեմա 4՝** Գ. Նարեկացի, Հովհ. Սարկավագ Իմաստասեր: **Թեմա 5՝** Լուսավորական քննադատություն. Մ. Թաղիադյան, Խ. Աբովյան, Գ. Ախվերդյան, Ս. Նազարյան, Մ. Նալբանդյան: **Թեմա 6՝** Գրաքննադատությունը 1870-80-ական թթ.. Բաֆֆի, Հ. Պարոնյան, Գր. Արծրունի: **Թեմա 7՝** Ստ. Պալասանյան, Դ. Աղայան, Ա. Արփիարյան, Գ. Զոհրապ: **Թեմա 8՝** Գրաքննադատությունը 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին. Ալ. Շիրվանզադե, Լ. Մանվելյան, Վրթ. Փափազյան, Մ. Մեծարենց, Ա. Հարությունյան, Ա. Չոպանյան: **Թեմա 9՝** Լեո, Հ. Թումանյան, Ա. Տերտեղյան, Դ. Վարուժան, Վ. Տերյան, Ստ. Շահումյան: **Թեմա 10՝** Արդի հայ գրաքննադատությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/B69. «ՄՓՅՈՒՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սփյուռքահայ գրականության պատմությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա սփյուռքահայ գրականության առանձնահատկությունները.
2. կիսականա սփյուռքահայ գրական ուղղությունների փոխհարաբերությունները.
3. կկարողանա ըմբռնել սփյուռքահայ գրականության գաղափարական առանձնահատկությունները, վերլուծել գրական ստեղծագործությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համառոտ ակնարկ սփյուռքահայ գրականության ձևավորման մասին: **Թեմա 2՝** Դարասկզբի իրադարձությունները և դրանց արտացոլումը գրականության մեջ: **Թեմա 3՝** Սփյուռքահայ գրական ուղղություններն ու հոսանքները: **Թեմա 4՝** Հ. Մանուկի, Համաստեղ, Վ. Շուշանյան, Կ. Զարյան, Վ. Թեքեյան և այլն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B70. «ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ռուս-հայերեն գեղարվեստական թարգմանության ոճական խնդիրներին և դրանց հաղթահարման միջոցներին ու եղանակներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գեղարվեստական թարգմանության ընթացքում առաջացող ոճական խնդիրները.
2. կհասկանա դրանց հաղթահարման միջոցներն ու եղանակները.
3. կկարողանա կատարել գեղարվեստական տեքստերի թարգմանություններ:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Գեղարվեստական տեքստերի լեզվաոճական առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Գեղարվեստական ոճի առանձնահատկություններից բխող թարգմանական խոչընդոտներ: **Թեմա 3՝** Բառապաշարի թարգմանության ոճական համարժեքության պահպանում: **Թեմա 4՝** Ձևաբանական զուգաձևությունների ընտրություն: **Թեմա 5՝** Շարահյուսական իրողությունների թարգմանական համարժեքություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B47. «ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել տրամաբանության հիմնական հասկացությունները, օրենքները և սկզբունքները: Ուսանողը ձեռք է բերում հրմտություններ, որոնք նպաստում են մասնագիտական առարկաների տեսությունների հիմնական հասկացությունների յուրացմանը, գիտահետազոտական աշխատանքի կատարմանը և օգնում ինքնուրույն անալիտիկ մտածողությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մտքի կառուցվածքը, այն տրամաբանական կանոններն ու օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունը ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը.
2. կհասկանա տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ.
3. կկարողանա տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով բարձրացնել իմացական գործընթացների և հատկապես գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տրամաբանության առարկան և նշանակությունը: **Թեմա 2՝** Լեզվի տրամաբանական վերլուծությունը: **Թեմա 3՝** Հասկացությունը որպես տրամաբանական ձև և հասկացության ընդհանուր բնութագրությունը: **Թեմա 4՝** Դատողություն: **Թեմա 5՝** Մտածողության ձևական տրամաբանական հիմնական օրենքները: **Թեմա 6՝** Դեդուկտիվ մտահանգում: Մտահանգման ընդհանուր բնութագիրը: **Թեմա 7՝** Ինդուկտիվ մտահանգումներ: **Թեմա 8՝** Փաստարկման տրամաբանական հիմունքներ: **Թեմա 9՝** Տրամաբանական սխալներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B26. «ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (14 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել արդի հայ գրականությունը (1960–2000 թթ.), գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական–հասարակական դերը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հետպատերազմյան շրջանի առաջին տասնամյակի հայ գրականությունը: **Թեմա 2՝** Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո գրական նոր շարժումը: **Թեմա 3՝** Հ. Քոչար, Ս. Խանգադյան: **Թեմա 4՝** Բանաստեղծությունը. Հ. Սահյան և Վ. Դավթյան: **Թեմա 5՝** Պ. Սևակ, Ս. Կապուտիկյան: **Թեմա 6՝** Պատերազմի թեման արձակում. Բ. Հովսեփյան, Մ. Սարգսյան, Ս. Խանգադյան: **Թեմա 7՝** Արձակը. Հ. Մաթևոսյան, Զ. Խալափյան, Վ. Պետրոսյան: **Թեմա 8՝** Խ. Դաշտենց, Մ. Գալշոյան: **Թեմա 9՝** Գրականությունը անկախության շրջանում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0302/B16. «ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել արևմտահայերենի հնչյունական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, արևելահայերենի և արևմտահայերենի միջև եղած տարբերությունները և նմանությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արևմտահայերենի ձևավորումը, հնչյունական, բառային և քերականական հատկանիշները,
2. կհասկանա արևմտահայերենի ու արևելահայերենի միջև եղած տարբերություններն ու նմանությունները,
3. կկարողանա հասկանալ և վերլուծել արևմտահայերեն տեքստեր, հաղորդակցվել արևմտահայերենով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայերենի զարգացման փուլերը. արևմտահայերենի ձևավորումը:
Թեմա 2՝ Արևմտահայերենի հնչյունական համակարգը. ուղղագրություն. բաղաձայնական համակարգի արտասանական առանձնահատկությունները. հնչյունափոխություն: **Թեմա 3՝** Արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարային ընդհանրություններն ու տարբերությունները: Դարձվածային միավորներ:
Թեմա 4՝ Արևմտահայերենի և արևելահայերենի ձևաբանական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները: **Թեմա 5՝** Արևմտահայերենի և արևելահայերենի շարահյուսական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B71. «ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (6 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել խմբագրական աշխատանքի առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա խմբագրական աշխատանքի առանձնահատկությունները.
2. կհասկանա խմբագրական աշխատանքի նրբերանգները.
3. կկարողանա կատարել խմբագրական աշխատանք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համառոտ ակնարկ խմբագրական աշխատանքի հիմնական առանձնահատկությունների մասին: **Թեմա 2՝** Խմբագրական աշխատանքը մամուլում: **Թեմա 3՝** Գեղարվեստական տեքստերի խմբագրումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0302/B52. «ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (6 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայերենի ուղղագրության պատմությանը և ուղղագրական փոփոխություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայերենի ուղղագրության հիմնական սկզբունքները և նրանց փոփոխությունները ժամանակի ընթացքում.
2. կհասկանա լեզվի պատմական զարգացման ընթացքում ուղղագրության փոփոխությունների անխուսափելիությունը.
3. կկարողանա կատարել բնագրերի ուղղագրական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մ. Մաշտոցը և հայոց գրերի ստեղծումը. ուղղագրական առաջին սկզբունքները: **Թեմա 2՝** Հայերենի ուղղագրության վիճակը միջնադարում. փոփոխություններ այբուբենում. ուղղագրական փոփոխություններ: **Թեմա 3՝** 1922 և 1940 թթ. ուղղագրական բարեփոխումները: **Թեմա 4՝** Մեծատառեր և փոքրատառեր. տողադարձ. համառոտագրություններ և հապավումներ. դրանց գրության ձևերը պատմական տարբեր շրջաններում: **Թեմա 5՝** Ուղղագրության վերաբերյալ արդի բանավեճերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

4.3. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն

0303/B01. «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է իրազեկել ուսանողին ուսումնական գործունեության առանձնահատկությունների մասին, նպաստել հոգեբանության և մանկավարժության բնագավառում գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մասնագիտական գործունեության բովանդակության, առանձնահատկությունների մասին և կկողմնորոշվի հոգեբանության և մանկավարժության տարբեր բնագավառներում գիտելիքների ձեռք բերման ուղիներում,
2. կհասկանա ուսումնական գործունեության տրամաբանությունը,
3. կկարողանա կազմակերպել իր ուսումնական գործունեությունը ինչպես լսարանային պայմաններում, այնպես էլ ինքնուրույն ուսումնական և հետազոտական աշխատանքներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանության զարգացման պատմական ակնարկ: ***Թեմա 2***՝ Հոգեբանության առարկան, խնդիրները: ***Թեմա 3***՝ Հոգեբանության սկզբունքները: ***Թեմա 4***՝ Հոգեբանության բնագավառները: ***Թեմա 5***՝ Հոգեբանության միջառարկայական կապերը: ***Թեմա 6***՝ Հոգեբանության մեթոդները: ***Թեմա 7***՝ Հոգեբանության ուղղությունները: ***Թեմա 8***՝ Հոգեբանի գործունեության էթիկական նորմերի հիմունքները: ***Թեմա 9***՝ Մանկավարժ-հոգեբան մասնագիտության առանձնահատկությունները, նշանակությունը արդի կրթական համակարգում: ***Թեմա 10***՝ Մանկավարժ-հոգեբանի գործունեությունը կրթական համակարգում: Ուսուցչի մանկավարժի մասնագիտության նախապատրաստումը ՀՀ-ում: ***Թեմա 11***՝ Կրթական համակարգի բարեփոխումները: ***Թեմա 12***՝ Արդի կրթական համակարգի կառավարումը: ***Թեմա 13***՝ Ուսուցման արդյունքների գնահատումը եվրոպական չափորոշիչներով, կրեդիտային համակարգի ներդրումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

0103/B40. «ԲԱՄՇԴԱԳՈՒՅՆ ՆՅԱՂԻՍՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիա առարկայի նպատակն է ուսումնասիրել ԲՆԳ-ն տարբեր ֆիզիոլոգիական պրոցեսների հետազոտությունների ժամանակ, միաժամանակ տալով տարբեր ֆիզիոլոգիական պրոցեսների գիտական բացատրությունը, անատոմո-մորֆոլոգիական կառուցվածքը, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և տարբեր օրգան-համակարգերի գործունեության ժամանակ բարձրագույն նյարդային գործունեության (ԲՆԳ-ի) դերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ԲՆԳ ֆիզիոլոգիայի ազդեցությունը օրգանիզմի տարբեր օրգան-համակարգերի ֆունկցիաների վրա,
2. կհասկանա օրգանների անատոմիական-մորֆոլոգիական կառուցվածքը,
3. կյուրացնի օրգանիզմի և նրան շրջապատող միջավայրի միջև եղած փոխհարաբերությունը, կկարողանա իր գիտելքները հաջողությամբ կիրառել օրգան-համակարգի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները բացատրելու՝ ելնելով մարդու բարձրագույն նյարդային գործունեության տիպոլոգիական առանձնահատկություններից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն, ԲՆԳ-ի ֆիզիոլոգիայի զարգացման պատմությունը, առարկայի խնդիրները, նպատակը և ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 2՝** Գլխուղեղի աշխատանքի ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 3՝** Պայմանական և ոչ պայմանական ռեֆլեքսները և նրանց կենսաբանական նշանակությունը: **Թեմա 4՝** Նյարդային կենտրոնի ֆունկցիաները: **Թեմա 5՝** Քնի, հիպնոզի, երազատեսության ֆիզիոլոգիան: **Թեմա 6՝** Նյարդային համակարգի, արյան, ավիշի ինտեգրատիվ ֆունկցիան: **Թեմա 7՝** Ֆունկցիաների լոկալիզացիան մեծ կիսագնդերում: **Թեմա 8՝** Մարդու և կենդանիների նյարդային գործունեության ֆիլոգենեզը: **Թեմա 9՝** Ժամանակավոր կապերի ձևավորման ու պահպանման քիմիական և ֆիզիկական մեխանիզմները: **Թեմա 10՝** Բարձրագույն նյարդային գործունեության վրա արտակերպային գործոնների ազդեցությունը: **Թեմա 11՝** Մարդու բարձրագույն նյարդային գործունեության սպեցիֆիկ առանձնահատկությունները: **Թեմա 12՝** Մարդու բարձրագույն նյարդային գործունեության տիպաբանական առանձնահատկությունները: **Թեմա 13՝** Հիշողության ֆիզիոլոգիան: **Թեմա 14՝** Հույզերի և մոտիվացիաների ֆիզիոլոգիան: **Թեմա 15՝** Գլխուղեղի էլեկտրական ակտիվությունը և ժամանակավոր կապերը: **Թեմա 16՝** Երեխաների բարձրագույն նյարդային գործունեության զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 17՝** Արտաքին գործոնների ազդեցությունը բարձրագույն նյարդային գործունեության վրա: **Թեմա 18՝** Բարձրագույն նյարդային գործունեությունը տարբեր բնույթի աշխատանքների դեպքում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

0303/B02. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օրինաչափություններին և մեխանիզմներին, անձի հոգեկան զարգացմանն ու անհատական առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,
2. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը իր հետագա գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, ճյուղերը, կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 2՝** Ժամանակակից հոգեբանության ուղղությունները, սկզբունքները, հետազոտության մեթոդները: **Թեմա 3՝** Հոգեկանի զարգացումը, մակարդակները: **Թեմա 4՝** Գործունեության կառուցվածքը, հրմտություններ, տեսակները: **Թեմա 5՝** Անձ, միջանձնային հարաբերություններ, խումբ, տեսակները: **Թեմա 6՝** Իմացական գործընթացներ: **Թեմա 7՝** Հուզականալին գործընթացներ: **Թեմա 8՝** Անձի անհատական տիպոլոգիական առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B22. «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա, և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, ճյուղերը, հիմնական հասկացությունները, ուսուցման և դաստիարակության դերը մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում,
2. կհասկանա մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդու անձի սոցիալականացման համատեքստում,
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկավարժության ընդհանուր հիմունքներ: Մանկավարժության ծագումն ու զարգացումը: Մանկավարժության հիմնական հասկացությունները: Մանկավարժական գիտության համակարգը: Մանկավարժության կապը այլ գիտությունների հետ: Գիտամանկավարժական մեթոդները: Մանկավարժական մտքի պատմության զարգացումը: Անձի ձևավորումը և զարգացումը: Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: **Թեմա 2՝ Դիդակտիկայի հիմունքներ:** Ուսուցման նպատակը, խնդիրները: Կրթական բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանական և հոգեբանական հիմունքները: Ուսուցման գործընթացի կառուցվածքը, սկզբունքները և կանոնները: Ուսուցման մեթոդները և հնարները, ինտերակտիվ մեթոդները: Ուսուցման եղանակները և միջոցները: Դաս-դասարանային համակարգ: Դասը որպես ուսուցման կազմակերպման ձև: Աշակերտների գիտելիքների վերահսկումը, ստուգումն ու գնահատումը: Ուսուցիչը և նրան ներկայացվող պահանջները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B05. «ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
(6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին հոգեկանի առաջացման էվոլյուցիային, տալ տեղեկություններ գոռոհոգեբանական և էտոլոգիական հետազոտությունների ժամանակակից նվաճումների վերլուծությունների և ընդհանրացումների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ֆիլոգենեզում և օնոտոգենեզում կենդանիների հոգեկան գործունեության զարգացման փուլերը,
2. կհասկանա կենդանիների հոգեկանի զարգացման և գործառնության օրինաչափությունները,
3. կկարողանա վերլուծել, համակարգել և ընդհանրացնել կենդանիների հոգեկանի գործունեությանը վերաբերող փաստացի նյութը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մարդաբանությունը որպես գիտություն, խնդիրները: **Թեմա 2՝** Կյանքի ծագումը երկրի վրա: **Թեմա 3՝** Մարդու ծագումը և հոգեկանի էվոլյուցիան: **Թեմա 4՝** Ռասայաբանություն և էթնիկական մարդաբանություն: **Թեմա 5՝** Համեմատական հոգեբանություն: **Թեմա 6՝** Մարդը որպես անհատ: **Թեմա 7՝** Մարդը որպես սուբյեկտ: **Թեմա 8՝** Մարդը որպես անձ և անհատականություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B07. «ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել անձի հոգեբանության մեթոդաբանական սկզբունքներին, անձի հիմնախնդրի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա անձի հոգեբանության ուսումնասիրման հիմնախնդիրները և սկզբունքները, ինչպես նաև անձի ժամանակակից մեկնաբանությունը և հայեցակարգերը,
2. կհասկանա անձի հոգեբանության մեթոդաբանության տրամաբանությունը,
3. կկարողանա վերլուծել անձի ուսումնասիրման արդի խնդիրները, կառուցվածքային մոտեցումները, ինչպես նաև դիտարկել անձին միջառարկայական տեսանկյունից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անձի հասկացությունը հոգեբանության մեջ: **Թեմա 2՝** Անձի հոգեկան ակտիվության աղբյուրները: **Թեմա 3՝** Անձի ձևավորումը գործունեության մեջ: **Թեմա 4՝** Անձի ձևավորումը հաղորդակցման մեջ: **Թեմա 5՝** Ինքնագիտակցման նշանակությունը անձի ձևավորման գործում: **Թեմա 6՝** Դասական հոգեվերլուծություն: **Թեմա 7՝** Նեոֆրեյդիզմ: **Թեմա 8՝** Հումանիստական հոգեբանություն: **Թեմա 9՝** Գեշտալտ հոգեբանություն: **Թեմա 10՝** Վարքագիտություն և սոցիալ կոգնիտիվիզմ: **Թեմա 11՝** Անձի դիսպոզիցիոն տեսություն: **Թեմա 12՝** Կոգնիտիվ հոգեբանություն: **Թեմա 13՝** Անձի ինտելեկտուալ զարգացման տեսությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B23. «ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»-2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժություն գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցների հիմքի վրա, և ցույց տալ մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, դաստիարակության դերը մարդու անձի ձևավորման և զարգացման գործընթացում,

- կհասկանա մանկավարժություն գիտության տեղն ու դերը մարդու անձի սոցիալականացման համատեքստում,
2. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դաստիարակության ընդհանուր հիմունքները: Դաստիարակության նպատակը, խնդիրները, մեթոդները: Դաստիարակության համակարգը, սկզբունքները: Դաստիարակության բաղադրամասերը՝ մտավոր, ֆիզիկական, ընտանեկան, գեղագիտական, աշխատանքային, սեռական և իրավաբանական: Կուլեկտիվի դաստիարակության տեսությունը: **Թեմա 2՝ Մանկավարժական կառավարում:** ՀՀ կրթական համակարգը: Դպրոցի տնօրենի գործունեությունը, կառավարման ոճերը: Դասուցի, նրա աշխատանքի մեթոդիկան: Աշակերտական կազմակերպությունները դպրոցում: Արտադասարանային և արտադպրոցական աշխատանքը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/Յ06. «ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՃԱՆԱՉՈՒՄ»

(7 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության մեջ փորձարարական հետազոտությունների տեսություններին, մեթոդաբանության հիմքերին, կողմնորոշել հոգեբանական հետազոտությունների մեթոդների համակարգում, ձևավորել գիտելիքներ հոգեբանական գիտափորձերի պլանավորման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանական գիտափորձի կազմակերպման ձևերն ու հետազոտությունների հիմնական ծրագրերը,
2. կհասկանա հոգեբանական հետազոտության կազմակերպման տրամաբանությունը,
3. կկարողանա ինքնուրույն օգտագործել գիտելիքները գիտափորձերի պլանավորման և այլ էմպիրիկ հետազոտությունների համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Փորձարարական հոգեբանության և հոգեճանաչման ձևավորման, զարգացման պատմությունը: **Թեմա 2՝** Փորձարարական հոգեբանության մեթոդոլոգիայի հիմնական սկզբունքները: **Թեմա 3՝** Հոգեբանական մեթոդների կիրառման պահանջները և դժվարությունները: **Թեմա 4՝** Հոգեբանության հետազոտության մեթոդիկաների դասակարգման սկզբունքները և տեսակները: **Թեմա 5՝** Ոչ էքսպերիմենտալ մեթոդներ: Փորձարարական հոգեբանության կազմակերպչական մեթոդները: **Թեմա 6՝** Ոչ էքսպերիմենտալ մեթոդներ: **Թեմա 7՝** Հոգեբանական թեսթ: **Թեմա 8՝** Տվյալների հիմնական տիպերը-LTQ: **Թեմա 9՝** Վալիդություն, տեսակները, չափման հիմնական սկզբունքները: **Թեմա 10՝** Հոգեբանական էքսպերիմենտ: **Թեմա 11՝** էքսպերիմենտալ տվյալների ինտերպրետացիա: **Թեմա 12՝** Չափման սանդղակները, տեսակները և կիրառման ոլորտները: **Թեմա 13՝** Փոփոխականների միջև կապերի չափումը: **Թեմա 14՝** Տվյալների բազմաչափ վերլուծության մեթոդներ: **Թեմա 15՝** Դիագնոստիկ մեթոդներով աշխատող անձանց և նրանց մասնագիտական հմտություններին վերաբերող էթիկական պահանջները: Դիագնոստիկայի ենթարկվող անձանց իրավունքների պահպանման հետ կապված էթիկական պահանջները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B08. «ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական օրինաչափությունների, հոգեֆիզիոլոգիական տարբեր դպրոցների կողմից ընդունված տեսությունների և հայեցակարգերի մասին լիարժեք մասնագիտական պատկերացումներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի հոգեֆիզիոլոգիական գիտության տեսական խնդրացանկը,
2. կհասկանա հոգեկան գործընթացների ուղեղային ապահովման մեխանիզմները,
3. կկարողանա բացատրել հիմնական հոգեկան գործընթացների ձևավորման և զարգացման նյարդաֆիզիոլոգիական հիմքերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեֆիզիոլոգիայի առարկան, դասակարգումը, մեթոդները:
Թեմա 2՝ Ֆունկցիոնալ վիճակների հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 3**՝ Քնի հոգեֆիզիոլոգիա: Քնի տեսություններ: **Թեմա 4**՝ Ստրեսի հոգեֆիզիոլոգիա: Ընդհանուր առապատացիոն համախտանիշ: **Թեմա 5**՝ Պահանջմունքների և մոտիվացիաների հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 6**՝ Հույզերի հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 7**՝ Ուշադրության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 8**՝ Խոսքի հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 9**՝ Ստածողական գործունեության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 10**՝ Շարժողական ակտիվության հոգեֆիզիոլոգիա: **Թեմա 11**՝ Գիտակցությունը որպես հոգեֆիզիոլոգիական ֆենոմեն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք(ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

0303/B09. «ԻՄԱՅԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐ» (7 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել բարձրագույն իմացական գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններին, ցույց տալ հոգեկան արտացոլման բարձրագույն ձևերի յուրակերպությունը, ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրների գիտական բացատրությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հիշողության, մտածողության, խոսքի և երևակայության հոգեբանության հիմնական տեսական մոտեցումները,
2. կհասկանա այդ գործընթացների հիմնական հոգեբանական օբյեկտները, ծագումնաբանական հիմնական խնդիրները,
3. կկարողանա մեկնաբանել և վերլուծել այդ գործընթացների հոգեբանական օրինաչափությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասկացություն ուշադրության մասին: **Թեմա 2**՝ Հասկացություն զգայությունների մասին: **Թեմա 3**՝ Հասկացություն ընկալման մասին: **Թեմա 4**՝ Հասկացություն հիշողության մասին: **Թեմա 5**՝ Հասկացություն երևակայության մասին: **Թեմա 6**՝ Հասկացություն խոսքի մասին: **Թեմա 7**՝ Հասկացություն մտածողության մասին: **Թեմա 8**՝ Գիտակցությունը որպես իմացական գործընթացներ:

ըը ինտեգրող սկիզբ: **Թեմա 9՝** Ինտելեկտի տեսությունները: **Թեմա 10՝** Իմացական գործընթացները քննարկող տեսությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B24. «ՏԱՐԻՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության գիտության համակարգի տեղն ու դերը տարբեր տարիքային խմբերի երեխաների անձի ձևավորման գործընթացում: Տարիքային մանկավարժության պատմական զարգացումը, գիտական հարացույցերը, տեղն ու դերը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տարիքային մանկավարժության ժամանակակից տեսությունները, հիմնական հասկացությունները, տարիքային շրջաբաժանման մոտեցումները,
2. կհասկանա երեխայի կյանքի զարգացման հոգեֆիզիոլոգիական բնութագիրը, դրան համապատասխան կազմակերպվող ուսումնադաստիարակչական գործընթացի էությունն ու առանձնահատկությունները,
3. կկարողանա տարբեր տարիքային խմբերում երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառման հիման վրա բացահայտել զարգացման և ձևավորման խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական մաս: Պատմական ակնարկ տարիքային մանկավարժությունից: Տարիքային մանկավարժության առարկան, խնդիրները, մեթոդաբանական և հոգեբանական հիմունքերը, կապը այլ գիտությունների հետ: Անձը որպես դաստիարակության առարկա, նրա զարգացման հիմնական գործոնները: **Թեմա 2՝** Մանկիկային տարիքի առանձնահատկությունները: Նախադպրոցական տարիքի առանձնահատկությունները: Երեխաների զարգացման ճգնաժամային և սենզիտիվ փուլերի օրինաչափությունները, տարբեր տարիքային փուլերում զարգացման անհամաչափությունները, աքսելերացիայի մանկա-

վարժական իմաստը: Կրտսեր դպրոցականի տարիքային բնութագիրը, առանձնահատկությունները: Միջին դպրոցական տարիքի առանձնահատկությունները: Ժամանակակից դեռահասի առանձնահատկությունները: Ավագ դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0103/B38. «SULԻՔԱՅԻՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Տարիքային ֆիզիոլոգիա առարկայի նպատակն է ուսումնասիրել ֆիզիոլոգիական ֆունկցիաների զարգացման և դրսևորման առանձնահատկությունները օնտոգենեզի տարբեր փուլերում, այն է նորածնության, վաղմանկության, առաջին և երկրորդ մանկության, դեռահասության, պատանեկության, հասունության և ծերության փուլերում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մարդու օնտոգենեզի տարբեր փուլերում ընթացող ֆիզիոլոգիական-անատոմիական զարգացման առանձնահատկությունները,
2. կհասկանա ֆիզիոլոգիական ֆունկցիաների, օրգան-համակարգերի դրսևորման առանձնահատկությունները նորածնության, վաղմանկության, առաջին և երկրորդ մանկության, պատանեկության, հասունության և ծերության փուլերում,
3. կկարողանա հաջողությամբ դրսևորել իր իմացությունը իր մանկավարժական գործունեության ժամանակահատվածում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն, ֆիզիոլոգիա առարկայի խնդիրները, ուսումնասիրման մեթոդները և ճյուղերը: **Թեմա 2՝** Միտո-անոթային համակարգի գործունեության ֆիզիոլոգիան և նրա ընդհանուր ու տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Արյան ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան, իմունիտետի տեսակները և տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Շնչառության համակարգի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան: Շնչառության ֆիզիոլոգիայի նյարդային և հումորալ կարգավորումը: **Թեմա 5՝** Մարսողության համա-

կարգի ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները, նրա նյարդային և հոմոնորալ կարգավորումը: **Թեմա 6**՝ Նյութերի և էներգիայի փոխանակության ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: Օրգանական նյութերի և վիտամինների տարիքային նշանակությունը: **Թեմա 7**՝ Ջերմակարգավորման ֆիզիոլոգիան, քիմիական և ֆիզիկական ջերմակարգավորման ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 8**՝ Արտաթորության համակարգի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 9**՝ Ներզատական գեղձերի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 10**՝ Հենաշարժական համակարգի գործունեության ընդհանուր և տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 11**՝ Առալիզատորների (տեսողական, լսողական, համի, հոտառության, մաշկային) զարգացման տարիքային առանձնահատկությունների ֆիզիոլոգիան: **Թեմա 12**՝ Գլխուղեղի մեծ կիսագնդերի տարիքային ֆիզիոլոգիան: **Թեմա 13**՝ Առաջին և երկրորդ ազդարային համակարգերի ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիան: **Թեմա 14**՝ Բարձրագույն նյարդային գործունեության տիպերը և ձևավորման տարիքային առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Հարցերի միավորների քայլն է 0.5:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B10. «ՀՈՒԶԱԿԱՄԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել հույզերի ծագման, հույզերի մեկնաբանման տեսությունների, գործունեության և առօրյա փոխհարաբերություններում անձի կենսագործունեության վրա անդրադարձող առանձնահատուկ հոգեվիճակների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հույզերի վերաբերյալ տեսությունները, դրանց դասակարգումը,
2. կհասկանա օրգանիզմի և ընդհանուր ակտիվության վրա հույզերի ազդեցության օրինաչափությունները,
3. կկարողանա տարբերակել հույզերի բնույթը, ճանաչել արտաքին դրսևորման ձևերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հուզականային հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, դրվածքը: **Թեմա 2**՝ Հուզական երևույթների գործառույթները: **Թեմա 3**՝ Հուզական ոլորտի հիմնական տարրերը և նրանց ուսումնասիրությունը: **Թեմա 4**՝ Հուզական երևույթների դրսևորումները և դրանց ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 5**՝ Հուզական ոլորտի զարգացումը: **Թեմա 6**՝ Սոցիալական հուզական երևույթները: **Թեմա 7**՝ Զգացմունքներ և երջանկություն: **Թեմա 8**՝ Հույզերի սեռային պայմանավորվածությունը: **Թեմա 9**՝ Հուզական ոլորտում մշակութային գործոնները: **Թեմա 10**՝ Կամքի տեսություններ: **Թեմա 11**՝ Վարքի և գործունեության կամածին ղեկավարման հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները: **Թեմա 12**՝ Կամային կարգավորում և կամային ճիգեր (ինքնամոբիլիզացում):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B20. «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել հոգեբանական գաղափարների ընդհանուր տեսության մշակման երկարաձիգ ճանապարհը, սկսած հոգեկանի մասին առաջին գիտական պատկերացումներից մինչև ժամանակակից հոգեբանության վերջին նվաճումները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կրերի նոր գիտելիքներ հոգեկան իրականության վերաբերյալ,
2. կհասկանա գիտության տրամաբանությունը, որն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական իմաստ,
3. կկարողանա կատարել հոգեկանի մասին գիտական պատկերացումների համեմատական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանական գիտելիքների զարգացումը հոգու մասին ուսմունքի շրջանակներում: **Թեմա 2**՝ Հոգեբանության զարգացումը գիտակցության մասին փիլիսոփայական ուսմունքների շրջանակներում: **Թեմա 3**՝ Հոգեբանության՝ որպես գիտակցության մասին գիտության զարգացումը մինչ փորձարարական

հոգեբանության զարգացումը: **Թեմա 4՝** Բնագիտության զարգացումը և բնագիտական նախադրյալների ձևավորումը հոգեբանության՝ որպես գիտության առանձնացման համար: **Թեմա 5՝** Հոգեբանության առանձնացումը որպես առանձին գիտություն և նրա զարգացումը մինչև բաց ճգնաժամը (19-րդ դարի 60-ական թթ. և 20-րդ դարի 10-ական թթ.): **Թեմա 6՝** 20-րդ դարի 10–30-ական թթ. բաց ճգնաժամի շրջանի արտասահմանյան հոգեբանությունը: **Թեմա 7՝** Խորհրդային հոգեբանության ծագումն և զարգացումը: Ժամանակակից հոգեբանությունը Ռուսաստանում: **Թեմա 8՝** Արտասահմանյան հոգեբանության ժամանակակից դրույթները և զարգացման կարևորագույն միտումները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B25. «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԹԻԿԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ուսուցչի մանկավարժական վարպետությանը անձնային և մասնագիտական որակներին, մանկավարժական կուլտուրային, տակտին, հեղինակությանը, էթիկային, բարոյականությանը, էթիկայի չափորոշիչներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ուսուցչի մանկավարժական վարպետության էությունը, տեխնիկան, տակտը և հեղինակությունը, էթիկան,
2. կհասկանա վարպետության և էթիկայի տարբերությունները, առանձնահատկությունները,
3. կկարողանա գործնականում կիրառել դասի ընթացքում յուրացրած վարպետությունը, տեխնիկան և հմտությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ուսուցչի մասնագիտական գործունեությունը: Նշանավոր մանկավարժները ուսուցչի մասին: Ուսուցչի մասնագիտական զարգացման փուլերը, նրան ներկայացվող մանկավարժական պահանջները: Ուսուցչի մանկավարժական վարպետության էությունը, մասնագիտական առանձնահատկություններն ու ընդունակությունները: Ուսուցչի պրոֆեսիոգրաման և պսիխոգրաման: Նրա

անձնային որակները: Ուսուցչի տեխնիկան, տակտը և վարպետությունը: **Թեմա 2՝** Բարոյագիտությունը որպես մանկավարժական էթիկայի հիմք: Մանկավարժական էթիկայի հասկացությունները: Բարոյականությունը որպես հասարակական գիտակցության ձև: **Թեմա 3՝** Բարոյականության ազգային և համամարդկային արժեհամակարգերը: Ուսուցչի էթիկայի հիմնական բաղադրիչները: Մանկավարժական էթիկայի բովանդակություն, արդի չափորոշիչներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Փոքրածավալ գրավոր /ստուգողական աշխատանք/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0301/B47. «ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է բարձրացնել ուսանողի մտածական որակները, զարգացնել վերլուծական մտածողություն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մտքի կառուցվածքը, այն տրամաբանական կանոններն ու օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունը և հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը,
2. կհասկանա տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,
3. կկարողանա տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով բարձրացնել իմացական գործընթացների և հատկապես գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տրամաբանության առարկան և նշանակությունը: **Թեմա 2՝** Լեզվի տրամաբանական վերլուծությունը: **Թեմա 3՝** Հասկացողությունը որպես տրամաբանական ձև և հասկացության ընդհանուր բնութագրությունը: **Թեմա 4՝** Դատողություն: **Թեմա 5՝** Մտածողության ձևական տրամաբանական հիմնական օրենքները: **Թեմա 6՝** Դեդուկտիվ մտահանգում: Մտահանգման ընդհանուր բնութագիրը: **Թեմա 7՝** Ինդուկտիվ մտահանգումներ: **Թեմա 8՝** Փաստարկման տրամաբանական հիմունքներ: **Թեմա 9՝** Տրամաբանական սխալներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0303/B11. «ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԻՊԱԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

(6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (18 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելիքներ անհատական տարբերությունների /խառնվածք, բնավորություն, ընդունակություններ/ հոգեբանության արդի հիմնախնդիրների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անհատական առանձնահատկությունների դասակարգման չափանիշները,
2. կհասկանա խառնվածքի, բնավորության և ընդունակությունների զարգացման մեխանիզմները և օրինաչափությունները,
3. կկարողանա վերլուծել անհատական տիպոլոգիական առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց ձևավորման նախադրյալները և պայմանները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մարդու անհատականությունը գիտական ուսումնասիրության օբյեկտ հոգեբանության մեջ: **Թեմա 2՝** Անհատական տարբերությունների զարգացման աղբյուրները: **Թեմա 3՝** Անհատական առանձնահատկությունները, կիսագնդերի ասիմետրիան և խառնվածքը: **Թեմա 4՝** Բնավորության հոգեբանություն: **Թեմա 5՝** Ընդունակությունների հոգեբանություն: **Թեմա 6՝** Տիպաբանական մոտեցումները անձի և բնավորության ուսումնասիրության նկատմամբ: **Թեմա 7՝** Անձի հատկանիշների հոգեբանություն: **Թեմա 8՝** Սեռի հոգեբանություն: **Թեմա 9՝** Մասնագիտական անհատական առանձնահատկությունները: **Թեմա 10՝** Հաղորդակցման անհատական տիպաբանական առանձնահատկությունները: **Թեմա 11՝** Գործունեության և վարքի անհատական տիպաբանական առանձնահատկությունները: **Թեմա 12՝** Բարոյական գիտակցության անհատական տիպաբանության առանձնահատկությունները: **Թեմա 13՝** Անհատականության ոճային առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B15. «SUI-ԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6,5 ժամ (21 ժամ դասախոսություն, 5 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել մարդու նկատմամբ անալիտիկ մոտեցում հոգեբանական տարիքի ըմբռնման տեսանկյունից, տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական օգնության արդյունավետ ձևերի կազմակերպմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անձի զարգացման տարիքային առանձնահատկությունները,
2. կկարողանա լուծել պրոբլեմային իրադրությունները՝ կիրառելով տարիքային հոգեբանական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տարիքային հոգեբանության ընդհանուր հարցեր: **Թեմա 2՝** Հոգեկան զարգացման պայմաններն ու շարժիչ ուժերը: **Թեմա 3՝** Հոգեկան զարգացման պարբերացման հիմնախնդիրները: **Թեմա 4՝** Հոգեկան զարգացման առանձնահատկությունները մինչծննդյան /պրենատալ/ և մանկիկության /նորածնություն, բուն մանկիկություն/ շրջաններում: **Թեմա 5՝** Հոգեկան զարգացման առանձնահատկությունները վաղ տարիքում: Անձնային ոլորտի զարգացում: **Թեմա 6՝** Նախադպրոցականի հոգեկան զարգացումն ու անձնավորության ձևավորումը: **Թեմա 7՝** Դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրը: **Թեմա 8՝** Հոգեկան զարգացումն ու անձնավորության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 9՝** Անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության շրջանում: **Թեմա 10՝** Անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները պատանեկան շրջանում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B16. «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմներին և օրինաչափություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2՝** Ուսումնական գործունեության կառուցվածքը: **Թեմա 3՝** Մանկավարժական հոգեբանության մեթոդները: **Թեմա 4՝** Մանկավարժի անձնային որակները և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: **Թեմա 5՝** Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: **Թեմա 6՝** Մանկավարժական կարողություններ և հմտություններ: **Թեմա 7՝** Մանկավարժական գործունեության կառուցվածքը: **Թեմա 8՝** Դաստիարակության հոգեբանություն: **Թեմա 9՝** Կրթության հոգեբանություն: **Թեմա 10՝** Ուսուցման հոգեբանություն: **Թեմա 11՝** Ուսուցչի անձի հոգեբանություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B30. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդուն՝ որպես սոցիալական միջավայրի արդյունք և մանրամասն ուսումնասիրել երեխային տարբեր սոցիալական միջավայրում, հետազոտել սոցիալականացման հասարակական և մանկավարժական նշանակությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա սոցիալական մանկավարժության գիտահետազոտական հիմունքները,
2. մարդու սոցիալականացման առանձնահատկությունները,
3. սոցիալական շեղումների մանկավարժական վերլուծությունը,
4. սոցիալական մանկավարժի գործունեության գործնական կիրառությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սոցիալական մանկավարժության գիտատեսական հիմունքներ:
Թեմա 2՝ Սոցիալական մանկավարժության հիմնական սկզբունքները: **Թեմա 3՝** Սոցիալ-մանկավարժական գործընթաց և նրա կատարելագործման ուղիները:
Թեմա 4՝ Անձի սոցիալական զարգացումը: **Թեմա 5՝** Երեխայի սոցիալական զարգացման մեխանիզմները և շարժիչ ուժերը: **Թեմա 6՝** Գործունեությունը և սոցիալ-մանկավարժական հնարավորությունները: **Թեմա 7՝** Մարդու աղապտացիան, դեգաղապտացիան և ռեաղապտացիան: **Թեմա 8՝** Սոցիալական դաստիարակություն, էությունը և բովանդակությունը: **Թեմա 9՝** Երեխաների զարգացման և դաստիարակության ընթացքում առաջացած սոցիալական շեղումները: **Թեմա 10՝** Սոցիալական շեղումներ, առաջացման պատճառները, հաղթա-հարման ուղիները: **Թեմա 11՝** Դժվար դաստիարակվող երեխաներ, էությունը, առաջացման պատճառները: **Թեմա 12՝** Միջավայրը և անձի ձևավորումը: **Թեմա 13՝** Փողոցը որպես դաստիարակության միջավայր: **Թեմա 14՝** Դժվար իրավիճակներում գտնվող երեխաների կառուցվածքը: **Թեմա 15՝** Պենիտենցիալ հաստատությունների աշխատանքների դաստիարակչական խնդիրները: **Թեմա 16՝** Սոցիալական աշխատակցի մասնագիտական գործունեությունը և անձի դեֆորմացիա: **Թեմա 17՝** Սոցիալական աշխատակցի մանկավարժական վարպետությունը և աշխատանքի կազմակերպման ձևերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /թեստ/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0303/B12. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 8 ժամ (21 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել աշխատանքի և կառավարման հոգեբանության հիմնական խնդիրներին, քննարկել աշխատանքային և կառավարման գործունեության հոգեբանական առանձնահատկությունները և դրանց կապը տարբեր գործոնների հետ, վերլուծել կառավարիչի անձի հոգեբանական կերպարը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա աշխատանքային և կառավարման հոգեբանության առարկայի խնդրացանկը,
2. ծանոթ կլիմի աշխատանքի ընթացքում մարդու հոգեբանական առանձնահատկություններին և դրանց ազդեցությանը աշխատանքի իրականացման վրա, ծանոթ կլիմի կառավարման ոճերին և ռազմավարություններին,
3. կկարողանա կազմել պսիխոգրամաներ և պրոֆեսիոգրամաներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աշխատանքի հոգեբանության առարկան, խնդիրները, տեսությունները, հետազոտության մեթոդները: **Թեմա 2՝** Մասնագիտական գործունեություն: **Թեմա 3՝** Անձի իմացական, անհատական հոգեբանական առանձնահատկությունների հաշվառումը աշխատանքային գործունեության մեջ: **Թեմա 4՝** Բացասական հոգեվիճակները և անձի ադապտացիայի ոճերը աշխատանքային գործունեության մեջ: **Թեմա 5՝** Մասնագիտության ընտրություն, մասնագիտական կողմնորոշում: **Թեմա 6՝** Սոցիալ-աշխատանքային վերականգնման հոգեբանական խնդիրները: **Թեմա 7՝** Կառավարման հոգեբանության առարկան, խնդիրները, տեսությունները, ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 8՝** Կառավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները: **Թեմա 9՝** Կառավարման ոճերը, իշխանության տեսակները: **Թեմա 10՝** Մարդկային փոխհարաբերությունները կառավարման համակարգում: Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցություն: **Թեմա 11՝** Կոնֆլիկտները կառավարման համակարգում, հաղթահարման ուղիները: **Թեմա 12՝** Որոշումների ընդունումը ղեկավարի կողմից և նրա հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 13՝** Կառավարում և ինքնակառավարում, կառավարման դժվարությունները և դրանց հաղթահարման հոգեբանական ուղիները: Կառավարման պրոֆեսիոգրամա և պսիխոգրամա:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0303/Յ19. «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնելու արդի ուսուցման հոգեբանության հիմունքներին, հիմնական տեսություններին, որոնք ընկած են դպրոցում և բուհում դասավանդման կազմակերպման հիմքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա ուսուցման հոգեբանության հիմնական տեսությունները,
2. կհասկանա դպրոցում և բուհում ուսուցման կազմակերպման հիմնական եղանակները, դրանց հոգեբանական յուրահատկությունները,
3. կտիրապետի հոգեբանության տարբեր բնագավառների դասավանդման պահանջներին և հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանության դասավանդման մեթոդիկա առարկան, նպատակը, խնդիրները, մեթոդները: **Թեմա 2՝** Ժամանակակից հոգեբանական կրթությունը: **Թեմա 3՝** Հանրակրթական ծրագրեր և հոգեբանության դասավանդումը: **Թեմա 4՝** Ուսուցման հոգեբանության հիմնական տեսությունները: **Թեմա 5՝** Ակտիվ դասավանդման մեթոդները: **Թեմա 6՝** Ուսուցման կազմակերպումը և հոգեբանության ուսուցման տեսակները: **Թեմա 7՝** Հոգեբանության առարկաների դասավանդման իմացության ստուգումն ու գնահատումը: **Թեմա 8՝** Ուսուցիչը որպես ուղղորդող:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0303/Յ27. «ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ստեղծագործական գործընթացի օրինաչափությունների, ստեղծագործական մտածողության, ստեղծագործության հոգեբանական տերմինոլոգիայի, ստեղծագործ անձի որակների, ստեղծագործականության /կրեատիվության/ հետ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա և հնարավորություն ձեռք կբերի ուսումնասիրել ստեղծագործության մեխանիզմներն ու հիմքերը, մոտիվացիան,
2. ծանոթ կլինի ստեղծագործության հոգեբանական և վերլուծության ձևերին,
3. կկարողանա հասկանալ, թե ինչպես կարելի է ներդաշնակորեն զարգացնել երեխաներին, սեփական հոգևոր կայացման ուղին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ստեղծագործական հոգեբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2՝** Հոգեկան երևույթների ստեղծագործական բնույթը: **Թեմա 3՝** Ստեղծագործությունը որպես անձի գործունեություն: **Թեմա 4՝** Ստեղծագործողի անձի հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Արվեստը որպես կատարսիս: **Թեմա 6՝** Անձի ստեղծագործական ընդունակությունների ձևավորման մեթոդաբանություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B28. «ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գիտական մանկավարժության կրթական համակարգի ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին և դրանց կառավարման առանձնահատկությունների հետ, ցույց տալ նրա գիտական հարացույցերը, տեղն ու դերը ժամանակակից մանկավարժության գիտության համակարգում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կրթական համակարգի կառուցվածքը, զարգացման փուլերը, հիմնական հասկացությունները, կառավարման դերը նոր հասարակական գիտությունների համակարգը, ՀՀ կրթության համակարգի արդի բարեփոխումները.
2. կհասկանա կրթության համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, դպրոցավարման ժամանակակից եղանակները, ձևերը, մեթոդները.
3. կկարողանա տիրապետել մանկավարժական կոլեկտիվի արդյունավետ կառավարման մեխանիզմներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կրթական համակարգի կառուցվածքը, զարգացման փուլերը, էությունը, կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդները: **Թեմա 2՝** Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական տեսանկյունները, գիտական դրույթները: **Թեմա 3՝** Նախադպրոցական կառույցի և ներդպրոցական կառավարման առանձնահատկությունները, գործառույթները, սկզբունքները և մեթոդները: **Թեմա 4՝** Դպրոցի կառավարման իրավական և տնտեսական հիմքերը:

Թեմա 5՝ Դպրոցի զարգացման կառավարում, նորամուծություններ, ինովացիաներ: **Թեմա 6՝** Բարեփոխումները բարձրագույն դպրոցում, նրա կառավարման առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Փոքրածավալ գրավոր /թեստ/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր կարճ հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0303/B33. «ԽԱՂԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (10 ժամ դասախոսություն, 5 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել խաղի հոգեբանության տեսական և գործնական դրույթներին, որը հետագայում կօգնի աշխատել մանկական և ընտանեկան հոգեթերապիայի և խորհրդատվության ոլորտում, դպրոցներում և այլ մանկական հիմնարկներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի մանկական հիմնահարցի սոցիալական և հոգեբանական կողմերին,
2. կընդլայնի իր ուսուցման տեսական-մեթոդաբանական հիմքերը,
3. կկարողանա կիրառել խաղային թերապիայի տեխնիկաները հոգեթերապիայի, հոգեկորեկցիոն և հոգեկանխարգելիչ նպատակներով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Խաղի հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները: **Թեմա 2՝** Խաղային գործունեության վերաբերյալ տարբեր հոգեբանական դպրոցների մոտեցումները: **Թեմա 3՝** Ֆունկցիոնալ խաղեր, հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Միմվոլային խաղերի հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Խաղային գործունեության ձևավորումը 2-4 տարեկան հասակում: **Թեմա 6՝** Դերա-սյուժետային խաղերի ձևավորման հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 7՝** Դիդակտիկ խաղերի ձևավորման հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 8՝** Ստեղծագործական խաղեր, հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 9՝** Համակարգչային խաղերի տեսակները, հոգեբանական ազդեցությունը տարբեր տարիքային խմբերի վրա: **Թեմա 10՝** Խաղային հոգեթերապիա:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0303/B13. «ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (30 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոմատիկ և հոգեկան հիվանդի հոգեբանության օրինաչափություններին, հոգեկան առողջությունը չափորոշող գործոններին, հոգեբանորեն «գրագետ» մտածելու զգալու և գործելու ձևերին, հիվանդությունները, խանգարումները, շեշտվածությունները կանխարգելելու հնարավորություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեկան առողջության տեսական և գործնական հիմնահարցերը,
2. ծանոթ կլինի հոգեկան որոշ խանգարումների կանխարգելման ճանապարհներին,
3. կհասկանա իր անձի և իր օգնությանը դիմող անձանց հոգեկան առողջությանը վերաբերող խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բժշկական հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության առարկան: **Թեմա 2՝** Բժշկական հոգեբանության կայացման տեսական հիմքերը: **Թեմա 3՝** Ֆրոյդիզմի դերը բժշկական հոգեբանության համար: **Թեմա 4՝** Հոգեկան գործունեության առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Հոգեկան ֆունկցիաների ախտաբանական փոփոխությունները: **Թեմա 6՝** Հոգեմարմնական և մարմնահոգեկան փոխազդեցությունները և հիվանդությունը: **Թեմա 7՝** Հիվանդության արտաքին և ներքին նկարագիր, հիվանդության գիտակցում: **Թեմա 8՝** Բժշկական դեոնտոլոգիա: **Թեմա 9՝** Հոգեհիգիենա, հոգեպրոֆիլակտիկա: **Թեմա 10՝** Հոգեծին հիվանդություններ: **Թեմա 11՝** Հոգեթերապիայի հիմունքները: **Թեմա 12՝** Մարմնական հիվանդի վարքագծային ռեակցիայի տիպերը: **Թեմա 13՝** Անձի ռեակցիայի տիպերը հիվանդության նկատմամբ ըստ Լիչկո-Իվանովի: **Թեմա 14՝** Հոգեմարմնական հիվանդություններ: **Թեմա 15՝** Ներքին հիվանդությունների բժշկահոգեբանական ասպեկտները: **Թեմա 16՝** Հոգեբանական գործոնների դերը վիրաբուժական պրակտիկայում: **Թեմա 17՝** Օնկոլոգիական հիվանդի հոգեբանություն: Կանցերոֆոբիա: **Թեմա 18՝** Հղի կնոջ հոգեբանություն: **Թեմա 19՝** Հիվանդ երեխայի հոգեբանության առանձնահատկությունները: **Թեմա 20՝** Հիվանդի հոգեբանության առանձնահատկություններն ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ: ՋԻԱՀ և հոգեբանություն: **Թեմա 21՝** Զգայարանների արատներով մարդկանց հոգեբանություն: **Թեմա 22՝** Անձի հոգեբանական ռեակցիաները դեմքի վնասվածքների ժամանակ: **Թեմա 23՝**

Հիվանդի հոգեբանական ռեակցիաները մաշկային ախտահարումների և մանկական ուղեղային կաթվածի ժամանակ: **Թեմա 24՝** Օլիգոֆրենիայի բժշկահոգեբանական ասպեկտները: **Թեմա 25՝** Հոգեկան առողջության հիմնախնդիրները: **Թեմա 26՝** Ալկոհոլիզմ և բժշկական հոգեբանություն: **Թեմա 27՝** Ծերության հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 28՝** Շիզոֆրենիայի ժա-մանակ առաջացող հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 29՝** Էպիլեպսիայի հոգեբանական հիմնախնդիրները: **Թեմա 30՝** Հոգեբանական բաղադրիչի դերը բժշկական փորձաքննության կառուցվածքում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B14. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել գիտելիքներ ներխուժային փոխհարաբերությունների, շփման ու հաղորդակցման առանձնահատկությունների, վարքի, անձի բարոյական զարգացման, մտավոր հասունացման հետ նրա ունեցած կապերի և մի շարք այլ երևույթների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա սոցիալական հոգեբանության հիմնական խնդրացանկը,
2. ծանոթ կլինի խմբային դինամիկայի օրինաչափություններին,
3. կկարողանա բացահայտել սոցիալ-հոգեբանական երևույթները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սոցիալ-հոգեբանական գաղափարների ձևավորման պատմությունը: **Թեմա 2՝** Շփման սոցիալ-հոգեբանական բնութագիրը: **Թեմա 3՝** Միջանձնային շփում, դրա տեսակները և գործառույթները: **Թեմա 4՝** Մարդկային հաղորդակցման առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Շփման գործընթացում մարդկանց կողմից միմյանց ճանաչումը և հասկացումը: **Թեմա 6՝** Փոխներգործությունը շփման գործընթացում: **Թեմա 7՝** Խմբի սոցիալական հոգեբանություն: **Թեմա 8՝** Ընդհանուր գաղափար սոցիալական խմբի վերաբերյալ: Սոցիալական խմբերի դասակարգումը: Սոցիալական մեծ խմբերի հոգեբանության ուսումնասիրման սկզբունքները: **Թեմա 9՝** Փոքր խմբի սոցիալական հոգեբանությունը,

կառուցվածքային բնութագրերը: **Թեմա 10՝** Փոքր խմբի սոցիալական հոգեբանությունը, դինամիկ բնութագրերը: **Թեմա 11՝** Անձի սոցիալական հոգեբանություն: **Թեմա 12՝** Անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը: **Թեմա 13՝** Մարդու վարքի սոցիալ-հոգեբանական կարգավորիչները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

0303/B31. «ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 8 ժամ (21 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ազգային և ընտանեկան հոգեբանության խնդիրների պարզաբանմանն ուղղված հիմնական մոտեցումները, ներկայացնել ընտանիքի ֆունկցիաները, պարզաբանել ընտանիքում փոխհարաբերությունների հոգեբանական հիմքերն ու օրինաչափությունները, կոնֆլիկտները, դրանց ախտորոշման ձևերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ազգային և ընտանեկան հոգեբանության հիմնական խնդրացանկը,
2. ծանոթ կլինի էթնիկական խմբերի դինամիկայի օրինաչափություններին,
3. կկարողանա դուրս բերել միջէթնիկական փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների առանձնահատկությունները,
4. կհասկանա ընտանիքում ընթացող հոգեբանական գործընթացների տրամաբանությունը,
5. կկարողանա ախտորոշել հակասություններ առաջացնող իրավիճակները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ազգային հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2՝** Էթնիկական խմբերի ձևավորման նախադրյալները և հիմնական հատկանիշները: **Թեմա 3՝** Էթնոսի մշակույթը և ինքնապաշտպանության խնդիրները: **Թեմա 4՝** Էթնոպաշտպան հոգեբանական մեխանիզմները և բարդույթները: **Թեմա 5՝** Միջէթնիկ փոխհարաբերություններ և պաշտպանական բարդույթներ: **Թեմա 6՝** Էթնիկական /ազգային/ սիմվոլներ: **Թեմա 7՝** Էթնիկական հոգեկերտվածք և մտածելակերպ: **Թեմա 8՝** Ազգային /էթնիկական/ բնավորություն: **Թեմա 9՝** Հոգևոր ճգնաժամ և էթնովարքագիծ: **Թեմա 10՝** Էթնոհոգեբանական հարմարվողականություն և ձուլում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B32. «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել արտակարգ իրավիճակների՝ դրանցում առաջացող հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի վերաբերյալ տեսական գիտելիքներին, ձևավորել պրակտիկ հմտություններ արտակարգ իրավիճակներում անհատական և խմբային աշխատանքների համար, մեկնաբանել հոգեկարգավորման առարկայի տեսական և գործնական հարցերը, քննարկել տարբեր դպրոցների, հեղինակների, տարբեր տեխնիկաների վերլուծության հիմնահարցերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կիրառվող տեխնիկաների սկզբնաղբյուրները, գործնական պարապմունքների կազմակերպմանը ներկայացվող պահանջները,
2. ծանոթ կլինի կանխարգելման, հոգեշտկման և վերականգնողական աշխատանքի տեխնիկաներին,
3. կկարողանա ինքնուրույն կազմել անհատական և խմբային հոգեբանական աշխատանքի ծրագրեր,
4. կիմանա արտակարգ իրավիճակների հոգեբանական օրինաչափությունները,
5. ծանոթ կլինի արտակարգ իրավիճակներում հոգեկանում տեղի ունեցող փոփոխություններին,
6. կկարողանա կիրառել հոգեկորեկցիոն, հոգեվերականգնողական տեխնիկաներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արտակարգ իրավիճակների հոգեբանության առարկան: **Թեմա 2՝** ՀՀ-ում աղետների կանխարգելման և փրկարարական ծառայությունների կառուցվածքը, գործառնությունները: **Թեմա 3՝** Արտակարգ իրավիճակների բնութագրերը, դասակարգումը: **Թեմա 4՝** Արտակարգ իրավիճակներում կենսագործունեության պահպանման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Թեմա 5՝ Արտակարգ իրավիճակներում անձի հոգեկան գործառույթների դրսև-վորման առանձնահատկությունները: **Թեմա 6՝** Արտակարգ իրավիճակներում անձի սոցիալ-հոգեբանական յուրահատուկ դրսևորումները: **Թեմա 7՝** Հետ-վնասվածքային հոգեվիճակների դրսևորման հոգեբանական առանձնահատ-կությունները: **Թեմա 8՝** Արտակարգ իրավիճակներում վերականգնողական գոր-ծընթացի գիտա-գործնական հիմնադրույթների կիրառման ռազմավարությունը: **Թեմա 9՝** Արտակարգ իրավիճակներում անձի հուզական ոլորտի հետազոտման մեթոդները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Անհատական առաջադրանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք: Միավորների քայլը 0.5 է:

0303/B34. «ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապ-մունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեթերապիայի հիմնական նպատակներին և խնդիրներին, հիմնավորել տարբեր հոգեթերապև-տիկ մոտեցումների նպատակահարմարությունը, տարբեր նպատակի հոգեբա-նական կորեկցիաների ժամանակ, բացատրել նրա նշանակությունը սոմատիկ և նեյրոհոգեկան ախտահարումների բուժման համալիրում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեթերապևտիկ մոտեցումների յուրահատկությունների, օգտա-գործման բնագավառների, ակնկալիք արդյունքների մասին,
2. կհասկանա հոգեթերապևտիկ միջոցառումների տրամաբանությունը և նպա-տակահարմարությունը՝ կապված հիվանդի անձի յուրահատկությունների և հիվանդության բնույթի հետ,
3. կկարողանա կիրառել հոգեթերապևտիկ տարբեր մեթոդներ տարբեր հիվան-դագին պրոցեսների ժամանակ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեթերապիայի առարկան, տեսական հիմունքները, ուսումնա-սիրության մեթոդները, դասակարգումը: **Թեմա 2՝** Հոգեդինամիկական ուղղույթ-յունը հոգեթերապիայում: **Թեմա 3՝** Վարքագծային հոգեթերապիա: **Թեմա 4՝** Էկ-զիստենցիալ-հումանիստական հոգեթերապիա: **Թեմա 5՝** Խմբային հոգեթերա-պիա: **Թեմա 6՝** Անձնային-կողմնորոշված հոգեթերապիա: **Թեմա 7՝** Ռացիոնալ հոգեթերապիա: **Թեմա 8՝** Սուգեստիվ հոգեթերապիա: Հիպնոհոգեթերապիա: **Թեմա 9՝** Նարկոհոգեթերապիա: Հոգեթերապիա ստրեսի ֆոնի վրա: **Թեմա 10՝**

Ինքնաներշնչում: Աուտոտրենինգ: **Թեմա 11՝** Վարքագծային հոգեթերապիայի մեթոդներ: **Թեմա 12՝** Խոսակցական հոգեթերապիա: Տրանսակտային անալիզ: **Թեմա 13՝** Գեշտալտ-թերապիա: **Թեմա 14՝** Հոգեթերապիայի կիրառումը մարմնական հիվանդությունների բուժման համալիրում: **Թեմա 15՝** Հոգեթերապիայի կիրառման սկզբունքները և ցուցումները մանկաբարձության և մանկաբուժության մեջ: **Թեմա 16՝** Հոգեթերապիայի կիրառումը ներոգների ժամանակ: **Թեմա 17՝** Հոգեթերապիայի կիրառումը հոգեկան հիվանդությունների և ալկոհոլիզմի ժամանակ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B26. «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել համաշխարհային մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, հայ մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, կրթության բովանդակությանը, ուսուցման հիմնական օրենքների, օրինաչափությունների, մեթոդների, սկզբունքների զարգացման պատմությանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժական մտքի զարգացման պատմությունը արտասահմանյան երկրներում,
2. կհասկանա հայ մանկավարժական մտքի զարգացման պատմության առանձնահատկությունները,
3. կկարողանա տարբերակել արտասահմանյան և հայ մանկավարժության պատմության տարբերություններն ու նմանությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դաստիարակության ծագումը: **Թեմա 2՝** Դաստիարակությունը Հին Հռոմում: **Թեմա 3՝** Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարում: **Թեմա 4՝** Վերածննդի դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 5՝** Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 6՝** Նոր շրջանի ռուսական

դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 7** Մանկավարժական միտքն ու դաստիարակությունը մինչմեսրոպյան հայագիր դպրոցը: **Թեմա 8** Դպրոցն ու դաստիարակությունը 5–11-րդ դարերում: **Թեմա 9** Հայկական Վերածննդի դպրոցն ու մանկավարժական միտքը (10-րդ դարավերջից մինչև 12-րդ դարասկիզբ): **Թեմա 10** Դպրոցն ու մանկավարժական միտքը 12-րդ դարից 18-րդ դարերում: **Թեմա 11** Նոր շրջանի հայ դպրոցն ու մանկավարժական միտքը (19-րդ դար): **Թեմա 12** Մանկավարժական միտքն ու դպրոցը հայ գաղթօջախներում և սփյուռքում: **Թեմա 13** Խորհրդային դպրոցի ձևավորումը և ժամանակակից հայ մանկավարժները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B17. «ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՏԵԽՆԻԿԱՆԵՐ»

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 8 ժամ (16 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տեղեկություններ հաղորդել հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հոգեբանական ծառայության հաջողակ գործունեության ժամանակակից մոդելներին,
2. կկարողանա կատարել հոգեկարգավորիչ և կանխարգելիչ աշխատանքներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանական ծառայության նպատակը, խնդիրները, տեսակը, կառուցվածքը: Հոգեճանաչումը հոգեբանական ծառայության կառուցվածքում: Հոգեբանական ծառայության տեսակները: **Թեմա 2**՝ Ընդհանուր գաղափար հոգեբանական խորհրդատվության վերաբերյալ: **Թեմա 3**՝ Հոգեբանական խորհրդատվության տեխնիկան: **Թեմա 4**՝ Հոգեբանական շտկում և կանխարգելում: Հոգեկարգավորում և հոգեբանական վերականգնում: **Թեմա 5**՝ Հոգեբան-խորհրդատուին ներկայացվող պահանջները: **Թեմա 6**՝ Հոգեբանական օգնության կազմակերպման փուլերը: **Թեմա 7**՝ Հոգեբանական ծառայության կազմակերպում: Անհատական աշխատանքի ուղղվածությունը: Խմբային աշխատանքների առա-

վելությունները: Հոգեբանական ծառայության կազմակերպման դժվարությունները: **Թեմա 8**՝ Հոգեբանական ծառայության խնդիրները, կառուցվածքը և գործառնությունները կրթության համակարգում: Կրթության համակարգում հոգեբանական ծառայության ստեղծման անհրաժեշտությունը, նրա հիմնական նպատակները: Հոգեբանական ծառայության կառուցվածքը: **Թեմա 9**՝ Հոգեբանական ծառայության վիճակը և զարգացման միտումները կրթության համակարգում: **Թեմա 10**՝ Երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը հոգեբանական ծառայության կազմակերպման ընթացքում: **Թեմա 11**՝ Մանկավարժների հետ իրականացվող հոգեբանական ծառայության պահանջները: **Թեմա 12**՝ Հոգեբանական ծառայության կազմակերպումը հատուկ ուսումնական հաստատություններում (մանկական գաղութի, մանկատան և հատուկ կարիքներով երեխաներ):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B18. «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»

(8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին, հոգեբանության տարբեր ուղղություններում նորագույն ուսումնասիրություններին և հետազոտություններին, ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրների գիտական բացատրությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ժամանակակից հիմնական տեսական մոտեցումները,
2. կհասկանա ժամանակակից հոգեբանության ծագումնաբանական հիմնական խնդիրները,
3. կկարողանա ճիշտ մեկնաբանել և վերլուծել հոգեբանության ժամանակակից օրինաչափությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները: Ներածություն: **Թեմա 2՝** Ժամանակակից հոգեբանության մեթոդաբանական հիմնախնդիրները: **Թեմա 3՝** Ժամանակակից հոգեբանության ճգնաժամը: **Թեմա 4՝** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ ըստ հոգեբանության հիմնական բնագավառների: **Թեմա 5՝** Անձի հոգեբանության ժամանակակից հիմնահարցերը: **Թեմա 6՝** Սոցիալական հոգեբանության ժամանակակից հիմնահարցերը: **Թեմա 7՝** Հոգեբանական ներգործության և կառավարման հոգեբանության, արտակարգ իրավիճակների հոգեբանության արդի հիմնահարցերը: **Թեմա 8՝** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ հոգեբանության հիմնական ուղղություններում: **Թեմա 9՝** Ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրները՝ հոգեբանության նորագույն ուղղություններում: **Թեմա 10՝** Հետխորհրդային շրջանի հոգեբանության հարցեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0303/B29. «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 10-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության գիտության ժամանակակից հիմնախնդիրները, նրա զարգացումը՝ գիտական հարացույցերի հիմքի վրա և ցույց տալ մանկավարժության գիտության տեղն ու դերը ժամանակակից գիտության ասպարեզում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժության ժամանակակից տեսությունները, արդի ուղղությունները, ուսուցման և դաստիարակության դերը անձի ձևավորման և զարգացման գործընթացում,
2. կհասկանա ուսուցման և դաստիարակության կազմակերպման նոր ձևերն ու մեթոդները, կրթության կառավարման հիմնահարցերը,
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ժամանակակից մանկավարժության առարկայի նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 2՝** Մանկավարժության գիտության զարգացման պատմությունը: **Թեմա 3՝** Ժամանակակից մանկավարժության գիտության կոնցեպցիաները: **Թեմա 4՝** Ժամանակակից կրթության փիլիսոփայությունը: **Թեմա 5՝** Կրթության գլոբալացում և ինտեգրացում: **Թեմա 6՝** Ժամանակակից համաշխարհային կրթական համակարգ, դաշտ, միջավայր: **Թեմա 7՝** Կրթական որակի կառավարման և բարձրացման հիմնական դրույթները: **Թեմա 8՝** Մանկավարժության գիտության մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 9՝** Դիդակտիկայի ինովացիաները կրթության պատմության ասպարեզում: **Թեմա 10՝** Դաստիարակության խնդիրները, էությունը, տեխնոլոգիաները: **Թեմա 11՝** Մանկավարժական գիտության ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, խընդիրները: **Թեմա 12՝** Մանկավարժական կադրերին ներկայացվող արդի պահանջները: **Թեմա 13՝** Մանկավարժական հաղորդակցում, դպրոց-ընտանիք-հասարակություն համագործակցությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

4.3.1. Կասընտրական դասընթացներ

0303/B37. «ԿՈՆՏԼԻԿՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել կոնֆլիկտաբանության առարկային, խնդիրներին, քննարկել կոնֆլիկտի ֆենոմենը ներանձնային, միջանձնային, միջխմբային մակարդակներում, փորձել տալ դրանց լուծման ձևեր և եղանակներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կոնֆլիկտի առաջացման ու ընթացքի օրինաչափությունները,
2. ծանոթ կլինի կոնֆլիկտը դիտարկող հիմնական տեսություններին,
3. կկարողանա հոգեբանորեն վերլուծել կոնֆլիկտային իրադրությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Կոնֆլիկտ հասկացությունը և դրանց տիպաբանությունը: **Թեմա 3՝** Կոնֆլիկտի կառուցվածքը և դինամիկան: **Թեմա 4՝** Ներանձնային կոնֆլիկտ: **Թեմա 5՝** Միջանձնային կոնֆլիկտներ: **Թեմա 6՝** Կոնֆլիկտները կազմակերպություններում: **Թեմա 7՝** Միջխմբային կոնֆլիկտ: **Թեմա 8՝** Կոնֆլիկտների կանխարգելումը և հանգուցալուծումը: **Թեմա 9՝** Բանակցությունները որպես կոնֆլիկտների հանգուցալուծման եղանակ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 8 միավոր առավելագույն արժեքով:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր (ստուգողական աշխատանք): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 1 է:

0303/B38. «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապ-մունք-ներ)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել իրավաբանական հոգեբանության առարկան, խնդիրները, քննարկել իրավաբանական տարբեր կառույցների հոգեբանական յուրահատկությունները, տալ անչափահասների հոգեբանական բնութագիրը և հանցագործության դրդապատճառները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա իրավաբանական հոգեբանության հիմնական խնդրացանկը,
2. կկարողանա վերլուծել հանցագործության կատարման դրդապատճառները, հիմնավորել դրանց հոգեբանական դետերմինացիան անչափահասների մոտ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Իրավաբանական հոգեբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2՝** Իրավաբանական պրոֆեսիոգրամաներ և պսիխոգրամաներ: **Թեմա 3՝** Հարցաքննության հոգեբանություն: **Թեմա 4՝** Հանցավորության հոգեբանություն: **Թեմա 5՝** Հանցագործ անձի հոգեբանություն: **Թեմա 6՝** Նորմերը որպես սոցիալական վարքի կարգավորիչներ: **Թեմա 7՝** Անչափահաս հանցագործ անձի հոգեբանություն: **Թեմա 8՝** Հանցագործ խմբերի հոգեբանություն: **Թեմա 9՝** Դատափոխադրական փորձաքննություն: **Թեմա 10՝** Բացասական հոգեկան վիճակների հոգեբանա-իրավական գնահատականը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 8 միավոր առավելագույն արժեքով:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր (ստուգողական աշխատանք): Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Անհատական առաջադրանք (ռեֆերատ): Միավորների քայլը 1 է:

4.4. «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտություն

0101/BO9. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ»-1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ մաթեմատիկական ընդհանուր գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի մաթեմատիկական անալիզի հիմնարար սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թվային հաջորդականություններ և շարքեր: **Թեմա 2՝** Անընդհատ տոկոսների բանաձևը, e-թիվը: Մասնակի հաջորդականություններ: **Թեմա 3՝** Թվային շարքի մասնակի գումար: Թվային շարքի զուգամիտությունը և տարամիտությունը: **Թեմա 4՝** Մեկ և մի քանի փոփոխականների ֆունկցիայի սահմանի Հայնեի և Կոշու սահմանների համարժեքությունը: **Թեմա 5՝** Մեկ և մի քանի փոփոխականի ֆունկցիաների անընդհատությունը կետում և բազմությունում: **Թեմա 6՝** Վայերշտրասի և Բոլցանո-Կոշու թեորեմները: **Թեմա 7՝** Շուկայի սարդոստայնային մոդելներ: **Թեմա 8՝** Երկրաչափական, տնտեսագիտական և ֆիզիկական խնդիրներ, որոնք հանգեցնում են ածանցյալի գաղափարին: **Թեմա 9՝** Տարրական ֆունկցիաների ածանցյալը, բարդ և հակադարձ ֆունկցիաների ածանցյալը: **Թեմա 10՝** Լոգարիթմական ածանցյալ: Առաձգականություն, հարկային բեռի բաշխում: **Թեմա 11՝** Շատ փոփոխականի ֆունկցիայի մասնական ածանցյալներ, ածանցյալ ըստ ուղղության, գրադիենտ: **Թեմա 12՝** Համասեռ ֆունկցիաներ, արտադրական ֆունկցիաներ, Էյլերի բանաձևը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 2-ական միավոր:
Միավորների քայլը 0,5 է:

0201/B02. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»-1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար պարապ-մունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայական տրն-տեսության գործառնության միկրոտնտեսական օրինաչափություններին, նրանց մոտ զարգացնելով անհրաժեշտ ունակություններ տնտեսագիտության տեսու-թյան հիմնարար սկզբունքներին տիրապետելու և միկրոտնտեսագիտական ավե-լի կոնկրետ դասընթացների յուրացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա շուկայական տնտեսության միկրոտնտեսական օրինաչափություն-ները,
2. ծանոթ կլինի տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և կառա-վարության տնտեսական վարքագծի հիմնական սկզբունքներին, շուկաների տիպային մոդելներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պահանջարկի և առաջարկի առաձգականությունը: **Թեմա 2՝** Սպառողի վարքի տեսության հիմունքները: **Թեմա 3՝** Գործարար ձեռնարկու-թյունները և արտադրողի վարքը: **Թեմա 4՝** Արտադրության ծախքերի տեսություն: **Թեմա 5՝** Մրցակցային ձեռնարկությունները և մրցակցային շուկաները: **Թեմա 6՝** Մոնոպոլիան շուկայական տնտեսությունում: **Թեմա 7՝** Մոնոպոլիստական մրը-ցակցությունը և օլիգոպոլիան: **Թեմա 8՝** Արտադրության գործոնների շուկաները: **Թեմա 9՝** Ընդհանուր հավասարակշռությունը և տնտեսական արդյունավետու-թյունը: **Թեմա 10՝** Շուկայական համակարգի անկատարությունները և դրանց հաղթահարման մեխանիզմները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրա-քանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատաս-խանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0101/B10. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ»-2 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել համապատասխան մաթեմատիկական ապարատ՝ ֆակուլտետում դասավանդվող «Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ», «Հավանականություն և կիրառական վիճակագրություն», «Միկրոէկոնոմիկա», «Մակրոէկոնոմիկա» և այլ դասընթացների յուրացման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ստացած մաթեմատիկական գիտելիքները կիրառելու կյանքի ամենատարբեր բնագավառներում, մասնավորաբար՝ տնտեսագիտության մեջ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆունկցիայի էքստրեմումի անհրաժեշտ և բավարար պայմաններ:

Թեմա 2՝ Ռոլի, Լագրանժի և Կոշու թեորեմները: **Թեմա 3՝** Լոպիտալի կանոնը անորոշությունների բացահայտման համար: **Թեմա 4՝** Թեյլորի բանաձևը: **Թեմա 5՝** Ֆունկցիայի ուռուցիկություն: **Թեմա 6՝** Շրջման կետեր, անհրաժեշտ և բավարար պայմաններ: **Թեմա 7՝** Մեկ փոփոխականի ֆունկցիայի գրաֆիկը: **Թեմա 8՝** Նախնական, անորոշ ինտեգրալ: **Թեմա 9՝** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը անորոշ ինտեգրալում: **Թեմա 10՝** Որոշյալ (Ռիմանի ինտեգրալ), կորագիծ սեղանի մակերեսի հաշվումը, տնտեսագիտական խնդիրներ: **Թեմա 11՝** Դարբուի գումարներ: **Թեմա 12՝** Անընդհատ և մոնոտոն ֆունկցիայի, բարդ ֆունկցիայի ինտեգրելիությունը (Լիպշիցի թեորեմ): **Թեմա 13՝** Որոշյալ ինտեգրալի հատկությունները: **Թեմա 14՝** Միջին արժեքի թեորեմը: **Թեմա 15՝** Վերին սահմանի ֆունկցիայի անընդհատությունը, դիֆերենցելիությունը: **Թեմա 16՝** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը Ռիմանի ինտեգրալում: **Թեմա 17՝** Ռիմանի ինտեգրալի կիրառությունները բնագիտությունում և տնտեսագիտությունում: **Թեմա 18՝** Առաջին սեռի անխսկական ինտեգրալ: **Թեմա 19՝** Սովորական դիֆերենցիալ հավասարումների տարրերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր:

Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2-ական միավոր:
Միավորների քայլը 0,5 է:

0303/B39. «ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (6 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիական հետազոտությունների անցկացման հմտություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա բավարար գիտելիքներ տնտեսագիտական հետազոտություններում սոցիոլոգիական մեթոդներ կիրառելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սոցիոլոգիան որպես գիտություն: **Թեմա 2՝** Անձ: **Թեմա 3՝** Սոցիալական գործողություն և վարք: **Թեմա 4՝** Սոցիալական փոխհարաբերություններ և սոցիալական կառուցվածք: **Թեմա 5՝** Սոցիալիզացիա: **Թեմա 6՝** Սոցիալական վերահսկողություն: **Թեմա 7՝** Մշակույթ և լեզու: **Թեմա 8՝** Սոցիալական խմբեր: **Թեմա 9՝** Սոցիալական ստրատիֆիկացիա: **Թեմա 10՝** Վերնախավ: **Թեմա 11՝** Աղքատություն և անհավասարություն: **Թեմա 12՝** Սոցիալական մոբիլություն: **Թեմա 13՝** Սոցիալական կազմակերպություն և կառավարում: **Թեմա 14՝** Տնտեսական սոցիոլոգիա:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0101/B11. «ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԾԱՅԻՆ ՀԱՆՐԱՀԱՇԻՎ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել վերլուծական երկրաչափության գիտելիքների անհրաժեշտ հենք՝ գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի դասընթացներում և որոշ տնտեսական մոդելներում օգտագործելու համար: Ծանոթացնել գծային հանրահաշվի արդիական մեթոդներին և տնտեսության վերլուծության խնդիրներում դրանց կիրառություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. յուրացրած կլինի գծային հանրահաշվի և վերլուծական երկրաչափության հիմունքները,
2. կկարողանա ստացած մաթեմատիկական գիտելիքները կիրառել կյանքի ամենատարբեր բնագավառներում, մասնավորաբար՝ տնտեսագիտությունում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վեկտորները որպես ուղղորդված հատվածներ: Վեկտորի կոորդինատները: Գործողություններ վեկտորների հետ: Վեկտորի պրոյեկցիա: Սկալյար արտադրյալ: Համագիծ, համահարթ, օրթոգոնալ վեկտորներ: **Թեմա 2՝** Ուղղի ընդհանուր, նորմալ, պարամետրական, կանոնական հավասարումները հարթության մեջ: Ուղիղների փոխդասավորվածությունը: Կետի հեռավորությունն ուղղից: Երկու անհայտով գծային անհավասարումներ: **Թեմա 3՝** Հարթության ընդհանուր և նորմալ հավասարումները, կետի հեռավորությունը հարթությունից: Ուղիղը որպես հարթությունների հատում: Ուղղի պարամետրական կանոնական հավասարումները տարածությունում: Երեք անհայտով գծային անհավասարումներ: **Թեմա 4՝** Ճառագայթի, կիսահարթության, կիսատարածության ուռուցիկությունը: Ուռուցիկ բազմությունների հատումը: Բազմության ուռուցիկ թաղանթ: Ուռուցիկ բազմանիստ: Ֆարկաշի թեորեմը: **Թեմա 5՝** Տեղափոխություններ և տեղադրություններ, նրանց զույգությունը, քանակը: n -րդ կարգի որոշիչ, նրա հատկությունները: Միևնույն, լրացուցիչ միևնույն հանրահաշվական լրացում, Լապլասի թեորեմը: Գծային հավասարումների համակարգի լուծման Գաուսի մեթոդը, Կրամերի կանոնը: **Թեմա 6՝** Մատրիցներ: Գործողություններ մատրիցների հետ: Չվերասերված քառակուսի մատրիցի հակադարձը, միավոր մատրից: Մատրիցային հավասարումներ: Քառակուսի մատրիցների արտադրյալի որոշիչը: **Թեմա 7՝** Գծային տարածության սահմանումը, աքսիոմները և դրանց հետևանքները: Գծային տարածության վեկտորների անկախ և կախյալ համակարգեր: Վեկտորների համակարգի բազա (առավելագույն անկախ ենթահամակարգ) և ռանգ: Գծային տարածության բազիս: Մատրիցի ռանգը որպես պլան վեկտորների համակարգի ռանգ: Մատրիցի ռանգը 0 -ից տարբեր միևնույնների միջոցով: **Թեմա 8՝** Գծային հավասարումների համակարգի համատեղելիության Կրոնեկեր-Կապելիի թեորեմը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B03. «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շուկայական տնտեսության գործառնության մակրոտնտեսական օրինաչափություններին, տալ բավարար գիտելիքներ և ունակություններ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. յուրացրած կլինի մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները և հավասարակշռության մոդելները,
2. կտիրապետի պետության տնտեսական քաղաքականության ուղղություններին ու արդյունավետության չափանիշներին, արտաքին տնտեսական գործունեության հիմնարար սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մակրոտնտեսական ցուցանիշները: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 2՝** Մակրոտնտեսական անկայունություն, տնտեսական ցիկլեր, գործազրկություն և ինֆլացիա: **Թեմա 3՝** Ամբողջական պահանջարկ և ամբողջական առաջարկ: **Թեմա 4՝** Մակրոտնտեսական հավասարակշռության քեյնսյան մոդելը: **Թեմա 5՝** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 6՝** Փողի շուկան և բանկային համակարգը: Դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 7՝** Մակրոտնտեսական հավասարակշռության IS-LM մոդելը: **Թեմա 8՝** Մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետությունը և դրա ժամանակակից հիմնահարցերը: **Թեմա 9՝** Ինֆլացիայի և գործազրկության փոխկապակցությունը: **Թեմա 10՝** Տնտեսական աճ: **Թեմա 11՝** Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 12՝** Վճարային հաշվեկշիռ և արժութային կուրսեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0101/B24. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (6 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել ծրագրային փաթեթների միջոցով տնտեսական ինֆորմացիայի մշակման գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա տնտեսական ինֆորմացիայի ծրագրային մշակման հմտություններ,
2. կկարողանա կատարել տնտեսագիտական գործոնների արժեքների հաշվարկ VBA (Ms Excel միջավայրում) լեզվով,
3. կտիրապետի տիպային ծրագրավորման փաթեթներին և կկարողանա դրանք կիրառել տնտեսագիտական վերլուծություններում ու նախագծերի ավտոմատացման խնդիրներում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսական ինֆորմացիայի համակարգչային մշակման ծրագրային ապահովումը: **Թեմա 2՝** VBA ծրագրավորման լեզուն և նրա հիմնական տարրերը: **Թեմա 3՝** VBA լեզվի օպերատորները: **Թեմա 4՝** VBA պրոցեդուրաներ և ֆունկցիաներ: **Թեմա 5՝** VBA ֆինանսական, վիճակագրական, մաթեմատիկական ֆունկցիաների կիրառությունը տնտեսագիտական հետազոտություններում: **Թեմա 6՝** VBA-ն որպես օբյեկտային կոդմոտրոշմամբ ծրագրավորման լեզու: **Թեմա 7՝** Նախագծերի ավտոմատացումը ղեկավարման էլեմենտների միջոցով:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0201/B04. «ՏԼՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարբեր պատմական ժամանակահատվածներում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև տնտեսության կարևորագույն ոլորտների, տնտեսական կացութաձևերի, տարբեր երկրների տնտեսությունների կազմակերպման ձևերի զարգացման գործընթացներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մարդկային քաղաքակրթությունների տնտեսական զարգացման հիմնական օրինաչափությունները,
2. յուրացրած կլիմի տնտեսական բարեփոխումների պատմական փորձը,

3. կիմանա առաջատար երկրների տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, տնտեսական առաջընթացի ապահովման կարևոր ուղղությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսական պատմության դասընթացի ընդհանուր նկարագիրը: **Թեմա 2՝** Նահապետական տնտեսություն: **Թեմա 3՝** Վաղ դասակարգային տնտեսություններ: **Թեմա 4՝** Միջնադարյան տնտեսությունների էկոնոմիկան: **Թեմա 5՝** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և կապիտալիստական տնտեսակարգի ձևավորումը Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 6՝** Հյուսիս-Ամերիկյան գաղութների էկոնոմիկան 17-18-րդ դդ.: **Թեմա 7՝** Ռուսական կենտրոնացված պետության էկոնոմիկան (մինչպետրոսյան շրջան): **Թեմա 8՝** Արդյունաբերական հեղաշրջումը և Արևմտյան Եվրոպայի տնտեսական հեգեմոնիան: **Թեմա 9՝** Տեխնոլոգիական հեղափոխությունը և ԱՄՆ համաշխարհային տնտեսական հեգեմոնիան: **Թեմա 10՝** Արևմտյան Եվրոպայի տնտեսական «մայրամուտը»: **Թեմա 11՝** Ռուսական կայսրության էկոնոմիկայի հիմնախնդիրները 19-րդ դարում: **Թեմա 12՝** Առաջին համաշխարհային պատերազմի և Վերսալ-Վաշինգտոնյան խաղաղության տնտեսական նշանակությունը: **Թեմա 13՝** «Մեծ դեպրեսիան» ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 14՝** Խորհրդային ամբողջատիրական տնտեսակարգի ձևավորումը: **Թեմա 15՝** Երկրորդ Համաշխարհային պատերազմի ազդեցությունը տնտեսական զարգացման գործընթացում: **Թեմա 16՝** Համաշխարհային սոցիալիստական տնտեսական համակարգ. զարգացումը, հակասությունները և փլուզումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0101/B25. «ԳՈՐԾՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ամփոփ և մատչելի ձևով ծանոթացնել գործույթների հետազոտման ժամանակակից մաթեմատիկական մոդելներին և դրանց լուծման եղանակներին, ինչպես նաև ուսումնասիրել որոշումների կայացման տիպային մոդելներ և լուծման եղանակներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա որոշել հետազոտվող խնդրի (համակարգի) նպատակը, նկարագրել այլընտրանքային լուծումները, սահմանել վերջիններիս արդյունավետությունը,
2. կկարողանա կառուցել խնդրի մաթեմատիկական մոդելը և գտնել լավագույն լուծումը համաձայն ընդունված նպատակի:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական ակնարկ. Մոդելները և մոդելավորումը կառավարման խնդիրներում: Գծային ծրագրման խնդիրը (ԳԾԽ-ը). ԳԾԽ-ի երկակի խնդիրը: Ամբողջաթիվ գծային ծրագրման խնդիրը, լուծման եղանակները: **Թեմա 2՝** Հակամարտ խաղ, մատրիցային խաղ: Հավասարակշռության իրավիճակներ: Խաղի խառն ընդլայնում: Ֆոն Նոյմանի թեորեմը: Մատրիցային խաղի լուծման եղանակները: **Թեմա 3՝** Ոչ գծային ծրագրման խնդիր (ոչ ԳԾԽ). Լագրանժի բազմապատկիչների եղանակը: Ոչ ԳԾԽ-ի Կուն-Թակերի պայմանները: Թամբակետ, թամբակետի վերաբերյալ թեորեմներ: Կուն-Թակերի թեորեմը: Ուռուցիկ ծրագրման խնդիրը: Գրադիենտի եղանակը: **Թեմա 4՝** Բելմանի անդրադարձ հավասարումը: **Թեմա 5՝** Եկամուտով Մարկովյան շղթաներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0101/B26. «ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է, ուսանողներին հաղորդել որոշակի գիտելիքներ պատահական մեծությունների և պատահական պրոցեսների, ինչպես նաև բաշխման ֆունկցիաների ու սահմանային թեորեմների, անհայտ պարամետրերի գնահատման ու վարկածների ստուգման տեսությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա անհրաժեշտ գիտելիքներ հավանականային տարածությունների, պատահական մեծությունների դասերի, բաշխման ֆունկցիաների, թվային բնութագրիչների, պատահական պրոցեսների, սահմանային թեորեմների վերաբերյալ,
2. կկարողանա կատարել անհայտ պարամետրերի գնահատում, վարկածների ստուգում, դիսպերսիոն, ռեգրեսիոն և կորելյացիոն անալիզ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հավանականային տարածություն: **Թեմա 2՝** Պատահական մեծություն և բաշխման ֆունկցիա: **Թեմա 3՝** Պատահական մեծությունների թվային բնութագրիչները: **Թեմա 4՝** Սահմանային թեորեմներ: **Թեմա 5՝** Պատահական պրոցեսներ: **Թեմա 6՝** Մաթեմատիկական վիճակագրության տարրերը: **Թեմա 7՝** Անհայտ պարամետրերի գնահատումը: **Թեմա 8՝** Վիճակագրական հիպոթեզների ստուգում: **Թեմա 9՝** Դիսպերսիոն անալիզ: **Թեմա 10՝** Կորելյացիոն անալիզ: **Թեմա 11՝** Էքսպերտային գնահատականների վիճակագրական անալիզ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B07. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (18 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ներկայացնել աշխարհի տնտեսությունների համապարփակ նկարագիրը, տալ տեղեկություններ տարբեր երկրների տնտեսությունների մասին, ինչը հիմք կհանդիսանա Հայաստանի արտաքին տնտեսական կապերի ասպարեզում ճիշտ կողմնորոշվելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա տեղեկություններ տարբեր երկրների տնտեսությունների մասին,
2. պրակտիկ աշխատանքի ընթացքում կկարողանա ճիշտ կողմնորոշվել տարբեր նպատակներով համագործակցության համար երկրների, ինչպես նաև ոլորտների և բնագավառների ընտրության հարցում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համաշխարհային տնտեսության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 2՝** ԱՄՆ-ի տնտեսության բնութագիրը: **Թեմա 3՝** Ճապոնիայի տնտեսության զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Մեծ Բրիտանիայի տնտեսության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 5՝** Ֆրանսիայի տնտեսության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 6՝** Գերմանիայի տնտեսությունը: **Թեմա 7՝** Իտալիայի տնտեսությունը: **Թեմա 8՝** Կանադայի տնտեսությունը: **Թեմա 9՝** Մերձավոր Արևելքի երկրների (Իրան, Իրաք, Սիրիա, Թուրքիա և այլն) տնտեսության զարգացման առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/В11. «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորման հիմնախնդիրը ՀՀ-ում, ներառյալ ֆինանսատիրական (հարկային իրավունքի), վարչա-իրավական և քաղաքացիա-իրավական ինստիտուտները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա տնտեսական գործունեության տեսակներից մեկի՝ ձեռնարկատիրական գործունեության իրավունքի կարգավորման, այդ կարգավորման հիմքը կազմող օրենքների համակցության մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ձեռնարկատիրական իրավունքի առարկան և համակարգը: **Թեմա 2՝** Հայաստանի Հանրապետության ձեռնարկատիրական իրավունքի սուբյեկտները: **Թեմա 3՝** Ձեռնարկատիրական գործունեության օբյեկտները: **Թեմա 4՝** Ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորումը: **Թեմա 5՝** Ապրանքաշրջանառության բնագավառում իրավական կարգավորումը: **Թեմա 6՝** Արժեթղթերի շուկայի իրավական կարգավորումը: **Թեմա 7՝** Ապահովագրությունը որպես ձեռնարկատիրության իրավական կարգավորման օբյեկտ: **Թեմա 8՝** ՀՀ Բանկային համակարգի դերը ձեռնարկատիրական գործում: **Թեմա 9՝** Հաշ-

վարկների իրավական հիմքերը: **Թեմա 10՝** Օտարերկրյա ներդրումների իրավական հիմքերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0201/B05. «ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է օժանդակել ուսանողներին առավել համակողմանի ըմբռնել և յուրացնել ժամանակակից տնտեսագիտության ձևակերպումները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի տնտեսագիտական մտքի ծագման, զարգացման և տնտեսագիտական տեսությունների ձևավորման ողջ պատմությանը՝ Հին աշխարհից մինչև 19-րդ դարի վերջը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսագիտական պատկերացումները ավանդական հասարակություններում: **Թեմա 2՝** Դասական քաղաքատնտեսության սկիզբը: **Թեմա 3՝** Ա. Սմիթը և նրա «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատությունը: **Թեմա 4՝** Մեյի շուկաների հայեցակարգը և իրացման տեսությունը: **Թեմա 5՝** Ռիկարդոյի քաղաքատնտեսական համակարգը: **Թեմա 6՝** Ջոն Ստյուարտ Միլը և նրա աշխատությունը: **Թեմա 7՝** Կ. Մարքսի «Կապիտալը»:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0201/B09. «ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացն իրենից ներկայացնում է տնտեսագիտության տեսության միկրոտնտեսագիտություն բաժնի երկրորդ (խորացված) մակարդակը: Դասընթացի նրպատակն է ուսանողներին սովորեցնել մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ վերլուծել տնտեսական սուբյեկտների վարքը, միկրոտնտեսական օրինաչափությունները, միկրոտնտեսական ցուցանիշների կապերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա մաթեմատիկական մեթոդներ կիրառել միկրոտնտեսական վերլուծություններում,
2. կունենա գիտելիքներ շուկայական տնտեսության միկրոտնտեսական հիմնահարցերի ուսումնասիրման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Օգտակարության մաքսիմալացման և ծախսերի մինիմալացման խնդիրները, դրանց կապը: ***Թեմա 2՝*** Անուղղակի օգտակարության ֆունկցիան և ծախսերի ֆունկցիան: ***Թեմա 3՝*** Վալրասի հավասարակշռությունը, բարեկեցության թեորեմները: ***Թեմա 4՝*** Փոխարինման և եկամտի էֆեկտները, Սլոցկու հավասարումը: ***Թեմա 5՝*** Փոխհատուցված և համարժեք վարիացիա, սպառողի ավելցուկը: ***Թեմա 6՝*** Ծախսերի մինիմալացման խնդիրը, ռեսուրսների պայմանական պահանջարկի ֆունկցիաները, ծախսերի երկրաչափությունը: ***Թեմա 7՝*** Շահույթի մաքսիմալացման խնդիրը, թողարկման առաջարկը և ռեսուրսների պահանջարկը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B13. «ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին տալ վիճակագրական մեթոդների օգտագործման հմտություններ, ծանոթացնել օգտագործվող տնտեսական վիճակագրության ցուցանիշների համակարգին, կատեգորիաներին, հաշվարկման եղանակներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ինքնուրույն հավաքել, ամփոփել և վերլուծել տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող վիճակագրական տվյալները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տնտեսական վիճակագրության հիմունքները: **Թեմա 2՝** Բնակչության և աշխատանքի վիճակագրություն: **Թեմա 3՝** Ազգային հարստության վիճակագրություն: **Թեմա 4՝** Ազգային հաշիվների համակարգ: **Թեմա 5՝** Գների վիճակագրություն: **Թեմա 6՝** Ֆինանսների վիճակագրություն: **Թեմա 7՝** Բնակչության եկամուտների վիճակագրություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B14. «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (6 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է յուրացնել ծառայությունների ոլորտի ճյուղերում շուկայական տնտեսության անցման տնտեսավարման, ձեռներեցության, տնտեսական միջոցառումների իրականացման նոր պայմանների ներդրման պրակտիկան:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա տեսական և գործնական գիտելիքներ շուկայական տնտեսության անցման պայմաններում ծառայությունների ոլորտում տնտեսական գործունեության վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծառայությունների ոլորտը: Զարգացման գործոնները, ռեսուրսային պոտենցիալը: **Թեմա 2՝** Շուկան և ձեռնարկատիրական գործունեությունը ծառայությունների ոլորտում: **Թեմա 3՝** Սեփականության ձևերը և սեփականաշնորհումը ծառայությունների ոլորտում: **Թեմա 4՝** Ծառայությունների ոլորտի զարգացման պետական կարգավորումը: **Թեմա 5՝** Մարքեթինգը ծառայություն-

ների ոլորտում: **Թեմա 6** Կրթությունը և հմտությունը շուկայի պայմաններում:
Թեմա 7 Մշակույթի և տուրիզմի ծառայությունների շուկան:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

0201/B30. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՍՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման գործընթացի, սկզբունքների և մեթոդների վերաբերյալ, տալ գիտելիքներ տնտեսության տարբեր ոլորտներում ու մակարդակներում մոդելավորման հնարավորությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի տնտեսա-մաթեմատիկական մոդելավորման գործընթացի հիմնարար սկզբունքներին և մեթոդներին,
2. կունենա կոնկրետ տնտեսական իրավիճակներում որոշումների ընդունման ու հիմնավորման գիտելիքներ և հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական ակնարկ: Դասընթացի ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տնտեսա-մաթեմատիկական մոդելի հասկացությունը, մոդելների դասակարգումն ու հիմնական տիպերը, մոդելավորման փուլերը: **Թեմա 2՝** Տնտեսական աճի մոդելները: **Թեմա 3՝** Արտադրության գծային մոդելներ: **Թեմա 4՝** Ցանցային մոդելներ: **Թեմա 5՝** Պաշարների կառավարման խնդիրները: **Թեմա 6՝** Օպտիմալ կառավարման խնդիրը: **Թեմա 7՝** Հաշվեկշռային մոդելներ: **Թեմա 8՝** Խաղային մոդելներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B06. «ՏՆՏԵՍԱԳԻՏԱՆԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-2» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է օժանդակել ուսանողներին առավել համակողմանի ըմբռնել և յուրացնել ժամանակակից տնտեսագիտության ձևակերպումները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլիմի տնտեսագիտական մտքի ծագման, զարգացման և տնտեսագիտական տեսությունների ձևավորման ողջ պատմությանը՝ Հին աշխարհից մինչև մեր օրերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական ուղղությունը քաղաքատնտեսության մեջ: **Թեմա 2՝** Մարժինալիստական հեղափոխությունը: **Թեմա 3՝** Մարշալյան տնտեսագիտական տեսությունը: **Թեմա 4՝** Ինստիտուցիոնալիզմ: **Թեմա 5՝** Քեյնսի տեսությունը: **Թեմա 6՝** Նոր պահպանողական տեսությունները: **Թեմա 7՝** Անցման ժամանակաշրջանի հիմնահարցերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B08. «ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ բազային տեսական և էվոլյուցիոն գիտելիքներ համաշխարհային տնտեսության զարգացման մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա միջազգային առևտրի ձևավորման և միջազգային արժույթային համակարգի մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Առևտրատնտեսական տեսությունների և հայացքների առաջացումը: **Թեմա 3՝** Համաշխարհային տնտեսության վերաբերյալ տեսությունների ձևավորումը: **Թեմա 4՝** Համաշխարհային տնտեսության աճը և ռեսուրսների շուկա: **Թեմա 5՝** Աշխատանքային ռեսուրսների միգրացիա: **Թեմա 6՝** Կապիտալի շարժը համաշխարհային տնտեսությունում: **Թեմա 7՝** Վճարային հաշվեկշռի էությունը և կառուցվածքը: **Թեմա 8՝** Հովանավորչական քաղաքականություն: **Թեմա 9՝** Ոչ մաքսային քաղաքականություն: **Թեմա 10՝** Միջազգային արժույթային համակարգի ձևավորումը: **Թեմա 11՝** Միջազգային դրամավարկային կազմակերպություններ: **Թեմա 12՝** Տնտեսական քաղաքականությունը բաց տնտեսության պայմաններում: **Թեմա 13՝** Գլոբալիզացիան և համաշխարհային տնտեսությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/Յ10. «ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացն իրենից ներկայացնում է տնտեսագիտության տեսության միկրոտնտեսագիտություն բաժնի երկրորդ (խորացված) մակարդակը: Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ վերլուծել մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա կապերը, մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա մաթեմատիկական մեթոդները կիրառել մակրոտնտեսական վերլուծություններում,
2. կունենա անհրաժեշտ գիտելիքներ շուկայական տնտեսության մակրոտնտեսական հիմնահարցերի ուսումնասիրման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մակրոտնտեսագիտության ներածություն: **Թեմա 2՝** Մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները: **Թեմա 3՝** Ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի ներածություն: **Թեմա 4՝** Սպառում. խնայողություններ և ներդրումներ: **Թեմա 5՝** Ընթացիկ հաշիվը և միջազգային առևտուրը: **Թեմա 6՝** Փողի պահանջարկը և առաջարկը: **Թեմա 7՝** Իրական փոխանակային կուրսեր: **Թեմա 8՝** Ինֆլյացիա: **Թեմա 9՝** Մակրոտնտեսական քաղաքականությունը ու թողարկումը փակ տնտեսությունում: **Թեմա 10՝** Մակրոտնտեսական քաղաքականությունը բաց տնտեսությունում՝ ֆիքսված և լողացող փոխանակային կուրսի պայմաններում: **Թեմա 11՝** Ինֆլյացիա, գործազրկություն, գործարար ցիկլեր: **Թեմա 12՝** Երկարաժամկետ տնտեսական աճ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0304/B37. «ԳՈՐԾՍՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ/ռուսերեն/» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների առավել զարգացումը: Դասընթացի շրջանակում հիմնական շեշտը դրվում է մասնագիտական գործավարության հմտությունների զարգացմանը, ինչը ենթադրում է թիրախ լեզվով տարբեր փաստաթղթերի ձևերի, դրանց հատուկ բառապաշարի և քերականական կառույցների ուսումնասիրություն: Միաժամանակ ուշադրություն է դարձվում ուսանողների լեզվական հաղորդակցական կարողությունների զարգացմանը մասնագիտական թեմատիկ առավել լայն ընդգրկմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի օտար լեզվով բանավոր և գրավոր մասնագիտական խոսք կառուցելու հմտություններին,
2. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն /անգլերեն/ և հակառակը,
3. կկարողանա կազմել գործավարական փաստաթղթեր մասնագիտության բնագավառում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառապաշար (ռեցեպտիվ և պրոդուկտիվ)՝ հոմանիշներ, հականիշներ, դարձվածներ: **Թեմա 2՝** Քերականություն. ռուսերենին /անգլերենին/ ներհատուկ բարդ խնդիր և բացարձակ կառույցներ, ինչպես նաև դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում: **Թեմա 3՝** Մասնագիտական գործավարություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0201/B12. «ՀԿՈՆՈՄԵՏՐԻԿԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ տնտեսագիտական հետազոտություններում քանակական և որակական էկոնոմետրիկ մեթոդների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի տնտեսագիտական հետազոտություններ կատարելու էկոնոմետրիկ մեթոդներին,
2. կկարողանա համակարգչային փաթեթների կիրառությամբ գնահատել իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը,
3. կկարողանա վիճակագրական մեթոդների օգնությամբ ստուգել մոդելների համապատասխանության վերաբերյալ տարբեր վարկածներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռեգրեսիոն մոդելներ Գաուս–Մարկովի պայմաններում: **Թեմա 2՝** Վիճակագրական թեստերի կիրառում: **Թեմա 3՝** Բազմակոլիներություն: **Թեմա 4՝** Բազմադիսպերսիայնություն (հետերոսկեդաստիկություն): **Թեմա 5՝** Ավտոռեգրեսիոն մոդելներ: **Թեմա 6՝** Դինամիկ մոդելներ: **Թեմա 7՝** Միաժամանակյա հավասարումների միջոցով տրվող մոդելների ուսումնասիրում: **Թեմա 8՝** Պանելային տվյալներով տրվող մոդելների ուսումնասիրում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/В16. «ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկության հիմնական ֆունկցիաների, կառուցվածքային տարրերի ու հատկությունների, ձեռնարկության գործունեության կազմակերպման առանձնահատկությունների, ռեսուրսների, ծախսերի ու արդյունքների ուսումնասիրումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ձեռնարկության տնտեսական վարքի բնույթը շուկայի ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների համատեքստում,
2. կունենա ձեռնարկության նպատակադրումների ձևակերպման, ձեռնարկատիրությունների կազմակերպման, մոդելավորման և ինքնուրույն կերպով կառավարչական որոշումների կայացման գործնական հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Ձեռնարկատիրական գործունեությունը որպես ձեռնարկության գործունեության օբյեկտ: Ձեռնարկատիրության կորպորատիվ ձևերը: **Թեմա 3՝** Ձեռնարկության գործունեության իրավական դաշտը Հայաստանի հանրապետությունում: **Թեմա 4՝** Ձեռնարկության շուկայական մոդելը և մրցունակությունը: **Թեմա 5՝** Արտադրական պրոցեսի կազմակերպումը ձեռնարկությունում: **Թեմա 6՝** Արտադրության տնտեսական և սոցիալական արդյունավետությունը: **Թեմա 7՝** Ձեռնարկությունում աշխատանքի նորմավորման հիմունքները: **Թեմա 8՝** Ձեռնարկության ներդրումային գործունեությունը: **Թեմա 9՝** Ձեռնարկության հիմնական և շրջանառու միջոցները: **Թեմա 10՝** Ձեռնարկության տնտեսական գործունեության պլանավորումը: **Թեմա 11՝** Ձեռնարկության արտադրական հզորությունը և արտադրական ծրագիրը: **Թեմա 12՝** Ձեռնարկության կադրերը, նրանց քանակի պլանավորումը: Ձեռնարկությունում աշխատանքի վճարումը: **Թեմա 13՝** Արտադրության ծախսերը: Կալկուլացիան: Ծախսերի նախահաշիվը: **Թեմա 14՝** Ձեռնարկության շահույթը և շահութաբերությունը: Ձեռնարկության գնային քաղաքականությունը: **Թեմա 15՝** Ձեռնարկության ֆինանսների կառավարումը: **Թեմա 16՝** Արդյունաբերական ձեռնարկությունը և շրջակա միջավայրը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0201/B19. «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Ուսումնասիրել ֆիզիկայի տարբեր բնագավառների, մասնավորապես քվանտային մեխանիկայի համար անհրաժեշտ մաթեմատիկական մեթոդները և հատուկ ֆունկցիաները, որոնք հաճախ են հանդիպում ուսումնառության տարիներին և հետագա ֆիզիկական հետազոտությունների կատարման ընթացքում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ինչպես հաղթահարել հետագա կուրսերում հանդիպող մաթեմատիկական դժվարությունները,
2. կհասկանա ինչպես կիրառել մաթեմատիկական մեթոդները ֆիզիկական խնդիրներ լուծելիս,
3. կկարողանա լուծել խնդիրներ, որոնք կհանդիպեն ֆիզիկայի տարբեր բնագավառներում աշխատելիս:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ըստ մարմնային անկյան ինտեգրալների հաշվարկ: **Թեմա 2՝** Ինտեգրալների ասիմպտոտիկ գնահատման մեթոդներ: **Թեմա 3՝** Էյլերի գամմա-բետա ֆունկցիաները: **Թեմա 4՝** Էյրիի ֆունկցիաներ: **Թեմա 5՝** Էրմիտի բազմանդամներ: **Թեմա 6՝** Լեժանդրի բազմանդամներ: **Թեմա 7՝** Սֆերիկ ֆունկցիաներ: **Թեմա 8՝** Գլանային /Բեսելի/ ֆունկցիաներ: **Թեմա 9՝** Հիպերերկրաչափական ֆունկցիաներ: **Թեմա 10՝** Այլասերված հիպերերկրաչափական ֆունկցիաներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0102/B04 . «ՄՈՒԵԿՈՒԼԱՅԻՆ ՏԻԶԻԿԱ» (7 կրեդիտ)

Շաբաթական՝ 10,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական, 18 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել նյութի կառուցվածքի մոլեկուլային-կինետիկ տեսությանը, մասնիկների համակարգի ուսումնասիրման ջերմադինամիկական մեթոդին: Մեկնաբանել նյութի ֆիզիկական հատկությունները գազային, հեղուկ և պինդ վիճակներում, այդ վիճակներից մեկից մյուսին անցնելու օրինաչափությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նյութի կառուցվածքի և հատկությունների վերաբերյալ մոլեկուլային-կինետիկ տեսության և ջերմադինամիկական մեթոդի մոտեցումները.
2. կհասկանա նյութի տարբեր վիճակների միջև անցումների առանձնահատկությունները.
3. կկարողանա հաջողությամբ կիրառել գիտելիքները նյութի հատկությունների բացատրության համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նյութի կառուցվածքի մոլեկուլային-կինետիկ տեսություն: **Թեմա 2՝** Վիճակագրական բաշխումներ: **Թեմա 3՝** Ջերմադինամիկայի առաջին, երկրորդ և երրորդ սկզբունքները: **Թեմա 4՝** Իդեալական և իրական գազեր: **Թեմա 5՝** Փոխանցման երևույթները գազերում: **Թեմա 6՝** Փուլային հավասարակշռություն և փուլային անցումներ: **Թեմա 7՝** Հեղուկներ: **Թեմա 8՝** Մակերևութային լարվածություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0101/B14. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ» (4 կրեդիտ)
Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ֆիզիկայի խնդիրներն ուսումնասիրելիս ի հայտ եկող հիմնական մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումներին և դրանց լուծման մեթոդներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ֆիզիկայի հիմնական խնդիրների բերումը մասնական ածանցյալներով հավասարումների համար սկզբնական, եզրային կամ խառը խընդիրներին,
2. կհասկանա ֆիզիկական խնդիրները համապատասխան հավասարումների բերելու սխեման,
3. կկարողանա ֆիզիկայի խնդիրներն ուսումնասիրելիս հմտորեն կիրառել մաթեմատիկական ֆիզիկայի մեթոդները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մասնական ածանցյալներով հավասարումներին բերվող ֆիզիկայի խնդիրներ: Առաջին կարգի մասնական ածանցյալներով հավասարումներ: Կոշիի խնդիրը: **Թեմա 2՝** Բնութագրիչների մեթոդը երկրորդ կարգի քվադրատային հավասարումների համար: **Թեմա 3՝** Երկրորդ կարգի գծային հիպերբոլական տեսակի հավասարումներ: Կոշիի խնդիրը: Կիսաանվերջ խառը խնդիրը: Վերջավոր տիրույթի համար եզրային խնդիրը: **Թեմա 4՝** Երկրորդ կարգի գծային պարաբոլական տեսակի հավասարումներ: Կոշիի խնդիրը: Կիսաանվերջ խառը խնդիրը: Վերջավոր տիրույթի համար եզրային խնդիրը: **Թեմա 5՝** Երկրորդ կարգի գծային էլիպտական տեսակի հավասարումներ: Հարմոնիկ ֆունկցիաներ: Եզրային խնդիրներ: Պոտենցիալների տեսություն: **Թեմա 6՝** Փոփոխականների անջատման Ֆուրիեի մեթոդը: Ինտեգրալ ձևափոխությունների մեթոդը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0101/B18. «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ»
(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ լաբորատոր պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Տարբեր տիպի գործընթացների մոդելավորում, համապատասխան թվային հաշվարկի մեթոդների ուսումնասիրում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մոդելավորման համար անհրաժեշտ մաթեմատիկական մեթոդները, մոդելավորման հիմնական մեթոդները,
2. կհասկանա մաթեմատիկական մոդելավորման հիմնական սկզբունքները,
3. կկարողանա ստեղծել համակագերի մաթեմատիկական մոդելներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մոդելավորման խնդիրների օրինակներ և դրանց դասակարգումը ըստ դրվածքի: **Թեմա 2՝** Թվային հաշվարկի հիմնական մեթոդները և դրանց կիրառումը մոդելավորման խնդիրներում: **Թեմա 3՝** Երկրորդ կարգի մասնակի ածանցյալներով հավասարումներով նկարագրվող գործընթացների մոդելավորում: Ցանցերի մեթոդ: Իտերացիոն մեթոդներ, ներքին և արտաքին իտերացիաներ: Տարբեր օրինակներ: **Թեմա 4՝** Մոնտե-Կարլոյի մեթոդ: Մասնիկների տեղափոխման խնդիրների մոդելավորումը Մոնտե-Կարլոյի մեթոդով: **Թեմա 5՝** Տարբեր համակարգերի և գործընթացների մաթեմատիկական նկարագրության միջոցներ: **Թեմա 6՝** Մոդելավորման օրինակներ տարբեր համակարգերի համար:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0101/B20. «ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ»
(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում առարկայակողմնորոշված ծրագրավորման վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա առարկայակողմնորոշված ծրագրավորման հիմունքները,
2. կհասկանա առարկայակողմնորոշված ծրագրավորման տրամաբանությունը,
3. կկարողանա կազմել պարզագույն ծրագիր C ++ Builder փաթեթի միջոցով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆունկցիոնալ ծրագրավորման հիմնական հասկացությունները:
Թեմա 2՝ Նոր տիպերի ստեղծում, կառուցվածքներ, դասեր: **Թեմա 3՝** Դասերի անդամներ և մեթոդներ: Առարկաներ: Կոնստրուկտորներ և դեստրուկտորներ: **Թեմա 4՝** Ցուցիչներ: Հիշողության դինամիկ բաշխում: **Թեմա 5՝** Ժառանգում: Բազային և ածանցյալ դասեր: **Թեմա 6՝** Վիրտուալ ֆունկցիաներ և պոլիմորֆիզմ: **Թեմա 7՝** Որոշ ժամանակակից ծրագրավորման միջոցների ակնարկ: Visual C++, Visual Basic, Delphi, Java, Web-ծրագրավորում: Տվյալների բազաներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/BO5. «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱԳՆԻՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

(8 կրեդիտ)

Շաբաթական՝ 10,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական, 18 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 5 –րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել էլեկտրականության և մագնիսականության օրենքների հայտնագործմանը, դրանց առնչվող հիմնական փորձերին, ներկայացնել այդ օրենքները ինտեգրալային և դիֆերենցիալ տեսքերով, գաղափար տալ նրանց հիմնական կիրառությունների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էլեկտրականության և մագնիսականության հիմնական օրենքները, դրանց առնչվող կարևորագույն փորձերը, երևույթները.

2. կիսականա այդ երևույթների, փորձերի, օրենքների կապը, օրենքների համակարգի ներքին տրամաբանությունը, այդ համակարգից բխող հիմնական հետևությունները և արդյունքները.
3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էլեկտրաստատիկ դաշտը վակուումում: **Թեմա 2՝** Էլեկտրաստատիկ դաշտը միջավայրում: **Թեմա 3՝** Էլեկտրական հոսանք: **Թեմա 4՝** Հաստատուն մագնիսական դաշտը վակուումում: **Թեմա 5՝** Հաստատուն մագնիսական դաշտը միջավայրում: **Թեմա 6՝** Էլեկտրամագնիսական մակածում: Քվադրատացիոնար երևույթներ: **Թեմա 7՝** Մաքսվելի հավասարումների համակարգը: **Թեմա 8՝** Էլեկտրական հոսանքը տարբեր միջավայրերում: **Թեմա 9՝** Լիցքավորված մասնիկների շարժումը էլեկտրամագնիսական դաշտերում: **Թեմա 10՝** Էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B13. «ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (6 ժամ դասախոսություն, 12 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ռադիոէլեկտրոնիկայի հիմնական խնդիրները, նրանց լուծման հիմնական մեթոդները, ինչպես նաև ծանոթացնել ռադիոէլեկտրոնային համակարգերին, որոնց միջոցով իրականացվում է այդ խնդիրների լուծումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռադիոէլեկտրոնային համակարգերի կառուցվածքը,
2. կիսականա ռադիոէլեկտրոնային համակարգերի աշխատանքի սկզբունքները,
3. կկարողանա աշխատել ռադիոէլեկտրոնային սարքավորումների հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ազդանշաններ, նրանց դասակարգումը և ներկայացման ձևերը:
Թեմա 2՝ Կենտրոնացված պարամետրերով գծային համակարգեր: **Թեմա 3՝** Բաշխված պարամետրերով համակարգեր: **Թեմա 4՝** Ուժեղացուցիչներ և գեներատորներ: **Թեմա 5՝** Ոչ գծային համակարգեր: Մոդուլում, դետեկտում, հաճախությունների փոխակերպում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0102/B14. «ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տիեզերքի՝ երկնային մարմինների և նրանց համակարգի առաջացման, կառուցվածքի, շարժման և զարգացման մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ինչպես են շարժվում երկնային մարմինները երկնոլորտում, Արեգակը, արեգակնային համակարգը, մոլորակները և նրանց արբանյակները, ինչպես են առաջանում լուսնի փուլերը, արեգակի խավարումները,
2. կհասկանա աստղերի ֆիզիկական առանձնահատկությունները,
3. կկարողանա ճանաչել երկնքի վրա համաստեղությունները և նրանցում դիտվող պայծառ աստղերը, կկարողանա որոշել, թե տվյալ օբյեկտը տարվա որ ժամանակահատվածում կարելի է դիտել:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հիմնական տեղեկություններ սֆերիկական աստղագիտությունից, կոորդինատական համակարգեր, նրանց ձևափոխությունները, մոլորակների տեսանելի և իրական շարժումները, Կեպլերի օրենքները: **Թեմա 2՝** Երկրի, Արեգակի և Լուսնի շարժումները, Երկրի առանցքի պրոցեսիոն և նուտացիոն շարժումները, Արեգակի և Լուսնի խավարումները: **Թեմա 3՝** Աստղաֆիզիկայի հիմունքները, ջերմաստիճանների որոշման մեթոդները, սպեկտրալ գծերի դոպլերյան շեղումները, երկնային մարմինների քիմիական կառուցվածքը: **Թեմա 4՝** Դիտակներ, ֆոտոէլեկտրական ընդունիչներ, սպեկտրալ սարքեր, ռադիոդիտակ-

ներ, արտամթնոլորտային դիտակներ, գամմա, ռենտգենյան և ինֆրակարմիր ճառագայթների ընդունիչ սարքեր:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0102/B06. «ՕՊԵՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՑԵՆՏՐԻ ՖԻԶԻԿԱ» (7 կրեդիտ)

Շաբաթական՝ 10,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 12 ժամ զործնական, 18 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արդի օպտիկայի հիմնական պատկերացումներին ընդհանուր ֆիզիկայի դասընթացի սահմաններում՝ հատկապես կարևորելով քննարկվող երևույթների փորձարարական ասպեկտները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ինչպես դասական օպտիկայի հիմնական երևույթները, այնպես էլ վերջին տասնամյակների մեծագույն նվաճումները և նրանց կիրառական հնարավորությունները,
2. կհասկանա երևույթների փորձարարական և նրանց համապատասխան նրկարագրական մեթոդների առանձնահատկությունները,
3. կկարողանա ինքնուրույն լուծել ֆիզիկայի տարբեր բաժիններում հանդիպող և օպտիկական ուղղվածություն ունեցող միջին բարդության խնդիրներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համառոտ պատմական ակնարկ: **Թեմա 2՝** Լույսի տարածման վերջավոր արագությունը: Հարաբերականության հատուկ տեսության փորձարարական հիմունքները: **Թեմա 3՝** Երկու միջավայրերի բաժանման սահմանում ընթացող երևույթներ: **Թեմա 4՝** Լույսի ֆիզիկական բնույթը. լույսը որպես էլեկտրամագնիսական ալիք: **Թեմա 5՝** Լույսի ֆիզիկական բնույթը. լույսի քվանտ: Պլանկի հաստատուն: **Թեմա 6՝** Լույսի ճառագայթումը և կլանումը ատոմների կողմից: **Թեմա 7՝** Լույսի ինտերֆերենցիա և դիֆրակցիա: **Թեմա 8՝** Լույսը միջավայրում: **Թեմա 9՝** Մեծ ինտենսիվություններ, ոչ գծային օպտիկական երևույթներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/Յ09. «ԴԱՄԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսումնասիրել տեսական ֆիզիկայի առաջին դասընթացի՝ «Դասական մեխանիկա» առարկայի հիմնական գաղափարները: Դիտարկվում են երեք հիմնական մոտեցումներ՝ Լագրանժի, Համիլտոնի և Համիլտոն-Յակոբիի, որոնք օգտագործվում են կոնկրետ խնդիրներ լուծելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տեսական ֆիզիկայի հիմնական սկզբունքները,
2. կծանոթանա ոչ ռելյատիվիստական մեխանիկայի հիմնական օրինաչափություններին,
3. կկարողանա լուծել դասական մեխանիկայի խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կովարիանտության գաղափարը: **Թեմա 2՝** Կոորդինատական համակարգեր: **Թեմա 3՝** Սկալյարներ, վեկտորներ, թենզորներ: **Թեմա 4՝** Վեկտորական և թենզորական անալիզի տարրերը: **Թեմա 5՝** Փոքրագույն գործողության սկզբունք. Լագրանժի հավասարումներ: **Թեմա 6՝** Շարժման ինտեգրալներ: **Թեմա 7՝** Շարժման հավասարումների ինտեգրում: **Թեմա 8՝** Համիլտոնյան ֆորմալիզմը: **Թեմա 9՝** Շարժումը կենտրոնահամաչափ դաշտում: **Թեմա 10՝** Բախումներ: **Թեմա 11՝** Տատանումներ: **Թեմա 12՝** Պինդ մարմնի շարժումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B16. «ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (6 ժամ դասախոսություն, 18 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել մոդելների տեսակներին, հաշվարկային գիտափորձի սկզբունքներին, գիտափորձի և հաշվարկային գիտափորձի տվյալների համատեղ վերլուծությանը, դինամիկ համակարգերի մոդելավորմանը, չափայնության տեսությանը, Իզինգի մոդելին, նեյրոնային ցանցերի մաթեմատիկական մոդելներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա փորձարարական ֆիզիկայի գործընթացի հիմունքները,
2. կհասկանա փորձարարական տվյալների մշակման սկզբունքները,
3. կկարողանա մոդելավորել պարզ ֆիզիկական պրոցեսներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն բարձր էներգիաների աստղաֆիզիկայի մասին:
Թեմա 2՝ Մոդելավորումը բարձր էներգիայի աստղաֆիզիկայում: **Թեմա 3՝** Մոդելների տեսակները, համակարգչային մոդելներ, հաշվարկային գիտափորձի սկզբունքները: **Թեմա 4՝** Գիտափորձի և հաշվարկային գիտափորձի տվյալների համատեղ վերլուծությունը: **Թեմա 5՝** Ժամանակային շարքերի մոդելավորումը: **Թեմա 6՝** Պիկերի որոնում և ստատիստիկական վերլուծություն: **Թեմա 7՝** Ազդանշանի կորզումը աղմուկի պայմաններում: **Թեմա 8՝** Նեյրոնային ցանցերի մաթեմատիկական մոդելները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0101/B22. «ԶՈՒԳԱՆՈՒ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (6 ժամ դասախոսություն, 18 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Սովորեցնել ուսանողին զուգահեռ ծրագրավորման տարրերը, ձևակերպել խնդիրներ, որոնք թույլ են տալիս զուգահեռ հաշվարկ: Սովորեցնել ուսանողին մտածել զուգահեռ ծրագրավորմանը հարիր կատեգորիաներով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գուգահեռ ծրագրավորման ընդհանուր հիմունքները.
2. կհասկանա գուգահեռ ծրագրավորման տրամաբանությունը.
3. կկարողանա գտնել այնպիսի խնդիրներ, որոնց համար գուգահեռ ծրագրավորումը տալիս է ռեսուրսների մեծ տնտեսում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Գուստաֆսոնի օրենքը: **Թեմա 2՝** Համր բացառություն, սինխրոնիզացիա: **Թեմա 3՝** Բիթային մակարդակի վրա գուգահեռացում: **Թեմա 4՝** Ծրագրային գուգահեռացում: **Թեմա 5՝** Տվյալների գուգահեռացում: **Թեմա 6՝** Մեքենայական /կոշտ/ մասի գուգահեռացմանն անհրաժեշտ տարրերը: **Թեմա 7՝** Բազմամիջուկ հաշվարկ: **Թեմա 8՝** Բաժանված հաշվարկ: **Թեմա 9՝** Կլաստերներ: **Թեմա 10՝** Grid հաշվարկներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0101/B21. «ՄՈՏԱՎՈՐ ՀԱՇՎՈՒՄՆԵՐ: ԻՆՏԵԳՐԱԼ ԵՎ ԱՊՐՈՔՍԻՄԱՅԻՈՆ ՄԵ-ԹՈՂՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (18 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել գծային հանրահաշվական հավասարումների, ինտեգրալ և դիֆերենցիալ հավասարումների, ոչ գծային հավասարումների, լուծման ապրոքսիմացիոն մեթոդներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գծային հանրահաշվական հավասարումների, ինտեգրալ և դիֆերենցիալ հավասարումների, ոչ գծային հավասարումների լուծման ապրոքսիմացիոն մեթոդները.
2. կհասկանա այդ մեթոդների կիրառական նշանակությունը.
3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ինտերպոլացիայի խնդիր: **Թեմա 2՝** Գծային հանրահաշվական հավասարումների լուծման մոտավոր մեթոդներ: **Թեմա 3՝** Թվային ինտեգրում:

Թեմա 4՝ Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների լուծման ապրոքսիմացիոն մեթոդներ: **Թեմա 5՝** Ոչ գծային հավասարումների լուծման մոտավոր մեթոդներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0102/B07. «ՍՏՈՄԻ ՖԻԶԻԿԱ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական, 12 ժամ լաբորատոր աշխատանքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել ներատոմային պրոցեսների հիմնական օրինաչափությունները, դասական ֆիզիկայի օրենքների անկիրառելիությունը ատոմական աշխարհում, նոր՝ քվանտային մոտեցման անհրաժեշտությունը, մեկնաբանել հիմնական հետազոտությունները, որոնք հանդիսանում են քվանտային ֆիզիկայի փորձարարական հիմքերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պարբերական համակարգի կառուցման հիմնական դրույթները և տարրերի հիմնական հատկությունները, ատոմական սպեկտրների (օպտիկական և ռենտգենյան) հիմնական օրինաչափությունները, առաջացման մեխանիզմները.
2. կհասկանա այն հիմնարար փորձնական հետազոտությունները, որոնք հանդիսանում են քվանտային ֆիզիկայի փորձարարական հիմքերը.
3. կկարողանա մեկնաբանել ատոմական սպեկտրների կառուցվածքը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ α -մասնիկների ցրումը: Ռեգերֆորդի փորձերը և տեսությունը: Ատոմի մոլորակային մոդելը: Բորի կանխադրույթները: Ֆրանկի և Հերցի փորձերը: **Թեմա 2՝** Ջրածնի ատոմի սպեկտրը: Բորի տեսությունը: Ալկալի մետաղների սպեկտրը, հելիումի ատոմի սպեկտրը: **Թեմա 3՝** Ատոմի մագնիսական մոմենտը, Լանդեի բազմապատկիչները, Ջեեմանի երևույթները: **Թեմա 4՝** Քվանտային թվերի քառյակ: Մենդելևի պարբերական համակարգը, տարրերի դասակարգումը: **Թեմա 5՝** Ռենտգենյան ճառագայթման սպեկտրները: Մոզլիի օրենքը: **Թեմա 6՝** Դե Բրոյլի վարկածը: Էլեկտրոնների դիֆրակցիան: Ալիքային ֆունկցիայի վիճակագրական մեկնաբանումը: Անորոշությունների առնչությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B10. «ՀԱՍՏԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՄԻԿԱ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (18 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ցույց տալ Մաքսվելի հավասարումների ռեյատիվիստական ինվարիանտությունը՝ պիտանիությունը բոլոր իներցիալ համակարգերում: Շարադրվում է ամենափոքր գործողության սկզբունքը էլեկտրադինամիկայում, դաշտի և տրված դաշտում լիցքի շարժման հավասարումները: Ուսումնասիրվում են էլեկտրադինամիկայի և մագնիսոստատիկայի հարցերը, քվադիստացիոնար էլեկտրամագնիսական դաշտերը, սկին էֆեկտը, գծային շղթաները: Քննարկվում են ուշացող պոտենցիալները, դիպոլային, քվադրուպոլային, մագնիսական դիպոլային ճառագայթումները, ճառագայթման ռեակցիան:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էլեկտրադինամիկայի հիմնական դրույթները,
2. կհասկանա լուծել էլեկտրադինամիկայի ստանդարտ խնդիրներ,
3. կկարողանա ուսումնասիրել քվանտային էլեկտրադինամիկան:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հատուկ հարաբերականության տեսության տարրերը: **Թեմա 2՝** Մաքսվելի հավասարումների համակարգը: **Թեմա 3՝** Էլեկտրամագնիսական դաշտը նկարագրող չորս չափանի մեծությունները: **Թեմա 4՝** Ամենափոքր գործողության սկզբունքը էլեկտրադինամիկայում: **Թեմա 5՝** Մասնիկների շարժումը էլեկտրական և մագնիսական դաշտերում: **Թեմա 6՝** Հաստատուն էլեկտրական և մագնիսական դաշտերը վակուումում: **Թեմա 7՝** Էլեկտրամագնիսական ալիքներ: **Թեմա 8՝** Կամայական օրենքով շարժվող լիցքի էլեկտրամագնիսական դաշտը: **Թեմա 9՝** Մակրոսկոպիկ էլեկտրադինամիկայի հավասարումները: **Թեմա 10՝** Ժամանակային և տարածական դիսպերսիա: Դիսպերսիոն առնչություններ: **Թեմա 11՝** Էլեկտրամագնիսական ալիքները միջավայրում: **Թեմա 12՝** Քվադիստացիոնար էլեկտրամագնիսական դաշտեր: Սկին էֆեկտ: Գծային շղթաներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B17. «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳ-ԶԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (6 ժամ դասախոսություն, 12 ժամ լաբորատոր պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում գիտական վիրտուալ և իրական փորձերի իրականացման մասին՝ անձնական համակարգչի, տվյալների խմբավորման և LabVIEW-ի միջավայրում տվյալների մշակման և կարգավորման ծրագրավորման հիման վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա LabVIEW ծրագրավորման լեզուն,
2. կհասկանա LabVIEW-ի միջավայրում փորձարարական սարքի կարգավորման և տվյալների խմբավորման, ծրագրավորման տրամաբանությունը,
3. կկարողանա ընտրել նախատեսվող փորձի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների կազմը և բնութագրերը, կկարողանա LabVIEW-ի միջավայրում մշակել փորձարարական տվյալներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տեղեկատվության ներմուծումը ԷՀՄ: Հաշվարկման համակարգեր: Թվերի տեղափոխում մի համակարգից մյուսը: **Թեմա 2՝** Անձնական համակարգչի կազմակերպում: **Թեմա 3՝** LabVIEW վիրտուալ լաբորատորիայի ապարատա-ծրագրային կոմպլեքս: Ծանոթացում LabVIEW-ի ծրագրավորման միջավայրի հետ: **Թեմա 4՝** Անալոգային և թվային ազդանշաններ: **Թեմա 5՝** Անալոգա-թվային և թվա-անալոգային փոխարկիչներ: **Թեմա 6՝** Չափումները LabVIEW-ի աշխատանքային միջավայրում: USB 6008 բազմաքարտեր: Աշխատանքը քարտերի հետ՝ LabVIEW-ի ռեսուրսների կիրառմամբ: USB 6008-ի միջոցով վոլտ-ամպերային բնութագրերի չափումը: **Թեմա 7՝** Չափողական տվիչներ(սենսորներ): Թերմիստրի և USB 6008-ի միջոցով ջերմաստիճանի չափման ծրագիրը: **Թեմա 8՝** Սարքավորումների ավտոմատացման սկզբունքները գիտական հետազոտություններում: Սպեկտրոֆոտոմետրի ավտոմատացման օրինակ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0102/B08. «ՍՏՈՄԻ ՄԻՋՈՒԿԻ ՖԻԶԻԿԱ ԵՎ ՏԱՐԴԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐ»

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական, 12 ժամ լաբորատոր)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ ատոմի միջուկի և տարրական մասնիկների հատկությունների և փոխազդեցությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա, թե մատերիայի կառուցվածքի ինչպիսի հարցերն են միջուկային ֆիզիկայի ուսումնասիրության առարկան,
2. կհասկանա ատոմի միջուկի և տարրական մասնիկների կառուցվածքային առանձնահատկությունները, հիմնարար փոխազդեցությունների էությունը,
3. կկարողանա միջուկային ֆիզիկայի հետազոտական մեթոդները կիրառել գիտության և տեխնոլոգիաների տարբեր ոլորտներում, լուծել հիմնարար և կիրառական բնույթի զանազան խնդիրներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գաղափար սուբատոմային մասնիկների մասնիկային և ալիքային հատկությունների մասին: **Թեմա 2՝** Ատոմային միջուկի կառուցվածքը և ստատիկական հատկությունները: **Թեմա 3՝** Հիմնարար փոխազդեցությունները միջուկային ֆիզիկայում, միջուկային ուժերի բնույթը: **Թեմա 4՝** Միջուկների սպինը և մագնիսական մոմենտը: **Թեմա 5՝** Միջուկների բնական ռադիոակտիվություն: **Թեմա 6՝** Միջուկային ռեակցիաներ: **Թեմա 7՝** Միջուկների բաժանումը: **Թեմա 8՝** Տարրական մասնիկների հատկությունները, դրանց դասակարգումը լեպտոնների և հադրոնների: Բարիոնային և լեպտոնային մուլտիպլետներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B11. «ՔՎԱՆՏԱՅԻՆ ՄԵՆԱՆԻԿԱ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսումնասիրել քվանտային մեխանիկայի հիմնական գաղափարները և նրանց փորձնական հիմնավորումը: Շարադրվում են ոչ ռելյատիվիստիկ քվանտային մեխանիկայի հիմունքները: Միկրոաշխարհի երևույթների դուալիզմը: Անորոշությունների և վերադրման սկզբունքները: Վիճակների և ֆիզիկական մեծությունների էվոլյուցիան: Շրեդինգերի-Հայզենբերգի պատկերացումները: Միաչափ շարժում: Մոմենտի տեսություն, սպին, Դիրակի հավասարում: Շարժումը կենտրոնահամաչափ դաշտում: Հավասարումների լուծման մոտավոր մեթոդները: Միատեսակ մասնիկների նույնականության սկզբունքը: Ատոմ: Մոլեկուլ: Բախումների տեսություն: Դասախոսություններն ուղեկցվում են գործնական պարապմունքներով, որոնց ընթացքում ուսանողները յուրացնում են քվանտային ֆիզիկայի խնդիրների մեթոդները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա միկրոաշխարհում գործող օրինաչափությունները,
2. կհասկանա ոչ ռելյատիվիստիկական քվանտային մեխանիկայի տեսական խնդիրները և նրանց փորձարարական հիմնավորումները,
3. կկարողանա լուծել քվանտային օբյեկտներին վերաբերող ստանդարտ խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գաղափար ալիքային ֆունկցիայի մասին: **Թեմա 2՝** Քվանտային մեխանիկայի մաթեմատիկական ապարատը: **Թեմա 3՝** Անորոշությունների առընչությունները: **Թեմա 4՝** Սեփական արժեքներ և սեփական ֆունկցիաներ: **Թեմա 5՝** Քվանտային մեխանիկայի մատրիցական ձևակերպումը: **Թեմա 6՝** Վիճակի փոփոխությունը ժամանակի ընթացքում: **Թեմա 7՝** Միաչափ շարժման որոշ խնդիրներ: **Թեմա 8՝** Շարժման քանակի մոմենտ: **Թեմա 9՝** Քվանտային մեխանիկայի ռելյատիվիստական հիմունքներ: **Թեմա 10՝** Մասնիկի շարժումը կենտրոնա-հա-մաչափ դաշտում: **Թեմա 11՝** Ատոմներ: **Թեմա 12՝** Շարժումը էլեկտրամագնիսական դաշտում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B20. «ՔՎԱՆՏԱՅԻՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՆԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քվանտային ինֆորմացիայի գաղափարին և նրա իրականացման ֆիզիկական միջոցների, ինչպես նաև նրանցով իրականացվող քվանտային ալգորիթմների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա քվանտային ինֆորմացիայի հատկությունները և այն պարունակող ֆիզիկական համակարգերը,
2. կհասկանա քվանտային վիճակներով ինֆորմացիայի կոդավորումը, նրանց ձևափոխումները և նրանցով ինֆորմացիայի մշակման ալգորիթմների սկզբունքները,
3. կկարողանա մշակել քվանտային սխեմաներ և կատարել հաշվարկներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ինֆորմացիայի կոդավորում քվանտային վիճակներով: **Թեմա 2՝** Նեյմանի էնտրոպիա: **Թեմա 3՝** Անանջատելի (միաձույլ) վիճակներ: **Թեմա 4՝** Ինֆորմացիայի քվանտային ձևափոխումներ: **Թեմա 5՝** Օպտիկական երևույթների կիրառությունը քվանտային ինֆորմատիկայում: **Թեմա 6՝** Ինֆորմացիայի հաղորդում: **Թեմա 7՝** Ինֆորմացիայի ծածկագրում: **Թեմա 8՝** Ակնարկ քվանտային համակարգիչների մասին: **Թեմա 9՝** Ակնարկ քվանտային տրամաբանության մասին: **Թեմա 10՝** Քվանտային լոկալիզացիայի և զուգահեռականության սկզբունքները: **Թեմա 11՝** ՀԳՑ-ի վիճակների և Բելի անհավասարության ստուգում: **Թեմա 12՝** Քվանտային համակարգչի իրականացման կոնկրետ օրինակներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0102/B19. «ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՏԱՐԴԱՅԻՆ ՆԵՆՔԻ ՖԻԶԻԿԱ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (18 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է բակալավրիատի ուսանողներին հաղորդել տեսական և գործնական գիտելիքներ ֆիզիկական համակարգիչների (ապարատուրային) ապահովման և համապատասխան տարրային հենքների, հենքերի բաղադրությունների և հենքերի մշակման ոլորտում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա տարրային հենքի նշանակությունը, նրա առանձնահատկությունները և նրա վրա դրվող պահանջներն ու սահմանափակումները,
2. կհասկանա տարրային հենքի ֆիզիկական իրականացման սկզբունքներն ու հնարավորությունները,
3. կկարողանա տվյալ նշանակության համար ընտրել տարրային հենք և նրա իրականացման միջոցները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վերացական (ձևական) տրամաբանահանրահաշվական տարրային հենքեր: **Թեմա 2՝** Ֆիզիկական տարրային հենքեր: **Թեմա 3՝** Միկրոէլեկտրոնային տարրային հենքեր: **Թեմա 4՝** Տրանզիստորային և ոչ տրանզիստորային տարրային հենքեր: **Թեմա 5՝** Ֆիզիկական տրամաբանություն և նրա տարրային հենքերը: **Թեմա 6՝** Հիշող սարքեր և նրանց տարրային հենքերը: **Թեմա 7՝** Ոչ դասական տրամաբանության տարրային հենքեր. բազմարժեք, անհստակ, անորոշականացված: **Թեմա 8՝** Պոլիստորային տարրային հենքեր:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0102/B12. «ԹԵՐՄՈՂԻՆԱՄԻԿԱ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Ուսումնասիրել թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի հիմնական գաղափարները: Դիտարկվում են թերմոդինամիկայի օրենքները, կայունության պայմանները, թերմոդինամիկական պոտենցիալների մեթոդները և հավասարակշիռ վիճակագրության ֆիզիկայի հիմունքները՝ կանոնական բաշխման մեթոդը դասական և քվանտային դեպքում, որոնք օգտագործվում են կոնկրետ խնդիրներ լուծելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի հիմնական սկզբունքները,
2. կհասկանա վիճակագրության հիմնական օրինաչափությունները,
3. կկարողանա լուծել վիճակագրական ֆիզիկայի խնդիրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վիճակագրության հիմնական սկզբունքները: **Թեմա 2՝** Թերմոդինամիկական մեծություններ: **Թեմա 3՝** Կանոնական բաշխման մեթոդ: **Թեմա 4՝** Իդեալական գազ: **Թեմա 5՝** Ֆերմի-Դիրակի և Բոզե-Էյնշտեյնի վիճակագրությունները: **Թեմա 6՝** Պինդ մարմին: **Թեմա 7՝** Ոչ իդեալական գազեր: **Թեմա 8՝** Մակերևութային երևույթներ: **Թեմա 9՝** Փուլերի հավասարակշռությունը և փուլային անցումները: **Թեմա 10՝** Քիմիական ռեակցիաներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B15. «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 9-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել նյութագիտության հիմնական օրենքները, նյութի կառուցվածքի առանձնահատկությունների իմացությունը, բյուրեղային նյութերի ստացման մեթոդների և դրանց մեջ առաջացած արատների ուսումնասիրման ունակությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա տարբեր նյութերի կառուցվածքը, համաչափության օրենքները և դրանց ազդեցությունը նյութերի հատկությունների վրա,
2. կհասկանա ֆիզիկական հատկությունների կախումը նյութի կառուցվածքի համաչափությունից,
3. կկարողանա օգտագործել այս մեթոդները նյութերի կառուցվածքը վերլուծելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նյութի կառուցվածքի ուսումնասիրման դրույթները, բյուրեղային նյութերի համաչափության դասերի հայտնաբերման ընդհանուր սկզբունքները: **Թեմա 2՝** Բյուրեղների հետազոտման ռենտգենակառուցվածքային վերլուծության կարևոր մեթոդները: Բյուրեղային նյութերի կառուցվածքային տիպերը՝ պղինձ, մոլիբդեն, վոլֆրամ, ածուխ, ալմաստ և այլն: **Թեմա 3՝** Տեղեկություններ անկատար բյուրեղների թերությունների, այն է՝ կետային արատների, դիսլոկացիաների մասին, դրանց հայտնաբերման և վերացման մեթոդները: **Թեմա 4՝** Գազերից, լուծույթներից և հալույթներից բյուրեղների աճեցման մեթոդները: **Թեմա 5՝**

Պոլիմերային նյութերի կառուցվածքը, դրանց վերամոլեկուլային կառուցվածքային տիպերը, ֆիզիկական և մեխանիկական հատկությունները: **Թեմա 6**՝ շեղուկ բյուրեղներ, դրանց կառուցվածքը (նեմատիկ, խոլեստերիկ, սմեկտիկ) և ֆիզիկական հատկությունները: **Թեմա 7**՝ Նանոկոմպոզիտներ, դրանց ֆիզիկական հատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

0102/B18. «ԿԻՄԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ՆԵՐՍՏՈՒԹՅՈՒՆ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (12 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացը ուսանողներին հաղորդում է հիմունքային անհրաժեշտ գիտելիքներ համակարգչի ֆիզիկական ապահովության և համակարգչային մոդելավորման մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կիսահաղորդիչների և կիսահաղորդչային սարքերի դերն ու նշանակությունը և նաև քվանտային մեխանիկայի կիրառման եղանակները,
2. կհասկանա կիսահաղորդչային շերտավոր սպեկտորը, նրա առանձնահատկություններն ու նաև դրա հիման վրա կիսահաղորդչային հատկություններն իրենց բացատրություններով,
3. կկարողանա կատարել կիսահաղորդչային և կիսահաղորդչային սարքերի էլեկտրական ու ֆոտոէլեկտրական բնութագրերի փորձարարական չափումները և տեսական հաշվարկները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Շրեդինգերի հավասարումը բազմամասնիկի համակարգի համար, ադիաբադ և մեխանիկական մոտավորություններ: **Թեմա 2**՝ Էլեկտրոնային վիճակներ: **Թեմա 3**՝ Ցանցի տատանումներ: **Թեմա 4**՝ Լիցքակիրների վիճակագրությունը կիսահաղորդիչներում: **Թեմա 5**՝ Կինետիկ և տեղափոխման երևույթներ: **Թեմա 6**՝ Կիսահաղորդիչների ֆիզիկական մոդելը: **Թեմա 7**՝ Էլեկտրոնախոռչային անցում: **Թեմա 8**՝ Կիսահաղորդչային սարքեր համասեռ կիսահաղորդիչների հիման վրա: **Թեմա 9**՝ Դիոդ, տրանզիստոր և տիրիստոր: **Թեմա 10**՝ Բազմավիճակ սարքեր: **Թեմա 11**՝ Լուսակառավարվող սարքեր: **Թեմա 12**՝ Լուսատու սարքեր: **Թեմա 13**՝ Լուսափոխակերպիչներ: **Թեմա 14**՝ Փոխակերպչային և ձևափոխիչ կիսահաղորդչային սարքեր: **Թեմա 15**՝ Կիսահաղորդչային պլասմիկ

տարրեր: **Թեմա 16՝** Ժամանակակից կիսահաղորդչային սարքերի մասին ակնարկ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք՝ գրավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Տրվում է առավելագույնը 4 հարց: Միավորների քայլը 0.5 է:

4.5.1. Դասընտրական դասընթացներ

0102/B21. «ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ՆԵՐՍՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ լաբորատոր աշխատանք)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել պինդ մարմնի ֆիզիկայի հիմնական հասկացություններին և մեթոդներին, որոնք կիրառվում են նյութաբանության, կիսահաղորդիչների և կիսահաղորդչային սարքերի ֆիզիկայի, էլեկտրոնիկայի, պինդ-մարմնային էլեկտրոնիկայի, ցածր ջերմաստիճանների ֆիզիկայի և ժամանակակից ֆիզիկայի այլ բնագավառներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պինդ մարմնի ֆիզիկայի հիմնական գաղափարները և մոտեցումները,
2. պատկերացում կունենա պինդ մարմնի ֆիզիկայի կիրառության հնարավոր բնագավառների մասին,
3. կկարողանա կատարել պինդ մարմնի մեխանիկական, ջերմային և էլեկտրական հատկությունների որակական և որոշ քանակական գնահատումներ, կատարել փորձեր և մեկնաբանել ստացված արդյունքները,
4. կունենա որոշակի հմտություններ պինդ մարմնի փորձարարական ֆիզիկայի բնագավառում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բյուրեղական կառուցվածքներ: **Թեմա 2՝** Հակադարձ ցանց: Դիֆրակցիան բյուրեղներում: **Թեմա 3՝** Կապերի տեսակները բյուրեղներում /վանդերվալայան, իոնային, կովալենտ, մետաղական և ջրածնային/: **Թեմա 4՝** Բյուրեղային ցանցի դինամիկա: Ներդաշնակ մոտավորություն: Ցանցի տատանումների ձայնային և օպտիկական ճյուղեր: **Թեմա 5՝** Բյուրեղային ցանցի ջերմային հատկությունները: Ջերմունակության դասական, Այնշտայնի, Դեբայի տեսու-

յունները: **Թեմա 6**՝ Ազատ էլեկտրոնային գազ: Էլեկտրոնային գազի ջերմու-նա-կությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յու-րաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխա-նաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B45. «ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ լաբորատոր աշխա-տանք)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ժամանակակից պայմաններում ծրագրային ապահովման և ծրագրավորման «լավ ոճի» մշակման համար միանշանակ աշխարհայացք, տալ հիմնարար գիտելիքներ ծրագրավոր-ման ժամանակակից տեսության և պրակտիկայի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից ծրագրավորման լեզուների դասակարգումը, նրանց զարգացման պատմությունը և ծրագրային համակարգերի մշակման և իրա-կանացման հիմնական խնդիրները,
2. կհասկանա ծրագրավորման ժամանակակից լեզուների հիմնական խնդիր-ները, նրանց հատկությունները, նրանց առավելություններն ու թերություն-ները, լեզուների թարգմանության խնդիրները,
3. կկարողանա կազմել պարզագույն ծրագրեր ժամանակակից մի քանի լեզու-ներով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծրագրավորման լեզուների դասակարգումը: **Թեմա 2**՝ Ծրագ-րա-վորման լեզուների հիմնական դասերի առավելություններն ու թերությունները: **Թեմա 3**՝ Հիմնական մոտեցումները ժամանակակից ծրագրավորմանը: **Թեմա 4**՝ Ժամանակակից ծրագրավորման լեզուների զարգացումը: **Թեմա 5**՝ Ծրագրավոր-ման լեզուների մշակման խնդիրները, նրանց դերը, կիրառությունը, հատկույթ-յունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0102/B23. «ՆԱՆՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ժամանակակից կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի հիմքը հանդիսացող ֆիզիկական երևույթների և դրանք բացատրելու համար կառուցված տեսությունների հետ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա չափային քվանտացման երևույթի և ցածր չափայնությամբ կիսահաղորդչային կառուցվածքների մասին,
2. կհասկանա ցածր չափայնությամբ համակարգերի գոտիական կառուցվածքն ուսումնասիրելու համար ստեղծված տեսությունները և մոտավորությունները,
3. կկարողանա ինքնուրույն ուսումնասիրել տարբեր տիպի և ձևի կիսահաղորդչային նանոկառուցվածքների էներգիական սպեկտրները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Չափային քվանտացման երևույթը: Ցածր չափայնությամբ համակարգերի դասակարգումը: 2D, 1D, 0D համակարգեր: **Թեմա 2՝** Էլեկտրոնը զանգվածեղ կիսահաղորդչում: Արդյունանար զանգված: Կապված էլեկտրոն, քվանտային փոս: Վիճակների խտության ֆունկցիան 3D, 2D, 1D դեպքերում: **Թեմա 3՝** Կիսահաղորդչային հետերոանցում: Հետերոանցման աճեցման մեթոդները և գոտիական կառուցվածքը: Բազմաշերտ կառուցվածքներ: **Թեմա 4՝** Անվերջ և վերջավոր խորությամբ ուղղանկյուն փոս: Պարաբոլական քվանտային փոս: Քվազիերկչափ համակարգեր: Ենթագոտիների առաջացումը: **Թեմա 5՝** Քվանտային լարեր: Ուղղանկյուն և շրջանային հատույթով քվանտային լար: Վիճակների խտության ֆունկցիան քվանտային լարերում: **Թեմա 6՝** Քվանտային կետեր: Անվերջ և վերջավոր խորությամբ գնդային քվանտային կետ: Եռաչափ պարաբոլային փոս: Վիճակների խտության ֆունկցիան քվանտային կետում: **Թեմա 7՝** Մասնիկի անցումը պոտենցիալին աստիճանով: Անցման և անդրադարձման գործակիցները: T մատրիցների մեթոդը: Ուղղանկյուն պոտենցիալային արգելք: Գերցանցեր, Կրոնիգ-Պենիի մոդելը: **Թեմա 8՝** Խառնուրդային վիճակները քվանտային հետերոկառուցվածքներում: Էքսիտոնային վիճակները քվանտային հետերոկառուցվածքներում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0101/B46. «ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԱՆԱԼԻԶԻ ԸՆՏՐՈՎԻ ՀԱՐՑԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (24 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մտածողության զարգացում, վերացական մտածողության հիմնավորում, մաթեմատիկական օբյեկտների բաժանումը այդ օբյեկտների հատկությունների հիման վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մետրիկական, նորմավորված, բանախյան և հիլբերտյան տարածությունները, նրանց կառուցվածքն ու բնորոշ հատկությունները,
2. կհասկանա այդ տարածություններում մաթեմատիկական տեսությունները կիրառելու հնարավորությունները,
3. կկարողանա ինքնուրույն ուսումնասիրել և հետազոտել տարբեր տիպի և ձևի մաթեմատիկական տարածություններ:

Բովանդակությունը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել լանդշաֆտագիտության հիմունքներին, լանդշաֆտային թաղանթի բաղադրիչների փոխադարձ կապին և լանդշաֆտների շրջանացմանն ու դասակարգմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա ԲՏՀ կառուցվածքը, դրանցում գոյություն ունեցող փոխազդեցությունը և փոխապայմանավորվածությունը,
2. կհասկանա ԲՏՀ-ի պահպանության, փոփոխության և նրանցում ընթացող պրոցեսների պատճառահետևանքային կապերը,
3. կկարողանա տարբերել լանդշաֆտների տիպերը, դրանցում գոյություն ունեցող ստորակարգությունը և բնության մեջ գոյություն ունեցող լանդշաֆտների տեսակները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երկրի մոլորակի լանդշաֆտային թաղանթ-ուլորտները: **Թեմա 2՝** Լանդշաֆտային ոլորտի զարգացումը և դինամիկան: **Թեմա 3՝** Մարդ-բնություն փոխհարաբերությունը: **Թեմա 4՝** Լանդշաֆտային հետազոտումներ և շրջանացում: **Թեմա 5՝** Լանդշաֆտային թաղանթի գոնայականությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 2-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B18. «ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 7,5 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել բակտերիաների էկոլոգիական զարգացման պատմությանը, հիմնական ուղղություններին, ուսումնասիրման մեթոդներին, կիրառական ասպեկտներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա միկրոօրգանիզմների էկոֆիզիոլոգիան, բակտերիաների դեմէկոլոգիան, սինէկոլոգիան, ջրային մանրէների էկոլոգիան,
2. կիմանա միկրոօրգանիզմների դերը կենսատերկրաքիմիական մեծ շրջանառությունում, հողային մանրէների էկոլոգիան, հողը որպես մանրէների հետեւող կենսամիջավայր:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բակտերիաների աուտէկոլոգիա: **Թեմա 2՝** Միկրոօրգանիզմների էկոֆիզիոլոգիա: **Թեմա 3՝** Երկրի ձգողություն: Բակտերիաների համար տոքսիդ միացություններ և իոններ: Էքստեմոֆիլ մանրէներ: Բակտերիաների դեմէկոլոգիա: Մանրէների էկոլոգիական ստրատեգիայի առանձնահատկությունները միկրոօրգանիզմների, բույսերի և կենդանիների հետ փոխհարաբերություններում: **Թեմա 4՝** Բակտերիաների սինէկոլոգիա: **Թեմա 5՝** Ջրային մանրէների էկոլոգիա: **Թեմա 6՝** Հողային մանրէների էկոլոգիա: **Թեմա 7՝** Մանրէների դերը տարրերի կենսատերկրաքիմիական մեծ շրջանառությունում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1, 1, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B19. «ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հողի կազմի, հողերի ագրոարտադրական խմբավորմանը, հողագիտական նյութերի գրագետ օգտագործումը հողերի բերրիության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման միջոցառումների մշակման և իրականացման գործում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հողերի առաջացումը, կազմը, հատկությունները, ծագումը,
2. կկարողանա ինքնուրույն վերլուծել և օգտագործել հողագիտական լաբորատոր և դաշտային հետազոտման նյութերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասկացողություն հողի և նրա բերրիության մասին: Մելիորատիվ հողագիտության զարգացման պատմությունը Հայաստանում: **Թեմա 2՝** Հողառաջացնող ապարներ: Հողի մեխանիկական կազմը: **Թեմա 3՝** Հողի կլանողական հատկությունը, կոլոիդները, կլանման ձևերը: **Թեմա 4՝** Հողի ստրուկտուրա: **Թեմա 5՝** Հողի ջրային հատկությունները և ջրային ռեժիմը: Հողի օդային ռեժիմը: **Թեմա 6՝** Հողի ջերմային հատկությունները և ռեժիմը: Հողի սննդային ռեժիմը: **Թեմա 7՝** Հողակազմող պրոցեսի գործոններ: **Թեմա 8՝** Հողի ծագումը, կարգաբանումը, բնահողային գոտիները: **Թեմա 9՝** Հայաստանի կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, անտառային, լեռնամարգագետնային գոտու հողերը: **Թեմա 10՝** Հողի էրոզիան և պայքարը նրա դեմ: **Թեմա 11՝** Հողային քարտեզներ: Հողային կադաստր:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

0103/B33. «ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել անտառօգտագործմանը ՀՀ անտառներում և նրա նշանակությանը, անտառային համակեցության բաղադրամասերին, անտառանյութի պատրաստման տեխնոլոգիային, հատա-

տեղերի հատկացման ձևերին, նախապատրաստմանը, հանձնմանը, ընդունմանը, օրենսդրական ներկա պահանջներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտառօգտագործումը ՀՀ անտառներում և նրա նշանակությունը, անտառային համակեցության բաղադրամասերը, անտառանյութի պատրաստման տեխնոլոգիան, հատատեղերի հատկացման ձևերը, նախապատրաստումը, հանձնումը, ընդունումը,
2. կկարողանա ինքնուրույն մասնակցել հատատեղերի շահագործմանը, անտառվերականգնմանը, խնամքի և սանիտարական հատումների իրականացմանը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասկացողություն անտառօգտագործում առարկայի մասին:
Թեմա 2՝ Անտառօգտագործումը ՀՀ անտառներում և նրա նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ: **Թեմա 3՝** Անտառանյութի պատրաստման տեխնոլոգիան: **Թեմա 4՝** Հատատեղի հատկացումը: **Թեմա 5՝** Հատատեղերի նախապատրաստումը, հանձնումն ու ընդունումը: **Թեմա 6՝** Ծառի ենթահատումը և հատումը, ճյուղերի կտրտումը: **Թեմա 7՝** Գերանահատումը, անտառպատրաստման մնացորդների հավաքումը: **Թեմա 8՝** Փայտի հատումն ու գոյություն ունեցող հատման մեթոդները: **Թեմա 9՝** Անտառահատիչ գործիքները և մեխանիզմները: **Թեմա 10՝** Անտառանյութի պատրաստման արտադրական նորմերը: **Թեմա 11՝** Անտառանյութի ընդունումը և պահպանումը: **Թեմա 12՝** Անտառի կողմնարդյունքների օգտագործումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1, 1, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B21. «ԾԱՌԱՍԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ծառերի և թփերի արտաքին կառուցվածքին, բնափայտի տեսակներին, նրանց նշանակությանը և պահպանման հատկանիշներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա ծառերի և թփերի արտաքին կառուցվածքը, նրանց տիպերը, անտառային տարբեր գոտիները,
2. կկարողանա իրարից տարբերել բույսերի տեսակները, ընտանիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծառագիտությունն առարկայի հիմնական նպատակները: **Թեմա 2՝** Հասկացողություն երկրի կենսոլորտի մասին: **Թեմա 3՝** Կլիմայական գործոնների ազդեցությունը ծառերի ձևավորման վրա: **Թեմա 4՝** Էդաֆիտ գործոնները և նրանց դերը բնափայտի տեսակների աճի, զարգացման և տարածման գործում: **Թեմա 5՝** Բիոտիկ և անթրոպոգեն գործոնների ազդեցությունը դենդրոֆլորայի վրա: **Թեմա 6՝** Բուսական տեսակ: **Թեմա 7՝** Բույսերի արեալը և նրանց տիպերը: **Թեմա 8՝** Հասկացողություն ֆիտոցենոլոգիայի և նրա առանձնահատկությունների մասին: **Թեմա 9՝** Անտառային տարբեր գոտիների նկարագրությունը: **Թեմա 10՝** Բնափայտային բույսերի ֆիլոգենետիկական համակարգը: **Թեմա 11՝** Սոճագիների, սոսագիների, վարդաձաղկավորների, լորենիների, ընկուզավորների, ուռազգիների, թեղազգիների ընտանիքների ընդհանուր բնութագիրը, էկոլոգիական առանձնահատկությունները և նշանակությունը, օգտագործման բնագավառները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1, 1, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B34. «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ էկոլոգիական մոնիթորինգի հիմնահարցերի վերաբերյալ պատկերացումներ, ձևավորել բնապահպանության ոլորտում էկոլոգիական մոնիթորինգի հիմնահարցերի լուծման եղանակների և կիրառվող մեթոդների մասին մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա էկոլոգիական մոնիթորինգի և նորմավորման հիմնահարցերը և մոտեցումը,

2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հիմնահարցերի լուծման ոլորտում,
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էկոլոգիական մոնիթորինգի համակարգը, սխեման, գործունեության հիմնական ուղղությունները և խնդիրները: **Թեմա 2՝** Շրջակա միջավայրի գլոբալ մոնիթորինգի համակարգը: **Թեմա 3՝** Էկոլոգիական մոնիթորինգի տեսակները՝ գլոբալ ֆոնային, ռեգիոնալ և լոկալ, բազային և իմպակտ: **Թեմա 4՝** Մթնոլորտի մոնիթորինգի համակարգը: **Թեմա 5՝** Մոնիթորինգի կազմը: **Թեմա 6՝** Ագրոէկոլոգիական մոնիթորինգի ենթատեսակները, խնդիրները: **Թեմա 7՝** Աղմուկի աղտոտվածության մոնիթորինգ: **Թեմա 8՝** Բիոտային՝ կենսաբանական մոնիթորինգ: **Թեմա 9՝** Նորմավորումը որպես լոկալ և գլոբալ մասշտաբներով բնական շրջապատի որակի կարգավորման կարևոր տարր:

Ստուգումների անցկացման ձևերը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ընթացիկ ստուգում. Բանավոր հարցում: Առաջադրվում է 4 հարց, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ընթացիկ ստուգում. Խնդիրների լուծում կամ այլ գրավոր առաջադրանք: Քննական հարցատումը պարունակում է 4 խնդիր կամ այլ գրավոր առաջադրանք, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0301/B51. «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հասարակության և բընության փոխներգործության հիմնահարցերին, ժամանակակից էկոլոգիական խնդիրներին և դրանց իրավական կարգավորման մեխանիզմներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի անհրաժեշտ գիտելիքներ բնության և նրա ռեսուրսների դերի և նշանակության վերաբերյալ,
2. կկարողանա համակարգել էկոլոգոիրավական նորմերը և կիրառել այդ նորմերը իրավական խնդիրների լուծման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Շրջակա միջավայրի պահպանության սկզբունքները: **Թեմա 2՝** Բնօգտագործման իրավունքը: **Թեմա 3՝** Մարդու էկոլոգիոհրավական կարգավիճակը: **Թեմա 4՝** Էկոլոգիական փորձաքննություն: **Թեմա 5՝** Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության մեխանիզմը: **Թեմա 6՝** Պատասխանատվությունը էկոլոգիական իրավախախտումների համար:

Ստուգումների անցկացման ձևերը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ընթացիկ ստուգում. Բանավոր հարցում: Առաջադրվում է 4 հարց, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ընթացիկ ստուգում. Խնդիրների լուծում կամ այլ գրավոր առաջադրանք: Քննական հարցատոմսը պարունակում է 4 խնդիր կամ այլ գրավոր առաջադրանք, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0103/B27. «ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱՅԻՈՆԱԼ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (7 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել էկոլոգիական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց էկոլոգիա գիտության պատմությանը, բնական համակարգերի կազմավորման, գործունեության հիմունքներին, բնություն-հասարակություն համակարգում էկոլոգիայի հիմնախնդիրներին: Ուսանողներին ծանոթացնել կենսոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություններին, ինչպես նաև բնության պահպանության և ռացիոնալ բնօգտագործման հիմնական սկզբունքներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էկոլոգիայի որպես գիտության ձևավորման, կենդանիների և բույսերի էկոլոգիայի, էկոհամակարգի, կենսացենոզի և նոոսֆերայի ուսմունքների, մարդկության կայուն զարգացման սկզբունքների մասին,
2. կհասկանա բնական և անթրոպոգեն էկոհոմակարգերի զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները,
3. կկարողանա վերլուծություններ կատարել էկոլոգիական վիճակի մասին և կատարել համապատասխան եզրակացություններ, կատարել ջրի, հողի և օդի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական անալիզներ,

4. կիմանա կենսոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցությունները, դրանց կանխարգելման սկզբունքները և ձեռք բերումները բնության պահպանության բնագավառում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էկոլոգիա և նրա կայացման պատմությունը: **Թեմա 2**՝ Օրգանիզմի և միջավայրի միջև փոխազդեցությունները: **Թեմա 3**՝ Պոպուլյացիաների էկոլոգիա: **Թեմա 4**՝ Համակեցություններ: **Թեմա 5**՝ Նյութերի երկրաբանական և կենսաբանական շրջապտույտը: **Թեմա 6**՝ Կենսոլորտ: **Թեմա 7**՝ Կենսոլորտի էկոլոգիայի հիմնական ուղղությունները: **Թեմա 8**՝ Անթրոպոգեն էկոհամակարգեր: **Թեմա 9**՝ Կենսոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցությունները: **Թեմա 10**՝ Անթրոպոգեն ազդեցությունները մթնոլորտի, կլիմայի, ջրոլորտի և քար-ոլորտի վրա: **Թեմա 11**՝ Անթրոպոգեն ազդեցությունները համակեցությունների վրա: **Թեմա 12**՝ Բնության պահպանության և ռացիոնալ բնօգտագործման հիմնական սկզբունքները: **Թեմա 13**՝ Կենսաբազմազանության պահպանություն: **Թեմա 14**՝ Էկոլոգիան և մարդու առողջությունը: **Թեմա 15**՝ Էկոլոգիական իրավունքի հիմունքները: **Թեմա 16**՝ Միջազգային համագործակցությունը էկոլոգիայի շրջանակներում: **Թեմա 17**՝ Բնության պահպանություն և գլոբալիզացիա: **Թեմա 18**՝ Բնության պահպանություն և նանոտեխնոլոգիաներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1, 1, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B22. «ԱՆՏԱՌԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

(7 կրեդիտ)

Շաբաթական՝ 8 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել անտառգնահատման և անտառաշինության առարկային, անտառգնահատման մեթոդներին, դրանց առանձնահատկություններին և կիրառման բնույթին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտառգնահատման ուսումնասիրման բնագավառները, ծառերի, ծառուտների, անտառային զանգվածների և մթերված անտառանյութի մեթոդիկան և չափումների տեխնոլոգիան,

2. կկարողանա մասնակցել անտառգնահատման և անտառաշինության գործընթացին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտառգնահատման մեթոդները, դրանց առանձնահատկությունները և կիրառման բնույթը: **Թեմա 2՝** Անտառգնահատման համար օգտագործվող սարքերն ու գործիքները: **Թեմա 3՝** Անտառգնահատման հիմնական ցուցանիշները և դրանց հաշվառման գլխավոր եղանակները: **Թեմա 4՝** Ծառաբնի և ծառուտների բնափայտի ծավալի որոշման եղանակները և համապատասխան բանաձևերի կիրառման առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Անտառանյութի դասակարգումը ըստ տեսակների: **Թեմա 6՝** Հասկացողություն շինափայտի և վառելափայտի մասին: **Թեմա 7՝** Անտառգնահատման հաշվեցուցակները և դրանց լրացման մեթոդիկան: **Թեմա 8՝** Կանգուն ծառերի և ծառուտների անտառգնահատման մեթոդիկան: **Թեմա 9՝** Սղոցած փայտանյութի հիմնական տեսակները և դրանց գնահատումը: **Թեմա 10՝** Անտառգնահատման այլ կարևոր ցուցանիշներ և դրանց որոշման մեթոդները: **Թեմա 11՝** Անտառային ոչ բնափայտավոր մթերքների և օգուտների գնահատումը: **Թեմա 12՝** Առանձին ծառերի և ծառուտների աճի գնահատումը: **Թեմա 13՝** Հասկացողություն հաշվարկային հատատեղերի մասին և որոշման մեթոդիկան: **Թեմա 14՝** Անտառային տարածքների գնահատումը: **Թեմա 15՝** Անտառգնահատման տվյալների համակարգչային մշակումը և վերլուծությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1, 1, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B23. «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կանաչապատվող տարածքներում իրականացվող հետազոտական աշխատանքների հետ, կանաչապատման տիպերին և կատեգորիաներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կանաչապատման տիպերն ու կատեգորիաները, ոճերը,

- կկարողանա մասնակցել բնակավայրերի կանաչապատմանը, կատարել տնկման աշխատանքներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասկացողություն քաղաքների և այլ բնակավայրերի կանաչապատման մասին: **Թեմա 2՝** Կանաչապատման մեջ կիրառվող հիմնական հասկացողությունները: **Թեմա 3՝** Կանաչ տնկարկների նախագծման մեթոդիկա: **Թեմա 4՝** Հասկացողություն պարկային ոճերի մասին: **Թեմա 5՝** Գեղարվեստական կոմպոզիցիաների հիմնադրման սկզբունքները և առանձնահատկությունները կանաչապատման բնագավառում: **Թեմա 6՝** Կանաչապատման կատեգորիաները: **Թեմա 7՝** Սահմանափակ օգտագործման կանաչ տնկարկներ: **Թեմա 8՝** Հատուկ նշանակության կանաչ տնկարկներ: **Թեմա 9՝** Կանաչապատման տիպեր: **Թեմա 10՝** Ուղղաձիգ կանաչապատում բնափայտային լիանաներով և թափվող բուսատեսակներով: **Թեմա 11՝** Ծաղկային ձևավորումների դերն ու նշանակությունը կանաչապատման մեջ: **Թեմա 12՝** Ծառաթփային գեղազարդ բուսատեսակների տնկարանների կառուցվածքը, խնդիրները, դերն ու նշանակությունը կանաչապատման համար: **Թեմա 13՝** Ծառերի ու թփերի գեղազարդ ծառատեսակների գնահատումը, ընտրությունը և տնկումը: **Թեմա 14՝** ՀՀ կանաչապատման բնագավառում առավել հեռանկարային գեղազարդ ծառաթփատեսակների տեսակաշարը և համառոտ բնութագիրը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1, 1, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B25. «ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՈՒՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 9 ժամ (18 ժամ դասախոսություն, 18 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9–րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ քարտեզագրության հիմնավորված ժամանակակից մեկնաբանում, ձևավորել գեոինֆորմացիոն համակարգերի ու դրանց օգտագործման մասին տեսական ու կիրառական գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա ժամանակակից պայմաններում ընթացող գիտությունների ինտեգրացիայի մասին, որի արդյունքում տեղի են ունենում գիտությունների ակ-

տիվ զարգացում, այդ թվում նաև քարտեզագրություն, կիմանա գեոինֆորմացիոն համակարգերի գործառական կառուցվածքի տեսական հիմքերը և կապը ջրաօդերևութաբանության հետ,

2. կիմանա և ձեռք կրերի կայուն գիտելիքներ քարտեզագրության և քարտեզագիտության նոր ճյուղի զարգացման վերաբերյալ, կիսականա ԱՏՀ-ում տրվյալների կառավարման մեխանիզմը,
3. կկարողանա դառնալ լավ քարտեզագիր, մասնագետ միայն այն, եթե զուգակցի ժամանակակից տեխնոլոգիաները, սարքածրագրային համակարգերը, քարտեզակազմողական աշխատանքների ընթացքում, ինքնուրույն կերպով ստեղծել ԱՏՀ տվյալների հենք ջրաօդերևութաբանական հետազոտությունների կազմակերպման նպատակով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քարտեզագրական ժամանակակից պատկերումները: **Թեմա 2՝** Քարտեզագրական ընդհանրացում, քարտեզների և ատլասների տիպերը: **Թեմա 3՝** Քարտեզների օգտագործման մեթոդները: **Թեմա 4՝** Քարտեզագիտության և քարտեզագրության երկրատեղեկատվական համակարգերի կապերը: **Թեմա 5՝** Երկրատեղեկատվական քարտեզագրումը և երկրատեղեկատվական համակարգերը, որպես գիտության տեխնիկա և տեխնոլոգիա: **Թեմա 6՝** Գեոինֆորմատիկայի ընդհանուր դրույթները: **Թեմա 7՝** Տվյալների գրանցումը, մուտքագրումը և պահպանումը: Տարածական տվյալների կառուցումը: **Թեմա 8՝** Տվյալների վերլուծությունը և մոդելավորումը: **Թեմա 9՝** Տվյալների բազաների կառավարման համակարգերը: **Թեմա 10՝** Մեքենայական գրաֆիկայի տեխնիկական միջոցները, տվյալների տեսանելիության մեթոդներն ու միջոցները: Համակարգչային քարտեզների և ատլասների ստեղծման առանձնահատկությունները, ջրաօդերևութաբանական քարտեզների ավտոմատ ստացում: **Թեմա 11՝** Գեոինֆորմատիկայի կիրառական ասպեկտները ջրաօդերևութաբանության մեջ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 2-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/Յ29. «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի մասին գիտելիքներ, ձևավորել բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծումն առաջարկող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էկոլոգիական փորձաքննության հիմնահարցերը և մոտեցումները,
2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հիմնահարցերի լուծման ոլորտում,
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էկոլոգիական փորձաքննության էությունը և խնդիրները, գլոբալ բնույթի էկոլոգիական հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները: ***Թեմա 2՝*** Արդյունաբերական–արտադրական պրոցեսների էկոլոգիզացիա, ձեռնարկությունների համար անհրաժեշտ էկոլոգիական փաստաթղթեր: ***Թեմա 3՝*** Էկոլոգիական փորձաքննության գործընթացում դիտարկվող սոցիալ-մշակութային հիմնախնդիրները, սոցիալական վերլուծության հիմնական ասպեկտները: ***Թեմա 4՝*** Հիդրոէլեկտրակայանների, միջուկային էներգետիկայի օբյեկտների, քիմիական և մարդաքիմիական արդյունաբերական ձեռնարկությունների, ոռոգման և չորացման նախագծերի նախագծման, շինարարության, վերակառուցման էկոլոգիական փորձաքննության հիմնական խնդիրները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1, 1, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B31. «ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՆՏԱՌԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (18 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 9–րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել անտառային տնտեսության վարման խնդիրներին, արհեստական և բնական ճանապարհով անտառների արդյունավետ վերարտադրության համար պայմանների ստեղծմանը, օգտագործվող գլխավոր և ուղեկցող ծառատեսակներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա անտառային տնտեսությունում կիրառվող անտառվերականգնման և անտառապատման եղանակները՝ կախված բնակլիմայական պայմաններից, տեղանքից, շրջանցումից և այլ գործոններից, դաշտապաշտպան անտառաշերտերը,
2. կկարողանա տարբերել անտառամշակույթների տեսակները, անտառային տնկարանները, գլխավոր և ուղեկցող ծառատեսակները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտառային տնտեսության վարման խնդիրները: **Թեմա 2՝** Անտառվերականգնման և անտառապատման բնական և արհեստական եղանակները: **Թեմա 3՝** Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներում օգտագործվող ծառատեսակների կենսաէկոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Անտառամշակույթների տեսակները և ստեղծման մեթոդները: **Թեմա 5՝** Անտառամշակույթների հիմնադրման նախագիծ: **Թեմա 6՝** Հողի նախապատրաստումը անտառամշակույթներ հիմնադրելու համար: **Թեմա 7՝** Անտառային տնկարաններ: Դպրոցի հողամաս: Պարարտանյութերի օգտագործում: Հերբիցիդների օգտագործում: Տնկանյութի հանումը, պահպանումը և տեղափոխումը: **Թեմա 8՝** Դաշտապաշտպան անտառաշերտեր: **Թեմա 9՝** Դաշտապաշտպան ազդեցությունը ձյունաշերտերի կարգավորման գործում, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության վրա: **Թեմա 10՝** Դաշտապաշտպան անտառաշերտերի հակաէրոզիոն դերը: **Թեմա 11՝** Դաշտապաշտպան անտառաշերտը ոռոգվող հողերում, արոտավայրերում, նրանց տիպերը, կանաչ հովանոցներ և նրանց նշանակությունը: **Թեմա 12՝** Ճանապարհապաշտպան տնկարաններ, նրանց նշանակությունը, առանձնահատկությունները: **Թեմա 13՝** Հասկացողություն տնկարանների մասին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1, 1, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

0103/B32. «ԿԵՆՍՍՇԽԱՐՀԻ ԵՎ ԿԵՆՍՈԼՈՐՏԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (14 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 10–րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ կենդանի օրգանիզմների աշխարհագրական տարածման և տեղաբաշխման, երկրա-

գնդի և դրա առանձին ռեզիդենտների բուսական ծածկույթի և կենդանական աշխարհի կառուցվածքի կարևորագույն օրինաչափությունների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ցամաքային և ջրային էկոհամակարգերի կազմակերպման կարևորագույն սկզբունքները, դրանց տարածաժամանակային փոփոխականության հիմնական օրինաչափությունները,
2. կհասկանա բիոտայի տեղն ու դերը կենսոլորտի ձևավորման գործում,
3. կկարողանա օգտվել կենսաշխարհագրական քարտեզներից, յուրացնել համեմատական աշխարհագրական մեթոդները՝ կենսաշխարհագրական օբյեկտների նկատմամբ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Կենսաշխարհագրական հիմնական հասկացությունները: **Թեմա 3՝** Հասկացություն կենսոլորտի մասին: **Թեմա 4՝** Հասկացություն կենսացենոզի մասին: **Թեմա 5՝** Հասկացություն արեալի մասին: **Թեմա 6՝** Ժամանակակից ֆլորայի և ֆաունայի ծագումը: **Թեմա 7՝** Ցամաքի ֆլորիստական և ֆաունիստական ռեզիդենտները: **Թեմա 8՝** Ցամաքի հիմնական բիոմները: **Թեմա 9՝** Բարձրադիր գոտիականությունը՝ ցամաքային օրգանիզմների տարածման գործում: **Թեմա 10՝** Կյանքը կղզիներում: **Թեմա 11՝** Կյանքի առանձնահատկությունները ներքին ջրային ավազաններում: **Թեմա 12՝** Կյանքի առանձնահատկությունները Համաշխարհային օվկիանոսում:

Ստուգումների անցկացման ձևերը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ընթացիկ ստուգում. Բանավոր հարցում: Առաջադրվում է 4 հարց, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ընթացիկ ստուգում. Խնդիրների լուծում կամ այլ գրավոր առաջադրանք: Քննական հարցատոմսը պարունակում է 4 խնդիր կամ այլ գրավոր առաջադրանք, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

0103/B28. «ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4,5 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 10-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կենսատեխնոլոգիական գործընթացների իրագործման տարբեր փուլերին: Ուսանողը կիմանա ինչպիսին է կենսատեխնոլոգիայի ներդրումը գյուղատնտեսության, առողջապա-

հոլթյան, էներգետիկայի, սննդային արդյունաբերության պրոբլեմների լուծման գործում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կենսատեխնոլոգիական գործընթացի անհրաժեշտ փուլերը,
2. կիմանա գենետիկական և բջիջային ճարտարագիտության հիմունքները,
3. կկարողանա աշխատել տարբեր կենսատեխնոլոգիական արտադրություններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կենսաբանական օբեկտների ընտրություն: ***Թեմա 2՝*** Մեկուսացված կուլտուրաներ, գենետիկական և բջջային ճարտարագիտություն: ***Թեմա 3՝*** Կենսաառեկատրոնների կառուցվածքը: ***Թեմա 4՝*** Արգասիքների անջատումը, մաքրումը և մոդիֆիկացում: ***Թեմա 5՝*** Իմոբիլիզացված ֆերմենտներ և կենսակատալիտիկ համակարգեր: ***Թեմա 6՝*** Կենսատեխնոլոգիայի ծառայությունը ժողովրդական տնտեսության, առողջապահության և գիտության ասպարեզում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 8 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

5. ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈԴՈՒԼՆԵՐ

5.1. «Պատմություն» մասնագիտություն

Ուսումնական (հնագիտական-ազգագրական) պրակտիկա (2 կրեդիտ)

2 շաբաթ տևողությամբ, 4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Պրակտիկայի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել նախնական գիտելիքներ հնագիտական և ազգագրական բնույթի հուշարձանների, կենցաղային, պաշտամունքային, տնտեսական նյութերի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճանաչել հնագիտական և ազգագրական հուշարձանների հիմնական տեսականին.
2. կընկալի հնագիտական և ազգագրական նյութը դաշտում ձեռք բերելու պարզագույն սկզբունքները.
3. կկարողանա կատարել տարրական կարգի վերլուծական բնույթի հնագիտական և ազգագրական աշխատանք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծանոթություն Երևանի հնագույն ամրոց-բնակավայրերի հետ (Շենգավիթ, Էրեբունի, Կարմիր-Բլուր): Դասախոսություն հին Երևանի ժողովրդական կենցաղից: **Թեմա 2՝** Երևանից դեպի Ողջաբերդ, Հացավան, Գառնի և Գեղարդ տանող ճանապարհին գտնվող պատմա-ճարտարապետական հուշարձանները. ծանոթություն: Հացավանի և Գառնիի ազգագրությունը: **Թեմա 3՝** Հին Արտաշատի, Դվինի հնագիտական հուշարձանները: Արարատի մարզում վերաբնակված պարսկահայերի ազգագրությունը: **Թեմա 4՝** Աշտարակի և մերձակայքի վաղ և զարգացած միջնադարի քրիստոնեական պաշտամունքային հուշարձանները: Արագածոտնի քաղաքի ազգագրությունը համաձայն Աշտարակի տրվյալների: **Թեմա 5՝** Արուճի և Մաստարայի հնությունները: Այցելություն Մարդարապատի ճակատամարտի հուշահամալիր և Հայաստանի ազգագրության պետական թանգարան:

Ուսումնական (թանգարանային-արխիվային) պրակտիկա (4 կրեդիտ)

4 շաբաթ տևողությամբ, 6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Պրակտիկայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել թանգարանային և արխիվային աշխատանքի բնագավառներին բնորոշ առանձնահատկություններին և Հայաստանի տարբեր արխիվներին, թանգարաններին ու հնավայրերին:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա հարուստ գիտելիքներ արխիվային ֆոնդերի, թանգարանների գիտաֆոնդային, գիտահետազոտական, հաշվառման, ցուցադրության կազմակերպման վերաբերյալ.
2. կունենա պատկերացում արխիվային նյութերի և թանգարանային առարկաների պահպանության, վերականգնման աշխատանքների մասին.
3. կկարողանա տիրապետել թանգարանային համակարգերի կառավարման սկզբունքներին:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Ծանոթություն թանգարանային (մշտական և ժամանակավոր) ցուցադրության կառուցման մեթոդներին, գիտաֆոնդային աշխատանքներին, պահպանության ձևերին ու խնդիրներին, գիտահետազոտական աշխատանքներին և առանձնահատկություններին, վերականգնողական աշխատանքների ձևերին ու մեթոդներին, գիտական արխիվի կազմակերպման խնդիրներին: **Թեմա 2՝** Թանգարանային նյութերի բաժանումը խմբերի ըստ դրանց ֆունկցիաների, թանգարանային առարկաների հիմնական խմբերը ըստ ցուցադրությունում ունեցած դրանց դերի և ֆունկցիայի. իսկական առարկաներ՝ նախօրինակներ, նախօրինակների ճշգրիտ վերարտադրումներ և դրանց գիտական վերակառուցումներ: **Թեմա 3՝** Գիտաօժանդակ նյութեր, թանգարանային առարկաների հաշվառում. Բովանդակությունն ու խնդիրները: Հաշվառման փուլերը. նախնական հաշվառում, նախնական գիտական մշակում, թանգարանային ֆոնդի սխեմատիկ դա-

սակարգում, և գիտական գույքագրում: Նախնական հաշվառման կարգը, ակտավորում, առարկաների թանգարանային նկարագրություն:

Մանկավարժական պրակտիկա (4 կրեդիտ)

*4 շաբաթ տևողությամբ, 7-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.*

Դասընթացը նպատակն է ուսանողներին ծանոթացնել մանկավարժական փորձի հետ: Պրակտիկան անց է կացվում Տավուշի մարզի տարբեր դպրոցներում: Պրակտիկան հնարավորություն է տալիս ուսանողներին 4 շաբաթյա ժամանակահատվածում ուսումնասիրել դասարանային աշխատանքը և զբաղվել կարճաժամկետ մանկավարժական գործունեությամբ բուհական ուսումնառության ընթացքում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա տիրապետել մանկավարժական գործնական գիտելիքներին,
2. կունենա գիտելիքներ և փորձառություն մանկավարժական գործի վերաբերյալ,
3. կկարողանա զբաղվել մանկավարժական գործունեությամբ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նախապատրաստական սեմինար: ***Թեմա 2՝*** Դպրոցի ընտրություն: ***Թեմա 3՝*** Պասիվ պրակտիկա, այցելություն տվյալ դասաժամերին, դասարանի հետ ծանոթացում: ***Թեմա 4՝*** Ակտիվ պրակտիկա, օրագրերի լրացում, մանկավարժի և հոգեբանի ստուգում: ***Թեմա 5՝*** Դասաժամի ինքնուրույն կազմակերպում: ***Թեմա 6՝*** Դասալսումներ: ***Թեմա 7՝*** Պրակտիկայի ընթացքի ամփոփում:

Պետական մասնագիտական քննություն (4 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

5.2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

Մանկավարժական պրակտիկա (4 կրեդիտ)

*4 շաբաթ տևողությամբ, 7-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ զարգացնել դասավանդելու հմտություն:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայոց լեզու և հայ գրականությունն դասավանդելու մեթոդական սկզբունքները,
2. կիսականա դասավանդման ժամանակ անհրաժեշտ հմտությունների հետ առնչվող խնդիրները,
3. կկարողանա դասավանդել հայոց լեզու և հայ գրականություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Հանրակրթական դպրոցում “Հայոց լեզու” և “Հայ գրականություն” առարկաների դասավանդման համար տեսական և մեթոդական անհրաժեշտ գիտելիքների գործնական ստուգում և համապատասխան փաստաթղթերի (մանկավարժական պրակտիկայի օրագիր և այլն) լրացման ստուգում:

Պետական մասնագիտական քննություն (4 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն

Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն

5.3. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն

Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)

4 շաբաթ տևողությամբ, 7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Պրակտիկայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել էքսպերիմենտալ հետազոտության կատարման հմտություններին, ծանոթացնել էքսպերիմենտալ աշխատանքի իրականացման սկզբունքներին և դրանց ներկայացվող պահանջներին:

Պրակտիկայի արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի էքսպերիմենտալ հետազոտություն իրականացնելու հմտություններ,
2. կիմանա էքսպերիմենտալ աշխատանքի սկզբունքներն ու պահանջները,
3. կկարողանա ընդհանրացնել և վերլուծել հետազոտության արդյունքները:

Մանկավարժական պրակտիկա (2 կրեդիտ)

2 շաբաթ տևողությամբ, 9-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Պրակտիկայի նպատակն է ձեռք բերել ժամանակակից պահանջներին համապատասխան գործնական, մանկավարժական հմտություններ, ուսանողների մոտ ձևավորել հոգեբանության և մանկավարժության դասավանդման հմտություններ, դասընթացի կազմակերպման ունակություն և դասախոսությունների կազմակերպում:

Պրակտիկայի արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դասավանդման մեթոդիկայի սկզբունքներն ու առանձնահատկությունները,
2. կհասկանա կրթության և դաստիարակության մանկավարժական, հոգեբանական գործառնությունների դերը ուսուցման գործընթացում,
3. կկարողանա գործնականում կիրառել ձեռք բերած մանկավարժական հմտությունները:

Պետական մասնագիտական քննություն (4 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

5.4. «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտություն

Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)

4 շաբաթ տևողությամբ, 9-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Արտադրական պրակտիկայի նպատակն է կոնկրետ հիմնարկության օրինակով ամրապնդել և խորացնել հիմնարար տնտեսագիտական առարկաների գծով գործնական հմտությունները:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի ուսումնասիրված հիմնարկության կանոնադրական խնդիրներին, տեխնիկակազմակերպչական կառուցվածքին և տնտեսական-արտադրական գործունեությանը.
2. կիմանա հիմնարկության կողմից արտադրվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների բնույթի, տեսականու և ծավալների մասին.
3. ծանոթ կլինի հիմնարկության արտաքին կապերին և տեղեկատվական հոսքերին, հիմնարկությունում տնտեսական գործունեության վերլուծության գծով կազմակերպվող աշխատանքներին, ինֆորմացիայի աղբյուրներին և հիմնական փաստաթղթերին.
4. կունենա անհրաժեշտ գիտելիքներ հիմնարկության փաստաթղթավորման, փաստաթղթաշրջանառության և հաշվետվական համակարգերի վերաբերյալ:

Պետական մասնագիտական քննություն (4 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

5.5. «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտություն

Պետական մասնագիտական քննություն (4 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

5.6. «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտություն

ՌԻսումնական (ճանաչողական) պրակտիկա (2 կրեդիտ)

2 շաբաթ տևողությամբ, 4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

ՌԻսումնական պրակտիկայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներին, նրանց ձևավորման գործընթացին, պահպանվող օբյեկտներին, պահպանության և գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, ՀՀ-ում գործող դենդրոպարկերին և անտառապարկին, դրանց տեղական և ներմուծված բուսական ռեսուրսներին, դրանցում իրականացվող գործընթացներին, պահպանությանը և գիտահետազոտական աշխատանքներին:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքները, նրանց ձևավորման գործընթացը, պահպանվող օբյեկտները,
2. կծանոթանա ՀՀ-ում գործող դենդրոպարկերին և անտառապարկին, դրանց բուսական ռեսուրսներին, դրանցում իրականացվող պահպանությանը և գիտահետազոտական աշխատանքներին:

Արտադրական պրակտիկա (2 կրեդիտ)

2 շաբաթ տևողությամբ, 8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Արտադրական պրակտիկայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շրջակա միջավայրի երեք ոլորտներում (օդ, ջուր, հող) անցկացվող մոնիթորինգային ծրագրերի և չափումների հետ: Կատարել տվյալների համակարգչային մշակում և վերլուծություն, ծանոթացնել ծրագրերի հետ:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էկոլոգիական գործնական խնդիրների հիմնական լուծումները,
2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները մարդկային գործունեության տարբեր ոլորտներում հարցերի լուծման համար,
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Պետական մասնագիտական քննություն (4 կրեդիտ)
10-րդ կիսամյակ, քննություն

Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)
10-րդ կիսամյակ, քննություն

**ԵՊՀ Իջանի մասնաճյուղի ուսումնական օրացույցը
2010 / 2011 ուսումնական տարի**

Առաջին կիսամյակ

10 հունվարի–30 ապրիլի 2010թ.	
Ուսուցման սկիզբը	10 հունվարի
1-ին փուլի ընթացիկ ստուգումներ	07–19 փետրվարի
1-ին փուլի ընթացիկ քննություններ	24 հունվարի–05 փետրվարի
2-րդ փուլի ընթացիկ ստուգումներ	14–26 մարտի
2-րդ փուլի ընթացիկ քննություններ	07–19 մարտի
Ուսուցման ավարտը	05 փետրվարի
Քննաշրջան	29 մարտի–24 ապրիլի

Երկրորդ կիսամյակ

01 հունիսի – 18 սեպտեմբերի 2011թ.	
Ուսուցման սկիզբը	01 հունիսի
1-ին փուլի ընթացիկ ստուգումներ	04–09 հուլիսի
1-ին փուլի ընթացիկ քննություններ	28 հունիսի–09 հուլիսի
2-րդ փուլի ընթացիկ ստուգումներ	15–20 օգոստոսի
2-րդ փուլի ընթացիկ քննություններ	08–20 օգոստոսի
Ուսուցման ավարտը	28 հունիսի
Քննաշրջան	22 օգոստոսի –17 սեպտեմբերի
Ամփոփիչ մասնագիտական քննություն և ավարտական աշխատանքի պաշտպանություն	25 ապրիլի–31 մայիսի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԲԱԺԻՆ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ	5
1. Ընդհանուր դրույթներ	6
2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը	6
2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները	6
2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները	8
2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը	9
3. Դասընթացները և կրթական մոդուլները	10
4. Կրեդիտների հատկացումը	10
5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները	11
5.1. Բակալավրի ծրագիր	11
6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը	11
6.1. Համակարգի հիմնադրույթները	11
6.2. Գնահատման մեթոդաբանությունը	12
6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը	15
6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը	16
6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը	16
6.6. Ուսման առաջադիմությունը	18
7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը	18
8. Դասընթացների տեղեկագիրքը	20
9. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը	21
9.1. Բակալավրի ծրագիր	21
10. Կրեդիտների փոխանցումը	22
11. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը	22
12. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները	23
13. Եզրափակիչ դրույթներ	24
Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր	25
ԲԱԺԻՆ II. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	28
Մաս I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	29
1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը	30
2. Ծրագրի բովանդակությունը	32
2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս	32
2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս	37
2.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս	40
2.4. Կրթական այլ մոդուլներ և եզրափակիչ ատեստավորում	49
Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ	51
1. Տեղեկագրքի նպատակը	52
2. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ	53
2.1. Պարտադիր դասընթացներ	53
2.2. Կամրնտրական դասընթացներ	64
3. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ	68

3.1. Պարտադիր դասընթացներ.....	68
3.2. Կամընտրական դասընթացներ	71
4. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ.....	73
4.1. «Պատմություն» մասնագիտություն	73
4.2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն	116
4.3. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն	153
4.4. «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտություն.....	188
4.5. «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտություն	221
4.6. «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտություն	258
5. Կրթական այլ մոդուլներ	291
5.1. «Պատմություն» մասնագիտություն	291
5.2. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն	293
5.3. «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն	294
5.4. «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտություն.....	295
5.5. «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտություն	296
5.6. «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտություն.....	296
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական օրացույցը	298